ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

# *ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ*

# ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

ԻՋԵՎԱՆ 2015

# Ծրագրի մասնագիրը (սպեցիֆիկացիան)

| | |
|---|---|
| 1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը | Հոգեբանություն<br>030300 |
| 2. Բուհը | Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ |
| 3. Ծրագիրը հավատարմագրված է | – |
| 4. Շնորհվող որակավորումը | Բակալավրի աստիճան |
| 5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին | 2015/16 |
| 6. Ուսումնառության լեզուն | Հայերեն |
| 7. Ուսուցման ձևը | Առկա / Հեռակա |

**8. Ծրագրի ընդունելության չափանիշները**

Ծրագրի դիմորդը պետք է ունենա միջնակարգ, նախնական մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթության վկայական:

Ընդունելությունը կատարվում է ըստ ՀՀ կառավարության հաստատած Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի:

**9. Ծրագրի նպատակները**

**Ծրագիրը նպատակ ունի նախապատրաստել հոգեբան-մասնագետներ, ովքեր**

- **կունենան հիմնարար և համակարգված գիտելիք հոգեբանության ֆունդամենտալ և կիրառական բնագավառներից,**
- **ունակ կլինեն շարունակելու կրթությունը՝ մասնագիտանալու հոգեբանության որևէ բնագավառով,**
- **կկարողանան ներգրավվել հոգեբանական հիմնարար գիտելիքներ և հմտություններ պահանջող աշխատանքում:**

**10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները**

| **Ա. Մասնագիտականգիտելիք և իմացություն** | **Դասավանդման/ուսումնառության մեթոդները** |
|---|---|
| Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողը.<br>Ա1. Կունենա հիմնարար գիտելիք հոգեբանության՝որպես գիտության առարկայի, խնդիրների և հոգեբանական գիտելիքի կիրառման հնարավորությունների մասին | Ուսանողները ձեռք են բերում Ա1-Ա8կետերում նշված գիտելիքը և իմացությունը հետևյալ մեթոդներով.<br>▪ դասախոսություն<br>▪ սեմինար<br>▪ ռեֆերատ/էսսե |

| | |
|---|---|
| Ա2. Կիմանա հոգեբանության մեթոդաբանությունը, ֆունդամենտալ և կիրառական բնագավառները և կապը այլ գիտությունների հետ<br>Ա3. Կիմանա հոգեբանության ձևավորման պատմությունը, զարգացման արդի միտումները<br>Ա4. Կիմանա հոգեկանի զարգացման առանձնահատկություններն օնտոգենեզում և ֆիլոգենեզում, հոգեկան գործունեության բնագիտական հիմքերը<br>Ա5. Կունենա գիտելիք հոգեբանական հետազոտություն իրականացնելու, մեթոդների և արդյունքների վերլուծության մասին<br>Ա6. Կիմանա հոգեկան գործընթացների ընդհանուր օրինաչափությունները և դրանց անհատական առանձնահատկությունները<br>Ա7. Կունենա հիմնարար գիտելիքներ տարիքային և սոցիալական հոգեբանությունից, ինչպես նաև այլ կիրառական բնագավառներից<br>Ա8. Կիմանա հոգեբանի գործունեության էթիկական նորմերի, պահանջներին տարբեր բնագավառներում աշխատանքի առանձնահատկությունների մասին | ▪ անհատական և խմբային առաջադրանքներ<br><br>**Գնահատման մեթոդները**<br>Ուսանողների Ա1-Ա8 գիտելիքները և իմացությունը գնահատվում է հետևյալձևերով.<br><br>▪ առաջադրանքների ստուգումներ<br>▪ թեստային առաջադրանք<br>▪ ընթացիկ և բանավոր քննություններ<br>▪ կուրսային և ավարտական աշխատանքի պաշտպանություն |
| **Բ. Գործնական մասնագիտական կարողություններ**<br>Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.<br>Բ1. վերլուծել առանցքային հոգեբանական տեսությունները, գնահատել դրանց առավելություններն ու սահմանափակումները<br>Բ2. մեկնաբանել և բացատրել վարքի դրսևորման առանձնահատկություններ և հետազոտության արդյունքներ՝ հիմնվելով հոգեբանական | **Դասավանդման/ուսումնառության մեթոդները**<br>Ուսանողները ձեռք են բերում Բ1-Բ7 կարողությունները հետևյալ մեթոդներով.<br>▪ դասախոսություն<br>▪ սեմինար<br>▪ գործնական պարապմունք<br>▪ ռեֆերատ/էսսե<br>▪ անհատական և խմբային առաջադրանքներ<br>▪ արտադրական և մանկավարժական պրակտիկա<br><br>**Գնահատման մեթոդները**<br>Ուսանողների Բ1-Բ7 գործնական կարողու- |

| | |
|---|---|
| տեսությունների ու հայեցակարգերի վրա<br>Բ3. վերլուծել հոգեկան տարբեր գործընթացներ, անհատական առանձնահատկություններ, վարքի ձևեր տարբեր գործոնների (կենսաբանական և սոցիալական) ազդեցությամբ<br>Բ4. կիրառել հետազոտության իրականացմանը համապատասխան մեթոդներ, վերլուծել արդյունքները և մեկնաբանել<br>Բ5. սահմանել հոգեբանական ուսումնասիրության հիմնախնդիր, ձևակերպել նպատակներ և իրականացման մեթոդներ<br>Բ6. հոգեբանական պատշաճ գրագիտությամբ ձևավորել գրավոր և բանավոր խոսքը<br>Բ7. տարբերակել հոգեբանի գործառույթները այլ մասնագետների հետ համատեղ աշխատանքում | թյունները գնահատվում ենհետևյալ ձևերով.<br>▪ առաջադրանքների ստուգումներ<br>▪ թեստային առաջադրանք<br>▪ ընթացիկ և բանավոր քննություններ<br>▪ կուրսային և ավարտական աշխատանքի պաշտպանություն |
| **Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ**<br>Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.<br>Գ1. օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (գրադարաններ, ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ)<br>Գ2. օգտվել համակարգչային ծրագրերից (Word, Excel, Power Point)<br>Գ3. արդյունավետորեն պլանավորել ժամանակն ու այլ ռեսուրսները.<br>Գ4. պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր.<br>Գ5. պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը: | **Դասավանդման/ուսումնառության մեթոդները**<br>Ուսանողները ձեռք են բերում Գ1-Գ5 ընդհանրական կարողությունները հետևյալ մեթոդներով.<br>▪ բանավոր ներկայացումներ<br>▪ գործնական պարապմունք<br>▪ ռեֆերատ/էսսե<br>▪ անհատական և խմբային առաջադրանքներ<br><br>**Գնահատման մեթոդները**<br>Ուսանողների Գ1-Գ5 ընդհանրական կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով.<br>▪ առաջադրանքների ստուգումներ<br>▪ կուրսային և ավարտական աշխատանքի պաշտպանություն |

| | |
|---|---|
| Գ6. արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում<br>Գ7. տիրապետել ընդհանուր զարգացածություն և լայն մտահորիզոն ապահովող տեղեկություններին: | |

| 11. Ծրագրի կառուցվածքը |
|---|
| 11.1. Ծրագրի ընդհանուր կառուցվածքի նկարագրությունը |

Բակալավրի ծրագիրը բաղկացած է 5 հիմնական կրթամասերից՝ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (36 կրեդիտ աշխատածավալով), մաթեմատիկական և բնագիտական (10 կրեդիտ աշխատածավալով),ընդհանուր մասնագիտական (160 կրեդիտ աշխատածավալով) և հատուկ մասնագիտական դասընթացներ (6 կրեդիտ աշխատածավալով), ինչպես նաև այլ կրթական մոդուլներ(28 կրեդիտ աշխատածավալով):

1. ***Ընդհանուրհումանիտարևսոցիալ-տնտեսագիտականկրթամաս***

*Պարտադիրդասընթացներ(20կրեդիտ)*

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մոդուլ դասընթացներ, որոնք նպատակաուղղված են համալսարանական կրթության ընդհանուր տեսական հենքի ձևավորմանը:

*Կամընտրականդասընթացներ(16կրեդիտ)*

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մոդուլ դասընթացներ,որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երկուսը:

2. ***Ընդհանուրմաթեմատիկականևբնագիտականկրթամաս***

*Պարտադիրդասընթացներ (8 կրեդիտ)*

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մոդուլ դասընթացներ, որոնք նպատակաուղղված են ընդհանուր մաթեմատական և բնագիտական գիտելիքների մասնագիտական հենքի ձևավորմանը:

*Կամընտրական դասընթացներ (2 կրեդիտ)*

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մոդուլ դասընթացներ,որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու մեկը:

3. ***Ընդհանուր մասնագիտական կրթամաս*** *(160կրեդիտ)*

Ապահովում են մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը:

4. ***Հատուկ մասնագիտական կրթամաս*** *(6կրեդիտ)*

Ապահովում է տվյալ մասնագիտությամբ անհրաժեշտ գիտելիքների և կարողու թյունների ձեռքբերումը

| | |
|---|---|
| 5. ***Կրթական այլ մոդուլներ***<br>*Կուրսային աշխատանք (4 կրեդիտ)*<br>Ծրագրի այս հատվածում նախատեսվում է 2-ական կրեդիտ աշխատածավալով 2 կուրսային աշխատանքիկատարում:<br>*Արտադրական պրակտիկա (4 կրեդիտ)*<br>Նպատակն է ուսանողներին ծանոթացնել էքսպերիմենտալ հետազոտության կատար-ման հմտություններին, ծանոթացնել էքսպերիմենտալ աշխատանքի իրականացման սկզբունքներին և դրանց ներկայացվող պահանջներին:<br>*Արտադրական (մանկավարժական) պրակտիկա (4կրեդիտ)*<br>Նախատեսում է «հոգեբանություն» առարկայի դասավանդում դպրոցում, որի նպատակն է բակալավրերի մանկավարժական փորձի ձեռքբերումը:<br>*Ամփոփիչ ատեստավորում(4 կրեդիտ)*<br>*Ավարտական աշխատանք(12կրեդիտ)*<br>Կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որի նպատակն է ամփոփ հետազոտություն ներկայացնել բակակալավրի ավարտական աշխատանքի թեմայի շրջանակում: |
| |

| 11.2. Ուստարիներ և ուսումնական մոդուլներ | | |
|---|---|---|
| *1-ին ուստարի /1-2 կիսամյակներ/* | | |
| ՊԱՐՏԱԴԻՐ | ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ | ԱՌԱՋԱԴԻՄՈՒ-ԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ |
| ***Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս***<br>▪ 0302/ B01.Հայոց լեզու և գրականություն-1 (2կրեդիտ)<br>▪ 0305/ B02. Ռուսաց լեզու -1 (4կրեդիտ)<br>▪ 0304/ B03.Հայոց պատմության հիմնահարցեր-1 (2 կրեդիտ)<br>▪ 0001/ B04. Ֆիզդաստիարակություն (0 կրեդիտ)<br>▪ 0001/ B05. Ֆիզդաստիարակություն (0 կրեդիտ)<br>▪ 0302/ B06.Հայոց լեզու և գրականություն -2(2կրեդիտ)<br>▪ 0305/ B07. Ռուսաց լեզու -2 (4կրեդիտ)<br>▪ 0304/ B08.Հայոց պատմության հիմնահարցեր-2 (2 կրեդիտ)<br>▪ 0303/ B09Էթիկա և վարվեցողության հիմունքներ(0 կրեդիտ)<br>**Մաթեմատիկական և բնագիտական կրթամաս**<br>▪ 0104/ B01. Համակարգչից օգտվելու հմտություններ (2 կրեդիտ)<br>▪ 0105/ B02. Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ (2 կրեդիտ)<br>***Ընդհանուր մասնագիտական կրթամաս***<br>▪ 0303/B01ԿՆՀ մորֆոլոգիա և ԲՆԳ ֆիզիոլոգիա(4 կրեդիտ)<br>▪ 0303/B02Մասնագիտության ներածություն(2 կրեդիտ)<br>▪ 0303/B03Ընդհանուր հոգեբանություն-1 (6 կրեդիտ) | ▪ 0305/ B15. Անգլերեն լեզու-1 (4 կրեդիտ)<br>▪ 0305/ B15. Ֆրանսերեն լեզու-1 (4 կրեդիտ)<br>▪ 0305/B16. Անգլերեն լեզու-2 (4 կրեդիտ)<br>▪ 0305/ B16. Ֆրանսերեն լեզու-2 (4 կրեդիտ)<br><br>▪ 0105/B04. Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ (2 կրեդիտ)<br>▪ 0105/B04Մաթեմատիկայի հիմունքներ (2 կրեդիտ) | Առնվազն 60 կրեդիտի կուտակում: |

| | | |
|---|---|---|
| ▪ 0303/B04Հոգեկան գործընթացների պրակտիկում - 1(2 կրեդիտ)<br>▪ 0303/B05Մարդաբանություն և համեմատական հոգեբանություն (4 կրեդիտ)<br>▪ 0303/B06Հոգեկան գործընթացների պրակտիկում – 2 (2 կրեդիտ)<br>▪ 0303/B07Ընդհանուր հոգեբանություն-2 (6 կրեդիտ)<br>▪ 0303/ B08 Տեսական մանկավարժություն (4 կրեդիտ) | | |

| Ուստարիներ և ուսումնական մոդուլներ | | |
|---|---|---|
| *2-րդ ուստարի /3-4 կիսամյակներ/* | | |
| ՊԱՐՏԱԴԻՐ | ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ | ԱՌԱՋԱԴԻՄՈՒ-ԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ |
| ***Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս***<br>▪ 0304/ B11. Փիլիսոփայության հիմունքներ (4 կրեդիտ)<br>▪ 0001/ B10. Ֆիզդաստիարակություն (0 կրեդիտ)<br>▪ 0001/ B12. Ֆիզդաստիարակություն (0 կրեդիտ) | ***Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս***<br>▪ 0305/ B17. Անգլերեն լեզու-3 (4 կրեդիտ)<br>▪ 0305/ B17. Ռուսաց լեզու-3 (4կրեդիտ)<br>▪ 0305/B17. Ֆրանսերեն լեզու-3 (4 կրեդիտ)<br>▪ 0201/ B18.Տնտեսագիտություն (2 կրեդիտ)<br>▪ 0304/ B18.Քաղաքագիտություն (2 կրեդիտ)<br>▪ 0304/ B18.Իրավագիտություն (2 կրեդիտ)<br>▪ 0202/ B19.Մշակութաբանություն (2 կրեդիտ)<br>▪ 0304/ B19.Կրոնների պատմություն (2 կրեդիտ) | Առնվազն 60 կրեդիտի կուտակում: |

| | | |
|---|---|---|
| ***Ընդհանուր մասնագիտական կրթամաս***<br>▪ 0303/B09Հոգեբանության պատմություն (4 կրեդիտ)<br>▪ 0303/B10Հոգեֆիզիոլոգիա (6 կրեդիտ)<br>▪ 0303/B11.Անձի հոգեբանություն(4 կրեդիտ)<br>▪ 0303/B12. Դիֆերենցիալ հոգեբանություն և պրակտիկում(6 կրեդիտ)<br>▪ 0303/B13. Ընտանիքի հոգեբանության հիմնահարցեր (4 կրեդիտ)<br>▪ 0303/B14. Անձի տեսություններ (4 կրեդիտ)<br>▪ 0303/ B15. Հուզակամային ոլորտի հոգեբանություն և պրակտիկում(6 կրեդիտ)<br>▪ 0303/B16Էթնոհոգեբանություն(4 կրեդիտ)<br>▪ 0303/ B17Փորձարարական հոգեբանություն(6 կրեդիտ)<br>▪<br><br>***Հատուկ մասնագիտական կրթամաս***<br>▪ 0105/B40.Մաթեմատիկական մեթոդները հոգեբանության մեջ(2 կրեդիտ)<br>▪ 0303/B40.Քաղաքական գործընթացների հոգեբանություն (2 կրեդիտ)<br>***Կրթական այլ մոդուլներ***<br>*Կուրսային աշխատանք-1*(2 կրեդիտ) | | |

| Ուստարիներ նուսումնական մոդուլներ | | |
|---|---|---|
| *3-րդ ուստարի /5-6կիսամյակներ/* | | |
| ՊԱՐՏԱԴԻՐ | ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ | ԱՌԱՋԱԴԻՄՈՒ-<br>ԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ |
| *Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս*<br>▪ 0001/ B03.Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն (4 կրեդիտ)<br>*Ընդհանուր մասնագիտական կրթամաս*<br>▪ 0303/B18 Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի հիմունքներ (2 կրեդիտ)<br>▪ 0303/B19Սոցիալական հոգեբանություն (7 կրեդիտ)<br>▪ 0303/B20Հոգեդիագնոստիկա (4 կրեդիտ)<br>▪ 0303/B21. Տարիքային հոգեբանություն(5 կրեդիտ)<br>0303/B22.Կրթության հոգեբանություն (2 կրեդիտ)<br>▪ 0304/ B23 Տրամաբանություն(2 կրեդիտ)<br>▪ 0303/ B24 Մանկավարժական հոգեբանություն(4 կրեդիտ)<br>▪ 0303/B25.Բժշկական հոգեբանություն (6 կրեդիտ)<br>▪ 0303/B26.Կազմակերպչական հոգեբանություն (6 կրեդիտ)<br>▪ 0303/B27. Սոցիալական փոխներգործության հոգեբանություն (4 կրեդիտ)<br>▪ 0303/B28Արտակարգ իրավիճակների հոգեբանություն (2 կրեդիտ)<br>▪ 0303/ B29Այցելուակենտրոն թերապիա(4 կրեդիտ)<br><br>*Հատուկ մասնագիտական կրթամաս*<br>0303/B41 Սպորտի և առողջ ապրելակերպի հոգեբանություն(2 | | Առնվազն 60 կրեդիտի կուտակում: |

| | | |
|---|---|---|
| կրեդիտ)<br>0303/B41.Սոցիալական ճանաչողության հոգեբանություն (2 կրեդիտ)<br>0303/B41.Մանկան հոգեբանություն (2 կրեդիտ)<br><br>*Կրթական այլ մոդուլներ*<br>Կուրսային աշխատանք-2(2 կրեդիտ)<br>Արտադրական պրակտիկա (4կրեդիտ) | | |

| Ուստարիներ նուսումնական մոդուլներ | | |
|---|---|---|
| *4-րդ ուստարի /7-8կիսամյակներ/* | | |
| ՊԱՐՏԱԴԻՐ | ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ | ԱՌԱՋԱԴԻՄՈՒ-ԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ |
| ***Ընդհանուր մասնագիտական կրթամաս***<br>▪ 0303/B30 Հոգեբանության դասավանդման մեթոդիկա (2 կրեդիտ)<br>▪ 0303/B31. Կոնֆլիկտի հոգեբանություն (4 կրեդիտ)<br>▪ 0303/B32. Իրավաբանական հոգեբանություն և փորձաքննություն (6 կրեդիտ)<br>▪ 0303/B33. Ստեղծագործության հոգեբանություն (6 կրեդիտ)<br>▪ 0303/B34.Ինքնակարգավորման հիմունքներ (6 կրեդիտ)<br>▪ 0303/ B35Հոգեբանական խորհրդատվություն(3 կրեդիտ)<br>▪ 0303/B36.Իմիջի հոգեբանության հիմնահարցեր (2 կրեդիտ)<br>▪ 0303/B37. Անձնային խանգարումների հոգեբանություն (3 կրեդիտ)<br>▪ 0303/B38. Անալիտիկ հոգեբանություն (3 կրեդիտ)<br>▪ 0303/B39Հոգեգենետիկայի հիմունքներ (3 կրեդիտ)<br>▪ | | Առնվազն 240 կրեդիտի կուտակում<br><br>Մինչև ծրագրի ամփոփիչ ատեստավորումն ընկած ժամանակահատվածը ուսանողի ՄՈԳ-ը պետք է կազմի առնվազն 12,00 |

| | | |
|---|---|---|
| ***Հատուկ մասնագիտական կրթամաս***<br>0303/B42.Միջմշակութային հոգեբանություն (2 կրեդիտ)<br>0303/B42. Հոգեբանական ծառայության կազմակերպումը դպրոցում (2 կրեդիտ)<br>0303/B42.Սեռի հոգեբանություն(2 կրեդիտ)<br><br>***Կրթական այլ մոդուլներ***<br>Արտադրական (մանկավարժական) պրակտիկա (4 կրեդիտ)<br>Ամփոփիչ ատեստավորում(4 կրեդիտ)<br>Ավարտական աշխատանք<br>(12 կրեդիտ) | | |

| 11. 2. Պրակտիկայի հնարավորությունները և պայմանները |
|---|
| Պրակտիկանկազմակերպվումէզիտականղեկավարիհետհամատեղկազմվածնհաստատվածծր ագրով:Կարողէիրականացվել.<br>• հոգեբանականկենտրոններում,<br>• տարբեր պրոֆիլի բուժհաստատություններում,<br>• մանկապարտեզներում,<br>• դպրոցում,<br>• կառավարական և ոչ կառավարական կազմակերպություններ,<br>• արտադրական ձեռնարկություններում և բիզնես ոլորտում: |

| 11.3. Ավարտական ատեստավորումներ | |
|---|---|
| Ուստարի | Անվանումը |
| 4-րդ ուստարի | Բակալավրի ավարտական աշխատանքի պաշտպանություն<br>Ամփոփիչ ատեստավորում |

| 12. Ուսումնական պլանի քարտեզը |
|---|
| Կցված է: |
| 13. Տեղեկատվություն գնահատման կարգի վերաբերյալ |
| Տե՛ս «ԵՊՀ ԻՄ կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք», Երևան, 2011 թ.,էջ 14-20: |

**14. Ապագա կարիերայի հնարավորությունները**

«Հոգեբանություն» բակալավրի ծրագրիշրջանավարտներըհնարավորությունկունենան աշխատելուորպես՝

- հոգեբան,
- հոգեբանության ուսուցիչ:

Շրջանավարտները կարող են աշխատել նաև հետևյալ հաստատություններում.

- հիմնական և ավագ դպրոցներում,
- հատուկ ծրագրով ուսուցմամբ կրթական հաստատություններում,
- հոգեբանական ծառայության կենտրոններում,
- ըստ պահանջի տարբեր կառույցներում:

ԾրագրիշրջանավարտներըկարողենշարունակելիրենցուսումըԵՊՀՓիլիսոփայությանևհոգեբանությանֆակուլտետիմագիստրատուրայում:

**15. Ուսումնառության օժանդակության ռեսուրսներ և ձևեր (եթե կան)**

Ուսումնառության գործընթացում օգտագործվում ենգրադարան և գրականության էլեկտրոնային ռեսուրսներ, լաբորատորիաներ, տեխնիկական ժամանակակից միջոցներ:

| **16. Համապատասխան կրթական չափորոշիչները կամ առարկայական կողմնորոշիչ(ներ)ը** | • Պետական կրթական չափորոշիչ «հոգեբանություն» մասնագիտությամբ |
| --- | --- |

**17. Ծրագրային այլ կողմնորոշիչներ**

-------------------

**18. Լրացուցիչ տեղեկատվություն**

---------------------

Պետք է նկատի ունենալ, որ ծրագրի մասնագիրը տալիս է ծրագրի հիմնական բնութագրերի համառոտ նկարագրությունը և այն կրթական վերջնարդյունքները, որոնք ենթադրվում է, որ ձեռք կբերի միջին բնութագրական ուսանողը, եթե նա լիարժեք կերպով օգտվի ծրագրի ընձեռած ուսումնառության հնարավորություններից: Ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն կարելի է գտնել ԵՊՀ դասընթացների տեղեկագրքում:

## Ծրագրի կրթական վերջնարդյունքները

| Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն | | Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ | |
|---|---|---|---|
| Ա1 | հոգեբանության՝ որպեսգիտությանառարկայի, խնդիրներիևհոգեբանականգիտելիքիկիրառմանհնարավո րություններիմասին | Գ1 | տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (գրադարաններ, ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ)օգտվելու կարողություն |
| Ա2 | հոգեբանության մեթոդաբանության, ֆունդամենտալ և կիրառական բնագավառների և այլ գիտությունների հետ կապի մասին | Գ2 | համակարգչային ծրագրերից (Word, Excel, Power Point)օգտվելու կարողություն |
| Ա3 | հոգեբանության ձևավորման պատմության, զարգացման արդի միտումների մասին | Գ3 | ժամանակն ու այլ ռեսուրսները արդյունավետորեն պլանավորելու կարողություն |
| Ա4 | օնտոգենեզում ևֆիլոգենեզում հոգեկանիզարգացմանառանձնահատկությունների, հոգեկանգործունեությանբնագիտականհիմքերի մասին | Գ4 | զեկուցումներ պատրաստելու, հետազոտությունների արդյունքները ներկայացնելու, գիտական բանավեճեր վարելու կարողություն |
| Ա5 | հոգեբանական հետազոտություն իրականացնելու, մեթոդների և արդյունքների վերլուծության մասին | Գ5 | մասնագիտական էթիկայի նորմերըպահպանելու կարողություն |
| Ա6 | հոգեկան գործընթացների ընդհանուր օրինաչափությունների և դրանց անհատական առանձնահատկությունների մասին | Գ6 | անհատական և խմբային նախագծերում արդյունավետորեն շփվելու և համագործակցելու կարողություն: |
| Ա7 | տարիքային և սոցիալական հոգեբանությունից, ինչպես նաև այլ կիրառական բնագավառներից | Գ7 | ընդհանուր զարգացածություն և լայն մտահորիզոն ապահովող տեղեկություններին տիրապետելու կարողություն: |
| Ա8 | հոգեբանի գործունեության էթիկական նորմերի, պահանջների և տարբեր բնագավառներում աշխատանքի առանձնահատկությունների մասին | | |
| Բ. Գործնական մասնագիտական կարողություններ | | | |
| Բ1 | Հոգեբանական առանցքային տեսությունները, դրանց առավելություններն ու սահմանափակումները վերլուծելու և գնահատելու կարողություն | Բ4 | հետազոտության իրականացմանը համապատասխան մեթոդներ կիրառելու, արդյունքները վերլուծելու և մեկնաբանելու կարողություն |
| Բ2 | վարքի դրսևորման առանձնահատկությունները և | Բ5 | հոգեբանական ուսումնասիրության հիմնախնդիրը սահմանելու, |

| | | | |
|---|---|---|---|
| | հետազոտության արդյունքները մեկնաբանելու և բացատրելու կարողությու՝ հիմնվելով հոգեբանական տեսությունների ու հայեցակարգերի վրա | | նպատակները և իրականացման մեթոդները ձևակերպելու կարողություն |
| Բ3 | հոգեկան տարբեր գործընթացների, անհատական առանձնահատկությունների, տարբեր գործոնների (կենսաբանական և սոցիալական) ազդեցությամբ վարքի ձևերի վերլուծության կարողություն | Բ6 | գրավոր և բանավոր խոսքը հոգեբանական պատշաճ գրագիտությամբ ձևավորելու կարողություն |
| Բ7 | այլ մասնագետների հետ համատեղ աշխատանքում հոգեբանի գործառույթները տարբերակելու կարողություն | | |

| Ծրագրի կրթական վերջնարդյունքները | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ա1 | Ա2 | Ա3 | Ա4 | Ա5 | Ա6 | Ա7 | Ա8 | Բ1 | Բ2 | Բ3 | Բ4 | Բ5 | Բ6 | Բ7 | Գ1 | Գ2 | Գ3 | Գ4 | Գ5 | Գ6 | Գ7 |
| Ուստարին, որի ավարտին կրթական վերջնարդյունքը ձեռք է բերվում բոլոր ուսանողների կողմից: | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1 | 1 | 2 | 1 | 3 | 2 | 3 | 4 | 2 | 3 | 2 | 3 | 4 | 4 | 4 | 1 | 1 | 4 | 3 | 4 | 4 | 2 |

| Ուսումնականմոդուլիանվանումը | Մոդուլի կրեդիտը | Ծրագրիկրթականվերջնարդյունքները | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ա1 | Ա2 | Ա3 | Ա4 | Ա5 | Ա6 | Ա7 | Ա8 | Բ1 | Բ2 | Բ3 | Բ4 | Բ5 | Բ6 | Բ7 | Գ1 | Գ2 | Գ3 | Գ4 | Գ5 | Գ6 | Գ7 |
| Հայոց լեզու և գրականություն-1 | **2** | | | | | | | | | | | | | | X | | X | | | X | | | X |
| Հայոց լեզու և գրականություն-2 | **2** | | | | | | | | | | | | | | X | | X | | | X | | | X |
| Ռուսաց Լեզու-1 | **4** | | | | | | | | | | | | | | X | | X | | | X | | | |
| Ռուսաց Լեզու-2 | **4** | | | | | | | | | | | | | | X | | X | | | X | | | |
| Օտար լեզու (1-3)/ֆրանսերեն,անգլերեն/ | **4+4+(4)** | | | | | | | | | | | | | | X | | X | | | X | | | X |
| Յայոց պատմության հիմնահարցեր- 1 | **2** | | | | | | | | | | | | | | | | | | | | | | X |
| Յայոց պատմության հիմնահարցեր- 2 | **2** | | | | | | | | | | | | | | | | | | | | | | X |
| Փիլիսոփայության հիմունքներ | **4** | | | | | | | | | | | | | | | | | | | X | | | X |
| Ֆիզդաստիարակություն | **0** | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Տնտեսագիտություն | | | | | | | | X | | | | | | | | | | | | | | | X |
| Քաղաքագիտություն | **2** | | | | | | | X | | | | | | | | | | | | | | | X |
| Իրավագիտություն | | | | | | | | X | | | | | | | | | | | | | | | X |
| Մշակութաբանություն | | | | | | | | X | | | | | | | | | | | | X | | | X |
| Կրոնների պատմություն | **2** | | | | | | | | | | | | | | | | | | | | | | X |
| Համակարգչից օգտվելու հմտություններ | **2** | | | | | | | X | | | | | | | | | X | | | X | | | |
| Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ | **2** | | | | | | | X | | | | | | | | | | | | | | | X |
| Քաղաքացիական պաշտպանություն | **2** | | | | | | | X | | | | | | | | | | | | | | | X |
| Արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն | **2** | | | | | | | X | | | | | | | | | | | | | | | X |
| Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ | **2** | | | | | | | | | | | | | | | | | | | | | | X |
| Մաթեմատիկայի հիմունքներ | **2** | | | | | | | X | | | | | | | | | | | | | | | X |
| ԿՆՀ մորֆոլոգիա և ԲՆԳ ֆիզիոլոգիա | **4** | | | X | X | | | | | | | | | | | | | | | | | | |
| Մասնագիտության ներածություն | **2** | X | X | | | | | | X | | | | | | | | | X | | | X | | |
| Ընդհանուր հոգեբանություն-1 | **6** | | | | | | X | | | X | | | | | | | | | | | | | |
| Հոգեկան գործընթացներիպրակտիկում – 1 | **2** | | | | | | X | | | | | X | | X | | | | | | | | | |
| Մարդաբանություն և համեմատական հոգեբանություն | **4** | | | | X | | | | | | | | | | | X | | | | | | | |
| Ընդհանուր հոգեբանություն-2 | **6** | | | | | | X | | | X | X | | | | | | | | | | | | |
| Տեսական մանկավարժություն | **4** | | | | | | X | | | X | X | | | | | | | | | | | | |
| Հոգեկան գործընթացներիպրակտիկում – 2 | **2** | | | | | | X | | | | | X | | X | | | | | | | | | |
| Անձի հոգեբանություն | **4** | | | | | | X | | | X | X | X | | | | | | X | | | | | |
| Դիֆերենցիալ հոգեբանություն և պրակտիկում | **6** | | X | X | | | X | | | | X | X | | | | | | | | | | | |
| Անձի տեսություններ | **4** | | X | X | | | | | | X | X | | | X | | | | | | X | | | |
| Այցելուակենտրոն թերապիա | **4** | | | | | | | X | X | | | | | | | X | X | X | | | X | | |
| Տրամաբանություն | **2** | | X | X | X | | | | | | | | | | | | | | | | | | |
| Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի հիմունքներ | **2** | | X | | | X | | X | | X | X | X | | | | | X | | | | X | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հոգեբանության պատմություն | 4 | X | X | | | | | | | X | X | | | X | | | X | | | | X | | |
| Հոգեֆիզիոլոգիա | 6 | | | | | | X | | | | | X | | X | | | | | | | | | |
| Ընտանիքի հոգեբանության հիմնահարցեր | 4 | | X | | | | | X | | | X | X | | | | | X | | | | | | |
| Հուզակամային ոլորտի հոգեբանություն և պրակտիկում | 6 | | X | | | X | | | | | X | | | X | X | | | | X | | | | |
| Էթնոհոգեբանություն | 4 | | X | | | X | | X | | X | X | X | | | | | X | | | | X | | |
| Փորձարարական հոգեբանություն | 6 | | X | | | X | | | | | X | | | | | | | | X | | | | |
| Տարիքային հոգեբանություն | 5 | | | X | X | | X | X | | | X | X | | X | | | | | | | X | | |
| Կրթության հոգեբանություն | 2 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Մանկավարժական հոգեբանություն | 2 | | | | X | | | X | | | X | X | | | | | | | | | | X | |
| Մանկան զարգացման հոգեբանություն | 2 | | X | | | | | X | | | | | | | | X | | | | X | | X | |
| Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի հիմունքներ | 2 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Սոցիալական հոգեբանություն | 7 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Հոգեդիագնոստիկա | 4 | X | X | | | | X | X | X | | X | X | X | | | X | X | | | X | | | |
| Հոգեբանական խորհրդատվություն | 3 | | | | | | | X | X | | | | | | | X | X | X | | | X | | |
| Բժշկական հոգեբանություն | 6 | | X | | | X | | X | | X | X | X | | | | | X | | | | X | | |
| Կազմակերպչական հոգեբանություն | 6 | | | X | | | | | | | | | | | | | | X | | | | | |
| Սոցիալական փոխներգործության հոգեբանություն | 4 | | | | | | | | X | | | X | | | X | | | | | | X | | |
| Արտակարգ իրավիճակների հոգեբանություն | 2 | | | | | X | | X | | X | X | X | | | | | X | | | | X | | |
| Այցելուակենտրոն թերապիա | 4 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Հոգեբանության դասավանդման մեթոդիկա | 2 | | | | | | X | X | X | X | X | X | | | | X | | | | | | | |
| Կոնֆլիկտի հոգեբանություն | 4 | | | | | | | X | X | | X | X | | | X | X | | | | | | | |
| Իրավաբանական հոգեբանություն և փորձաքննություն | 6 | | | | X | | | | | | | | | | | X | | | | | | | |
| Հոգեբանական ծառայությունը դպրոցում | 2 | X | X | | | X | | | X | | X | | | | X | X | | | | X | X | X | |
| Սեռի հոգեբանություն | 2 | | | X | | | | | X | | | X | | | | X | | | | | X | | |
| Իմիջի հոգեբանության հիմունքներ | 2 | | | | | | X | | | X | X | | | | | | | | | | | | |
| Ստեղծագործության հոգեբանություն | 6 | | | | | X | | X | | X | | | | | X | | X | | X | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ինքնակարգավորման հիմունքներ | 6 | | | | | | X | X | | X | | | | | X | | | | | | X | | |
| Անձնային խանգարումների հոգեբանություն | 3 | | X | | | | X | X | X | | X | X | X | | | X | X | | X | X | | | |
| Անալիտիկ հոգեբանություն | 3 | | X | | | | X | X | X | | X | X | X | | | X | X | | X | X | | | |
| Հոգեգենետիկայի հիմունքներ | 3 | | | | X | | | | | | | | | | | X | | | | | | | |
| Մաթեմատիկական մեթոդները հոգեբանության մեջ | 2 | | | | | | | | | | | X | X | | | | | | X | | | | |
| Քաղաքական գործչի հոգեբանություն | 2 | | | | | X | | X | | X | X | X | | | | | X | | | | X | | |
| Սպորտի և առողջապրելակերպի հոգեբանություն | 2 | | | | | | | | | | X | | X | | | | | | | | X | | |
| Սոցիալական ճանաչողության հոգեբանություն | 2 | | | | | X | | X | | X | X | X | | | | | X | | | | X | | |
| Միջմշակութային հոգեբանություն | 2 | | | | | X | | X | | X | X | X | | | | | X | | | | X | | |

# Հոգեբանություն

## ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐԸ

<table>
<tr><td>0305/B02</td><td>Ռուսաց լեզու-1</td><td>4 կրեդիտ</td></tr>
<tr><td>4 ժամ</td><td colspan="2">0/64/0</td></tr>
<tr><td>1-ինկիսամյակ</td><td colspan="2">Ստուգարք</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողի լեզվական գիտելիքները, ապահովել բանավոր և գրավոր խոսքի կառուցման ունակությունները՝ տարբեր լեզվական ոլորտներում հաղորդակցվելու համար:</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.<br>Գիտելիք և իմացություն<br>• Կիմանա ծրագրով նախատեսված քերականական նյութը<br>• Կունենա ծրագրով նախատեսված անհրաժեշտ բառապաշար<br>• Կիմանա ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները<br><br>Ունակ կլինի<br>✓ (բուն մասնագիտական կարողություններ)<br>• կառուցել բանավոր և գրավոր խոսք<br>• վարել երկխոսություն<br>• ընկալել և վերարտադրել կարդացած և ունկնդրած նյութի բովանդակությունը<br>• թարգմանել հայերենից ռուսերեն միջին բարդության տեքստեր:<br>✓ (ընդհանրական կարողություններ)<br>• ընթերցել ռուս դասականների ստեղծագործությունները բնագրով<br>• պատկերացում կազմել ռուսերենի և հայերենի ընդհանրությունների ու տարբերությունների մասին:</td></tr>
<tr><td colspan="3">Համառոտ բովանդակությունը<br>Ռուսերենի հնչյունական համակարգի ընդհանուր բնութագիրը, ձայնավորների և բաղաձայների դասակարգումը, արտասանության և հնչերանգային հիմնական նորմերը: Պատկերացում բառիմաստի մասին, բառային միավորների հարաբերակցության ձևերը: Ձևաբանության</td></tr>
</table>

հիմնական միավորները (բառ, ձևույթ), խոսքի մասերի դասակարգումը և նրանց քերականական կարգերը: Գոյականի հոլովման համակարգը, հոլովների նշանակությունը և գործածությունը: Շարահյուսական միավորները (բառակապակցություն, պարզ նախադասություն), նախադասության գլխավոր անդամները, նախադասության տեսակները ըստ կառուցվածքի (բայական և անվանական ստորոգյալ), նախադասության հարացույցը: Ուղղագրության հիմնական սկզբունքները:

*Գնահատման մեթոդները և չափանիշները*

**Ստուգարքի անցկացման ձևը.**

Կիսամյակի ընթացքում նախատեսված է 2 գրավոր ստուգողական աշխատանք: Յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 20 միավոր: Դրական գնահատականներ ստանալու դեպքում ուսանողը համարվում է ստուգարքը հանձնած:

Ստուգողական աշխատանքների արդյունքներով ստուգարքը չհանձնած ուսանողների համար դասընթացի ավարտին կազմակերպվում է բանավոր հարցում:

*Հիմնական գրականության ցանկը*

1. **Русский язык.** Под общ. ред. Л.М.Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004
2. **Хавронина С.А., Широченская А.И.** Русский язык в упражнениях. М., изд-во «Русский язык», 2005

| | | |
|---|---|---|
| 0305/B07 | Ռուսաց լեզու-2 | 4 կրեդիտ |
| 4 ժամ | 0/64/0 | |
| 2-րդ կիսամյակ | Ստուգարք | |

Դասընթացի նպատակն է ապահովել ուսանողի տիրապետումը ռուսաց լեզվի համակարգին, զարգացնել նրա հաղորդակցական կարողությունները լեզվական տարբեր ոլորտներում:

| |
|---|
| Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.<br>*Գիտելիք և իմացություն*<br>• Կտիրապետի ռուսաց լեզվի քերականական կառուցվածքին<br>• Կիմանա լեզվի կառուցվածքի մակարդակներն ու նրանց միավորները<br>• Կտիրապետի տվյալ մասնագիտության հիմնական տերմիններին:<br><br>*Ունակ կլինի*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• վերարտադրել կարդացած տեքստի բովանդակությունը սեղմ և ընդարձակ<br>• վերլուծել և մեկնաբանել գեղարվեստական և ճանաչողական բնույթի տեքստեր<br>• ինքնուրույն կազմել կապակցված տեքստ ծրագրով նախատեսված թեմատիկայով:<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• Ինքնուրույն կատարել ռուսերենի և այլ ուսումնասիրված լեզուների համակարգերի զուգադրական վերլուծություն: |
| *Համառոտ բովանդակությունը*<br>Ռուսերենի դարձվածները և դարձվածների դասակարգումը, փոխառությունները և նրանց գործածության ոլորտը: Բառի ձևականական կազմը: Հիմնական բառակազմական միջոցները: Բայի քերականական կարգերը, բայի խնդրարությունը, դերբայ և դերբայական դարձված: Միակազմ նախադասություն, միակազմ նախադասության դասակարգումը /զեղչված ենթակայով, անդեմ, անվանական նախադասություններ/: Միակազմ նախադասության սուբյեկտի արտահայտման հոլովական ձևերը: Սուբյեկտիվ եղանակավորության արտահայտման միջոցները /միջանկյալ բառեր, միջանկյալ նախադասություններ/: Ուղղագրության սկզբունքները և կանոնները: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները*<br>Ստուգարքի անցկացման ձևը. |

| |
|---|
| Կիսամյակի ընթացքում նախատեսված է 2 գրավոր ստուգողական աշխատանք: Յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 20 միավոր: Դրական գնահատականներ ստանալու դեպքում ուսանողը համարվում է ստուգարքը հանձնած:<br>Ստուգողական աշխատանքների արդյունքներով ստուգարքը չհանձնած ուսանողների համար դասընթացի ավարտին կազմակերպվում է բանավոր հարցում: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br><br>3. **Русский язык.** Под общ. ред. Л.М.Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004<br>4. **Хавронина С.А., Широченская А.И.** Русский язык в упражнениях. М., изд-во «Русский язык», 2005 |

| | | |
|---|---|---|
| **0305/B17** | **Ռուսաց լեզու-3** | **4 կրեդիտ** |
| **4 ժամ** | **0/64/0** | |
| **3-րդ կիսամյակ** | **Հանրագումարային քննություն** | |
| **Դասընթացի նպատակն է զարգացնել և խորացնել ուսանողի լեզվական գիտելիքները և հաղորդակցական կարողությունները, ապահովել նրա տիրապետումը մասնագիտական լեզվին և օգտվելը մասնագիտական գրականությունից:** | | |
| **Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.**<br>*Գիտելիք և իմացություն*<br>• **Կտիրապետի լեզվի գիտական ոճի ձևաբանական և շարահյուսական միջոցներին**<br>• **Կտիրապետի տվյալ մասնագիտության տերմինաբանությանը**<br>• **Կիմանա թարգմանության տեսության հիմնական խնդիրները**<br>• **Կիմանա ուղղագրության և կետադրության կանոնները:** | | |

| |
|---|
| *Ունակ կլինի*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• ներկայացնել մասնագիտական տեքստի բովանդակությունը սեղմ և ընդարձակ<br>• կազմել մասնագիտական տեքստի պլան, անոտացիա<br>• թարգմանել մասնագիտական տեքստ հայերենից ռուսերեն<br>• ինքնուրույն կազմել կապակցված տեքստ մասնագիտական թեմատիկայով<br><br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• հաղորդակցվել ռուսական մշակույթի ստեղծագործություններին<br>• ինքնուրույն կատարել ռուսերենի և այլ ուսումնասիրված լեզուների համակարգերի զուգադրական վերլուծություն<br>• մասնակցել լեզվական նյութին առնչվող քննարկումներին |
| *Համառոտ բովանդակությունը*<br>Նախադասության տեսակները ըստ կառուցվածքի և հաղորդակցական ուղղվածության, բարդ նախադասություն, բարդ նախադասության դասակարգումը: Պարզ և բարդ նախադասությունների իմաստային համադրությունը (պարագայական իմաստների արտահայտությունը պարզ և բարդ նախադասություններում): Ռուսերենի գործառական ոճերը, լեզվի գիտական ոճը, գիտական կապակցված տեքստի կառուցման միջոցները՝ բառային, ձևաբանական և շարահյուսական: Ռուսերենի կետադրության հիմնական սկզբունքները: Թարգմանության տեսության հիմնական խնդիրները: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները*<br>**Քննության անցկացման ձևը.**<br>Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 20 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց. 1-ին և 2-րդ հարցերը՝ 6-ական միավոր, 3-րդ հարցը /մասնագիտական տեքստի թարգմանություն հայերենից ռուսերեն/՝ 8 միավոր: |

*Հիմնական գրականության ցանկը*


5. **Русский язык.** Под общ. ред. Л.М.Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004
6. **Хавронина С.А., Широченская А.И.** Русский язык в упражнениях. М., изд-во «Русский язык», 2005


<table>
<tr><td>0302/ B01</td><td>Հայոց լեզու և գրականություն-1</td><td>2 կրեդիտ</td></tr>
<tr><td>2 ժամ</td><td colspan="2">8/24/0</td></tr>
<tr><td>I կիսամյակ</td><td colspan="2">Ստուգարք</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացինպատակնէուսուցանելժամանակակիցհայերենիհնչյունական, բառայիննքերականականառանձնահատկությունները, ոճագիտականհիմնականհասկացությունները, նպաստելխոսքիթերություն-ներիվերացմանը, ծանոթացնելհայդասականգրականությաննմուշներին:</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.<br>Գիտելիք և իմացություն<br>1. ժամանակակից հայոց լեզվի հնչյունական և բառային առանձնահատկությունները մասին.<br>2. հայ հեղինակների /5-19-րդ դարեր/ գեղարվեստական մի շարք հայտնի ստեղծագործությունների վերաբերյալ.<br>3. մասնագիտական բառապաշարի, տերմինաբանության մասին<br><br>Ունակ կլինի.<br>✓ (բուն մասնագիտական կարողություններ)<br>կատարելու լեզվական և գրականագիտական վերլուծություններ<br>✓ (ընդհանրական կարողություններ)<br>գրական հայերենով կառուցելու բանավոր և գրավոր խոսք, շարադրելու մասնագիտական տեքստեր</td></tr>
</table>

| |
|---|
| *Համառոտ բովանդակությունը*<br>Պատմական համառոտ ակնարկ հայերենի զարգացման փուլերի մասին: Հայերենի տեղը աշխարհի լեզուների շարքում: Հնչյունաբանություն. հայերենի հնչյունական համակարգը: Շեշտ, վանկ, տողադարձ. հնչյունափոխություն: Հայերենի ուղղագրության սկզբունքները: Բառագիտություն. բառերի ձևաիմաստային խմբերը: Բառապաշար. Դասակարգման սկզբունքները. մասնագիտական բառապաշար. տերմիններ: Հայերենի բառակազմական միջոցները: Հայերենի գործառական ոճերը: 5-րդ դարի հայ պատմագրությունը: Հայ հին և միջնադարյան քնարերգությունը: Գրական երկերի վերլուծություն: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները.*<br>Ստուգարքն անցկացվում է ստուգարքային թեկադրության դրական գնահատականի դեպքում՝ եզրափակիչ բանավոր պատասխանի հիման վրա: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. ԵզեկյանԼ. Կ., Հայոցլեզու /բուհականդասագիրք/, Երևան, 2009:<br>2. ՍուքիասյանԱ. Ժամանակակիցհայոցլեզու /հնչյունաբանություն, բառագիտություն/, Երևան, 1982: |

| | | |
|---|---|---|
| 0304/B03 | Հայոց պատմության հիմնահարցեր -1 | 2 կրեդիտ |
| 2 ժամ | 24/8/0 | |
| I կիսամյակ | Ստուգարք | |
| Դասընթացի նպատակն է ներկայացնելՀայոցպատմությունըհնագույնժամանակներիցմինչևԿիլիկիայիհայկականպետականությանանկումընկածժամանակահատվածը, ծանոթացնելհայոցհնագույն, հինումիջինդարերիպատմությանառանցքայինհիմնախնդիրներին, հայոցպետականությանժամանակափուլերիննհայմշակույթիհիմնահարցերին: | | |
| Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. | | |

| |
|---|
| *Գիտելիք և իմացություն*<br>▪ ընդհանուր պատկերացում Հայոցպատմությանառանցքայիննիմնախնդիրներիվերաբերյալ,<br>▪ հայոց պետականության ժամանակափուլերի առանձնահատկությունների մասին,<br>▪ ազատագրական պայքարի հերոսական էջերի մասին,<br><br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>▪ գնահատել Հայոց պատմության դերը համաշխարհային պատմության հոլովույթում,<br>▪ ինքնուրույն մտածել և անհրաժեշտ դատողություններ անել Հայոց պատմության տարբեր հարցերի վերաբերյալ,<br>▪ անաչառ գնահատական տալ Հայոց պատմության տարբեր հիմնահարցերին և ազգային-պետական գործիչների գործունեությանը,<br><br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>▪ ստեղծագործաբար կիրառել ու զարգացնել ունեցած գիտելիքները,<br>▪ վերլուծել փաստերը և հետևություններ անել,<br>▪ զեկուցումներ պատրաստել ու գիտական բանավեճեր վարել: |
| *Համառոտ բովանդակություն*<br>Հայոց պատմության նշված ժամանակահատվածի սկզբնաղբյուրները և ուսումնասիրությունները: Հայկական լեռնաշխարհը՝ հայերի բնօրրան: Հայ ժողովրդի ծագման հիմնահարցը: Վանի թագավորությունը: Երվանդականների թագավորությունները Ք.ա. 7-3 դդ.: Արտաշեսյանների Հայաստանը Ք.ա. 2-1 դդ.: Մեծ Հայքի Արշակունիների թագավորությունը 1-5-րդ դարի սկիզբ: Քրիստոնեության ընդունումը: Հայաստանը 5-7 դդ.: Արաբական նվաճումները և Հայաստանը: Բագրատունյաց Հայաստանը 9-11-րդ դդ.: Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը օտար նվաճողների դեմ 11-12-րդ դարերում. Զաքարյանների իշխանությունը: Կիլիկիան Հայաստանը 11-14-րդ դդ.: Հայկական |

| |
|---|
| մշակույթը հին և միջին դարերում: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները*<br>▪ Ստուգարքն անց է կացվում բանավոր հարցման ձևով: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br><br>1. Հայ ժողովրդի պատմություն, խմբ. Ս. Տ. Մելիք-Բախշյան, Երևան, 1975:<br>2. Հայ ժողովրդի պատմություն, խմբ. Պ. Հ. Հովհաննիսյան, Երևան, 2006:<br>*3. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1-ին, Երևան 2006:*<br>*4. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 2-րդ, Երևան 2011:* |

| | | |
|---|---|---|
| 0304/ B08 | Հայոց պատմության հիմնահարցեր -2 | 2 կրեդիտ |
| 2 ժամ | 24/8/0 | |
| II կիսամյակ | Հանրագումարային քննություն | |
| Դասընթացի նպատակն է ներկայացնել Հայոց նոր և նորագույն շրջանի պատմության առանցքային հիմնահարցերը, պարզաբանել հայ նոր և նորագույն շրջանի ազգային ազատագրական պայքարի, Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության, հայոց նորագույն պետականության, Սփյուռքի, նոր և նորագույն շրջանի հայ մշակույթի հիմնախնդիրները : | | |
| Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.<br>*Գիտելիք և իմացություն*<br>▪ Հայոց նոր և նորագույն շրջանի ազատագրական պայքարի կարևորագույն դրվագների վերաբերյալ,<br>▪ Հայկական հարցի, հայոց ցեղասպանության և Սփյուռքի առանցքային հիմնախնդիրների վերաբերյալ,<br>▪ 20-րդ դարում Հայոց նորագույն պետականության ձևավորման գործընթացների վերաբերյալ,<br>▪ նոր և նորագույն շրջանի հայ մշակույթի զարգացման օրինաչափությունների և առանձնահատկությունների մասին ,<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)* | | |

- ավելի իրատեսորեն գնահատել նոր և նորագույն շրջանի պատմության առանցքային իրադարձությունները,
- ճիշտ գնահատել տարբեր ազգային-քաղաքական, հասարակական ուժերի և պատմական նշանավոր գործիչների իրական դերակատարությունը Հայոց նոր և նորագույն շրջանի պատմության մեջ,
- ընկալել նոր և նորագույն շրջանի մշակույթի անխզելի կապը հայոց պատմության նույն շրջանի առանցքային իրադարձությունների հետ,

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- ստեղծագործաբար կիրառել ու զարգացնել ունեցած գիտելիքները,
- վերլուծել փաստերը և հետևություններ անել,
- զեկուցումներ պատրաստել ու գիտական բանավեճեր վարել:

*Համառոտ բովանդակությունը*

Հայկական հարցի ծագումը, բովանդակությունը, փուլերը: Հայ ազատագրական շարժումները XV դարի կեսից մինչև XIX դարի սկիզբը: Ռուսական տիրապետության հաստատումը Արևելյան Հայաստանում: Հայկական հարցի միջազգայնացումը: Հայ ազատագրական խմբակներն ու կազմակերպությունները XIX դ. 60-80-ական թվականներին: Հայ ազգային կուսակցությունների հիմնադրումը: Հայ ազգային-ազատագրական պայքարը XIX դարի վերջերին – XX դարի սկզբներին: Հայ ժողովուրդը Առաջին աշխարհամարտի տարիներին. Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը: 1917 թ. Փետրվարյան և հոկտեմբերյան հեղափոխությունները և Հայաստանը: Հայաստանի Առաջին Հանրապետությունը: Հայաստանի Խորհրդային հանրապետությունը (1920-1991 թթ.): Արցախյան շարժումը: Հայաստանի Երրորդ Հանրապետությունը (1991-2012 թթ.): Հայկական մշակույթը նոր և նորագույն շրջանում: Հայկական Սփյուռքը:

*Գնահատման մեթոդները և չափանիշները*

- հանրագումարային քննություն՝ 20 միավոր առավելագույն արժեքով:
- հարցատոմսը պարունակում է երեք հարց: Առաջին երկուսը՝ 7-ական միավոր, երրորդը՝ վեց: Միավորների քայլը՝ 0.5 է:

*Հիմնական գրականության ցանկը*


1. Հայոց պատմություն. Հիմնահարցեր, խմբ. Հր Ռ. Սիմոնյանի, Երևան, 2000:
2. Պարսամյան Վ., Հայ ժողովրդի պատմություն, հ. 3-րդ, Երևան, 1967:
3. *Կարապետյան Մ. Ս.*, Հայաստանը 1912-1920 թվականներին, ուսումնական ձեռնարկ բուհերի

համար, Երևան, <<Զանգակ-97>>, 2003:
4. Կարապետյան Մ., Գևորգյան Է., Խորհրդային Հայաստանը 1920-1991 թվականներին, Ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Երևան, 2007:

| | | |
|---|---|---|
| 0304/B11 | Փիլիսոփայության հիմունքներ | 4 կրեդիտ |
| Շաբաթական 4 ժամ | 48/16 | |
| | Հանրագումարային քննություն | |
| Դասընթացի նպատակն է ուսանողին ներկայացնել փիլիսոփայության հիմնարար հարցադրումները, նրանց տեսական և գործնական նշանակությունները: | | |

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա

*Գիտելիք և իմացություն*

- փիլիսոփայության գիտական - մեթոդաբանական, աշխարհայացքային և արժեքաբանական գործառույթներից,
- ճշմարտության և մոլորության, գիտելիքի և հավատի, ռացիոնալի և իռացիոնալի սահմանազատման սկզբունքներից,
- քաղաքակրթական զարգացումների օրինաչափություններից ու միտումներից:

*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- պարզաբանել բնական և հասարակական գիտությունների գործառույթները,

- տարբերակել քաղաքակրթական հայեցակարգերն ու դրանց հարացույցերը,
- գնահատել փակ և բաց համակարգերի զարգացման առանձնահատկությունները,
- վերլուծել հասարակության բնութենական և սոցիոմշակութային հիմունքները:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- կատարել սոցիալ-փիլիսոփայական ընդհանրացումներ և կիրառել համապատասխան մեթոդներ
- իմաստավորել աշխարհի գիտական պատկերը և մարդու կոչումն ու կյանքի իմաստը:

*Համառոտ բովանդակություն*

Փիլիսոփայությունը որպես մարդու և աշխարհի միջև մշակութային միջնորդ: Փիլիսոփայական մշակույթի առանձնահատկությունները: Պատմափիլիսոփայական ակնարկ: Կեցության փիլիսոփայական ըմբռնումը: Մարդկային կեցության առանձնահատկությունները: Հոգեկանի ծագման վարկածները: Իմացության էությունը և կառուցվածքը: Ճշմարտություն, մոլորություն, հավատ: Գիտական ճանաչողության մեթոդները: Գիտություն և բարոյականություն: Մարդու և հասարակության ծագման վարկածները: Հասարակությունը որպես ինքնապարտադրող համակարգ: Պատմության փիլիսոփայական ըմբռնումը : Մշակույթ և քաղաքակրթություն: Հասարակական կյանքի ոլորտները: Սոցիալական առաջադիմությունը և մարդկության ապագան:

*Գնահատման մեթոդները և չափանիշները.*

- եզրափակիչ բանավոր քննություն՝ 20 միավոր առավելագույն արժեքով (հարցատոմսը պարունակում է 4 հարց, համապատասխանաբար 5,5,5,5 արժեքով):

*Հիմնական գրականության ցանկը*

1. *Алексеев П.В., Панин А.В. Философия.М., 2003.*
2. *Философия. под. Ред. В. Калашникова, М., 1999.*
3. *Философия. под. Ред. В. Кахановского. М., 2000.*
4. *Философия. под. Ред. В. Н. Лавриненко. М., 2001.*

5. *ՀարությունյանԷ.Ա. Ազգայինինքնությաննկյանքիմշակույթ, Եր., 2004:*
6. *ՀակոբյանՍ.Մ. Փիլիսոփայությանտեսությաննպատմություն, Եր., 2007:*
7. *ՇաքարյանՀր. Գ. Փիլիսոփայություն,Երևան,2005:*
8. *Սարգսյան Արամ, Փիլիսոփայություն, Երևան 2011:*

| | | |
|---|---|---|
| **0302/ B06** | Հայոց լեզու և գրականություն-2 | 2 կրեդիտ |
| **2 ժամ** | **8/24/0** | |
| **II կիսամյակ** | ***Հանրագումարային քննություն*** | |

Դասընթացի նպատակն է ուսուցանել ժամանակակից հայերենի ձևաբանական և շարահյուսական համակարգերը, ձևաբանական և շարահյուսական ոճագիտության հիմնական հասկացությունները, ծանոթացնել հայ դասական գրականության նմուշներին:

**Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.**

*Գիտելիք և իմացություն*

1. ժամանակակից հայերենի ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունների մասին.
2. հայ հեղինակների /19-20-րդ դարեր/ գեղարվեստական մի շարք հայտնի ստեղծագործությունների վերաբերյալ.

*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

Ճիշտ կազմելու քերականական ձևերը, գործնականում կիրառելու ձևաբանական և շարահյուսական լեզվաոճական հնարները.

✓ *(ընդհանրական կարողություններ)*

Կառուցելու և վարելու երկխոսություն և բանավեճ

*Համառոտ բովանդակությունը*

Ձևաբանություն. խոսքի մասերի դասակարգումը: Ժամանակակից հայերենի թեքվող խոսքի մասերը: Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը: Շարահյուսություն. կապակցման միջոցներ և եղանակներ. համաձայնությանն ու

| |
|---|
| խնդրառությանը առնչվող սխալների վերացում: Պարզ նախադասություն: Բարդ նախադասություն. փոխակերպում և դերբայական դարձված:Ուղղակի և անուղղակի խոսք: Ժամանակակից հայերենի կետադրությունը: Ձևաբանական և շարահյուսական ոճաբանություն: Ճարտասանական հմտություններ. բանավեճի արվեստ. երկխոսության վարում և կառավարում: Հայ նոր գրականության սկզբնավորումը: 19-20-րդ դարերի հայ գրականությունը: Հայ նորագույն և արդի գրականություն: Գրական երկերի վերլուծություն: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները.*<br>Քննությունն անցկացվում է բանավոր, որից առաջ ուսանողները գրում են քննական թելադրություն (3 միավոր): Մնացած 17 միավորը բաշխվում է հետևյալ ձևով: Բանավոր քննության հարցատոմսը պարունակում է երկու տեսական հարց և մեկ գործնական առաջադրանք՝ համապատասխանաբար 6, 6, 5 միավոր արժեքով: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1.Եզեկյան Լ. Կ., Հայոց լեզու /բուհական դասագիրք/, Երևան, 2009:<br>2. Ասատրյան Մ. Ե., Ժամանակակից հայոց լեզու /ձևաբանություն/, Երևան, 2004: |

| **0305/ B15** | **Անգլերեն լեզու-1** | **4 կրեդիտ** |
|---|---|---|
| **4 ժամ** | **0/64/0** | |
| **1-ին կիսամյակ** | **Ստուգարք** | |
| **Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների լեզվական գիտելիքները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում (ունկնդրել, կարդալ, խոսել, գրել):** | | |
| **Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.**<br>*Գիտելիք և իմացություն*<br>**Հարուստ ակտիվ և ներզոր բառապաշար, քերականության հատուկ բարդություն ունեցող երևույթների իմացություն:**<br>*Ունակ կլինի*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>**Կուռնենաբանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտություններ,** | | |

| | | |
|---|---|---|
| կկարողանա կիրառել անգլերենիհիմնական բառակազմական միջոցները:<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>Կկարողանա վերարտադրել անգլերեն տեքստեր, կկարողանա ազատ հաղորդակցվել անգլերենով՝ բանավոր և գրավոր ընդհանուր բնույթի տարբեր թեմաների շուրջ: | | |
| *Համառոտ բովանդակություն*<br>Թեմա 1՝ “It is a wonderful world”: Թեմա 2՝ “Get happy”: Թեմա 3՝ “Telling tales”: Թեմա 4՝ “Doing right thing”: Թեմա 5՝ “On the move”: Թեմա 6՝ “I just love it”: Թեմա 7՝ “The world of work”: Թեմա 8՝ “Just imagine”: Թեմա 9՝ “ Relationships”: Թեմա 10՝ “Obsessions”: Թեմա 11՝ “Tell me about it”: Թեմա 12՝ “Life’s great events”: | | |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները*<br>**Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով անցած նյութի հիման վրա:** | | |
| *Հիմնական գրականության ցանկը*<br><br>7. Soars J., Soars L. New Headway. Intermediate. 3rd Edition. Oxford: Oxford University Press, 2009. | | |
| **0305/ B16** | **Անգլերեն լեզու-2** | **4 կրեդիտ** |
| **4 ժամ** | **0/64/0** | |
| **2-րդ կիսամյակ** | **Ստուգարք** | |
| Դասընթացի նպատակն է նոր, առավել հազեցած բառապաշարի և գիտելիքների ներմուծում, ընդհանուր ծանոթացում մասնագիտական բառապաշարին՝ զուգահեռաբար խորացնելով ուսանողների լեզվական հմտությունները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում: | | |
| Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. | | |

*Գիտելիք և իմացություն*

**Ընդլայնված վերարտադրողական և ընկալողական բառապաշար, հանրամշակութային գիտելիքներ, նախորդ փուլում յուրացրած քերականական նյութի համակարգում հաղորդակցական սկզբունքի հիման վրա:**

*Ունակ կլինի*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- **Կյուրացնի մասնագիտական բառապաշար և ձեռք կբերի մասնագիտական տեքստեր թարգմանելու կարողություններ:**

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- **Կկարողանա վերարտադրել մասնագիտական անգլերեն տեքստեր, ընկալել լսված/կարդացած նյութի հիմնական բովանդակությունը, տարանջատել հիմնական տեղեկատվությունը երկրորդականից:**

*Համառոտ բովանդակությունը*

Թեմա 1՝ “It is a wonderful world”: Թեմա 2՝ “Get happy”: Թեմա 3՝ “Telling tales”: Թեմա 4՝ “Doing right thing”: Թեմա 5՝ “On the move”: Թեմա 6՝ “I just love it”: Թեմա 7՝ “The world of work”: Թեմա 8՝ “Just imagine”: Թեմա 9՝ “ Relationships”: Թեմա 10՝ “Obsessions”: Թեմա 11՝ “Tell me about it”: Թեմա 12՝ “Life’s great events”:

*Գնահատման մեթոդները և չափանիշները*

**Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով անցած նյութի հիման վրա:**

*Հիմնական գրականության ցանկը*

1. Soars J., Soars L.  New Headway. Intermediate. 3rd Edition. Oxford: Oxford University Press, 2009.
2. Swan M. Practical English Usage. Oxford: Oxford University Press, 2005.

| | | |
|---|---|---|
| **0305/ B17** | **Անգլերեն լեզու-3** | **4 կրեդիտ** |
| **4ժամ** | **0/64/0** | |
| **3-րդ կիսամյակ** | **Հանրագումարային քննություն** | |

**Դասընթացի նպատակն է ակտիվացնել ուսանողների արդեն ձեռք բերած լեզվական գիտելիքների ու հմտությունների կիրառումը մասնագիտական նպատակներով, ընդլայնել մասնագիտական բառապաշարը, զարգացնել մասնագիտական թեմաների շուրջ բանավոր և գրավոր հաղորդակցվելու հմտությունները:**

**Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.**

*Գիտելիք և իմացություն*

**Խորացված մասնագիտական բառապաշար, բնագիր մասնագիտական տեքստեր ազատ վերարտադրելու կարողություն:**

*Ունակ կլինի*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- **Լիակատար կերպով հասկանալ և ամբողջապես ըմբռնել լսված կամ կարդացած նյութի հիմնական բովանդակությունը, կտիրապետի անգլերեն բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտություններին:**

✓ *(ընդհանրական կարողություններ)*

**Կկարողանա հաղորդակցվել անգլերենով մասնագիտական բնույթի տարբեր թեմաների շուրջ, կտիրապետի գործարար նամակագրության (համառոտագրություն, ինքնակենսագրություն /CV/, դիմում) հմտություններին:**

*Համառոտ բովանդակությունը*

Թեմա 1՝ “Writing”: Թեմա 2՝ “Language families of the world”: Թեմա 3՝ “Sociolinguistics”: Թեմա 4՝ “Taboo and uphemism”: Թեմա 5՝ “Language and gender”: Թեմա 6՝ “Bilingualism and multilingualism”: Թեմա 7՝ “Pidgin and creoe languages, lingua francas, Esperanto”: Թեմա 8՝ “Politeness issues”: Թեմա 9՝ “Language change”: Թեմա 10՝ “Language and culture”: Թեմա 11՝

| |
|---|
| “Psycholinguistics”: Թեմա 12՝ “Corpus linguistics”: |
| Գնահատման մեթոդները և չափանիշները.<br>**Գիտելիքների ստուգումը անց է կացվում քննության ձևով:**<br>• **Առաջին առաջադրանք՝ կարդալ, թարգմանել անծանոթ տեքստը մասնագիտական թեմայով**<br>• **Երկրորդ առաջադրանք՝ մեկնաբանել ծանոթ մասնագիտական տեքստը**<br>• **Երրորդ առաջադրանք՝ խոսել մասնագիտական ոլորտի վերաբերյալ** |
| *Հիմնական գրականության ցանկը*<br><br>1. Hovakimyan L. Linguistic Mosaic. Yerevan: YSU Press, 2007.<br>2. Swan M. Practical English Usage. Oxford: Oxford University Press, 2005. |

| **0305/B15** | **ֆրանսերեն-1** | 4 կրեդիտ |
|---|---|---|
| **4 ժամ** | **0/64/0** | |
| **I կիսամյակ** | **Ստուգարք** | |
| **Դասընթացի նպատակն է** ուսանողին տալ ելակետային գիտելիքներ ֆրանսերենի հնչյունական համակարգի, տառադարձմանսկզբունքերի, ֆրանսերենին բնորոշ արտասանական առանձնահատկություններից, ուսանողների մոտ ձևավորել հաղորդակցության համար անհրաժեշտ բանավոր և գրավոր խոսքի ունակություններ, ուղղախոսական-ուղղագրական հմտություններ, տեքստի հետ ինքնուրույն աշխատելու և ազատ հաղորդակցվելու կարողություններ: | | |
| **Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.**<br><br>Գիտելիք և իմացություն<br>• **ֆրանսերենի արտասանական նորմերի, հնչյունական համակարգի և հնչյունական յուրահատկությունների մասին,** | | |

| |
|---|
| • տառադարձման սկզբունքների մասին,<br>• ուսուցմանտվյալփուլումնախատեսվածբառապաշարիմասին,<br>• անհրաժեշտգիտելիքներ ֆրանսերենի քերականականկառույցներիմասին<br>• ուղղագրության հիմնական կանոնների մասին,<br><br>Ունակ կլինի<br><br>(բուն մասնագիտական կարողություններ)<br>• ճիշտարտաբերելֆրանսերենիառանձինհնչյուններըևդրանցարտասանականտարբերակները, ինքնուրույն կատարել տառադարձում,<br>• ձեռք բերած քերականական գիտելիքների հիման վրա կառուցել նախադասություններ և գործադրել դրանք խոսքում,<br>• ազատորեն հաղորդակցվել ֆրանսերենով, ընթերցել ադապտացված տեքստեր,<br>(ընդհանրական կարողություններ)<br>• կկարողանա ինքնուրույն կերպով կատարել տեքստի ձևաբանական վերլուծություն,<br>ընկալել և մեկնաբանել անգլերենի արտասանական յուրահատկությունները: |
| *Համառոտ բովանդակություն*<br>Ֆրանսերենի հնչյունական համակարգը: Ուղղախոսական-ուղղագրական առանձնահատկությունները: Ֆրանսերենի քերականության ընդհանուր բնութագիրը և հիմնական առանձնահատկությունները: Հոդ և հոդառություն: Հոդերի տեսակները և դրանց գործածության առանձնահատկությունները: Գոյականի քերականական կարգերի ընդհանուր բնութագիրը: Սեռ, թիվ, հոդ: Ածականի տեսակները: Համեմատության աստիճանների կազմության առանձնահատկությունները: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները.*<br>Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով անցած նյութի հիման վրա: |
| Հիմնական գրականության ցանկը.<br>1. Попова И. Н., Казакова Ж. А., «Французский язык», Москва 2008 |

| |
|---|
| 2. M. Grégoire, Od. Thiévenaz «Grammaire progressive du français» (Niveau débutant).<br>3. Cl. Miquel «Communication progressive du français» ( Niveau débutant). |

| | | |
|---|---|---|
| **0305/ B16** | **Ֆրանսերեն-2** | **4**<br>**կրեդիտ** |
| **4 ժամ** | **0/64/0** | |
| **2-րդ կիսամյակ** | **Ստուգարք** | |
| **Դասընթացի նպատակն է** խորացնել նախորդ կիսամյակումստացած գիտելիքները, հարստացնել ուսանողի բառապաշարը և զարգացնել նրա ուղղախոսական ունակությունները: | | |
| **Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.**<br><br>Գիտելիք և իմացություն<br><br>• **ամբողջական պատկերացում կունենա ֆրանսերենի հնչյունաբանության, ուղղախոսական-ուղղագրական նորմերի, հիմնական քերականական կառուցվածքի մասին,**<br><br>Ունակ կլինի<br><br>(բուն մասնագիտական կարողություններ)<br>• **Ֆրանսերենի հնչերանգի առանձնահատկությունների մասին,**<br>• **ֆրանսերենի ձևաբանական և քերականական ընդարձակ կաղապարների** | | |

| |
|---|
| մասին,<br>• կոնկրետթեմատիկբառապաշարիննրակիրառմանոլորտիմասին,<br>• տեքստերիվերարտադրությանուփոխադրմանսկզբունքներիմասին:<br>(ընդհանրական կարողություններ)<br>• կկարողանա ինքնուրույն կերպով կատարել տեքստի շարահյուսական վերլուծություն:<br>• կկարողանա ազատորեն հաղորդակցվել ֆրանսերենով, ընթերցել միջին բարդության տեքստեր, |
| Համառոտ բովանդակությունը.<br>**Ածականի տեսակները և քերականական կարգերը : Դերանունների հիմնական տեսակները և դրանց քերականական կարգերի ընդհանուր բնութագիրը : Թվականներ : Թվականների քերականական կարգերը : Բայ, ընդհանուր բնութագիրը և բայերի դասակարգման սկզբունքները : Մակբայների տեսակները և քերականական կարգերը :** |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները*<br>**Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով անցած նյութի հիման վրա:** |
| Հիմնական գրականության ցանկը.<br>1. Попова И. Н., Казакова Ж. А., «Французский язык», Москва 2008<br>2. M. Grégoire, Od. Thiévenaz «Grammaire progressive du français» (Niveau débutant).<br>3. Cl. Miquel «Communication progressive du français» ( Niveau débutant). |

| | | |
|---|---|---|
| **0305/B17** | **Ֆրանսերեն-3** | **4 կրեդիտ** |
| **4 ժամ** | **0/64/0** | |
| **3-րդ կիսամյակ** | **Հանրագումարային քննություն** | |

**Դասընթացի նպատակն է** խորացնել և զարգացնել նախորդ կիսամյակումձեռք բերած գիտելիքները, ուսանողի մոտ ձևավորել ազատ հաղորդակցվելու և գրականույթունից օգտվելու կարողություններ:

**Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.**

Գիտելիք և իմացություն

- **Ամբողջական պատկերացում կունենա ֆրանսերենի ձևաբանության և շարահյուսության մասին,**

Ունակ կլինի

(բուն մասնագիտական կարողություններ)

- **կկարողանա կատարել տեքստի շարահյուսական վերլուծություն,**

(ընդհանրական կարողություններ)

- **կկարողանա բառարանի օգնությամբ ընթերցել գեղարվեստական գրականություն և մասնագիտական տեքստեր :**

Համառոտ բովանդակությունը.

**Ֆրանսերենի բառակազմությունը: Առավել գործածական նախածանցները և վերջածանցները: Ֆրանսերենի նախդիրների ընդհանուր բնութագիրը: Առավել**

| |
|---|
| գործածական նախդիրները : Շաղկապների կարգերն ու տեսակները : Հաստատական և ժխտական մասնիկները և դրանց գործածության առանձնահատկությունները : Շարահյուսություն : Նախադասության դասակարգման սկզբունքները ու չափանիշները : |
| Գնահատման մեթոդները և չափանիշները.<br>Գիտելիքների ստուգումը անց է կացվում քննության ձևով:<br>• Առաջին առաջադրանք՝ կարդալ, թարգմանել անծանոթ տեքստը մասնագիտական թեմայով<br>• Երկրորդ առաջադրանք՝ մեկնաբանել ծանոթ մասնագիտական տեքստը<br>• Երրորդ առաջադրանք՝ խոսել մասնագիտական ոլորտի վերաբերյալ |
| Հիմնական գրականության ցանկը.<br><br>1. Попова И. Н., Казакова Ж. А., «Французский язык», Москва 2008<br>2. M. Grégoire, Od. Thiévenaz «Grammaire progressive du français» (Niveau intermédiaire).<br>3. M. Djoulhakian, R. Meliksétian, A. Mouradian «Manuel de français» Erevan – 2011. |

| | | |
|---|---|---|
| 0304/B19 | Կրոնների պատմություն | 2 կրեդիտ |
| Շաբաթական 2 ժամ | (32/0/0) | |
| IV կիսամյակ | Ստուգարք | |

Դասընթացի հիմնական նպատակն է ուսանողների մոտ ձևավորել ընդհանուր պատկերացումներ կրոնների պատմական ձևերի, դրանց դավանաբանական և պաշտամունքային առանձնահատկությունների, հիմնականուղղություններիմասին, ուսանողներինծանոթացնելհամաշխարհայինկրոններինՀայոցեկեղեցուդավանաբանությաննուտոնածիսականհամակարգին, պատմությանկարևորհիմնախնդիրներին:

Դասընթացիավարտինուսանողըկունենա

*Գիտելիք և իմացություն*

- կունենա գիտելիքներ կրոնների և Հայ եկեղեցու պատմության ձևավորման, զարգացման և դավանաբանական ու ծիսապաշտամունքային առանձնահատկությունների մասին

*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- ճանաչել, գնահատել և արժևորել արդի տարբեր կրոններն ու դրանց տարատեսակները, Հայ Առաքելական եկեղեցու պատմությունն ու դավանանքը,

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- տալ կրոնների համակարգային վերլուծության և ընդհանրացման սահմանները:

*Համառոտ բովանդակություն*

«Կրոնների պատմություն» առարկան, «Կրոն հասկացությունը»: Կրոնի պատմական ձևերը, ազգային և համաշխարհային կրոններ: Ժամանակակից համաշխարհային կրոններ. բուդդայականության ծագումը, դավանաբանական և պաշտամունքային առանձնահատկությունները: Քրիստոնեության առաջացումը, դավանաբանության և պաշտամունքի ձևավորումը: Քիրստոնեության հիմնական ուղղությունները, ժամանակակից քրիստոնեությունը: Իսլամ. ծագումը, զարգացումը, դավանաբանական և պաշտամունքային առանձնահատկությունները, հիմնական ուղղությունները: Ժամանակակից կրոնական դենոմինացիաները և ներփակ հոսանքները: Քրիստոնեությունը Հայաստանում: Հայ Առաքելական եկեղեցու պատմության հիմնախնդիրները: Հայոց եկեղեցու դավանաբանական և ծիսապաշտամունքային առանձնահատկությունները:

*Գնահատման մեթոդները և չափանիշները.*

- Ստուգումն անցկացվում է բանավոր, նախօրոք տրված հարցաշարի հիման վրա:

| |
|---|
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. **История религии** (учеб. Под общ. Ред. И. Н. Яблокова) Т. 1-2. М., 2007.<br>2. **Основы религиоведения**(учеб. Под общ. Ред. И. Н. Яблокова) М., 2005.<br>3. **Радугин А. А.** Введение в религиоведение: теория, история и современные религии, М., 2000.<br>4. **Религиоведение,** (учеб. Под общ. Ред. М. М. Шахнович), СПб, 2007.<br>5. **Классики мирового религиоведения.** Антология. Т.1, М. 1996.<br>6. Մաղաքիաարք. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա-Գ, Երևան, 2001:<br>7. ՔրիստոնյաՀայաստան: Հանրագիտարան, Երևան, 2002, |

| 0202/B19 | Մշակութաբանություն | 2 կրեդիտ |
|---|---|---|
| 2 ժամ | 32/0/0 | |
| IV կիսամյակ | Ստուգարք | |
| Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ կայուն գիտելիքներ ձևավորել մշակութաբանության առարկայի և մշակույթ հասկացության վերաբերյալ, արմատավորել համակարգված պատկերացում մշակույթի բաղադրիչների, մշակութային գործընթացների և մեխանիզմների մասին: Հատուկ ուշադրություն կդարձվի հայ և համաշխարհային մշակույթների ընդհանուր բնութագրերի և ներկա մշակութային գործընթացների վրա: | | |
| **Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.**<br>*Գիտելիք և իմացություն.*<br>• «մշակույթ» հասկացության ամենատարածված սահմանումների, մշակույթիառաջացմաննզարգացման տեսությունների մասին,<br>• մշակույթի կառուցվածքի, բաղադրիչների, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափությունների մասին,<br>• համաշխարհային և հայ մշակույթների պատմական զարգացումների օրինաչափությունների վերաբերյալ:<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>  • ներկայացնել մշակույթի ընդհանրական բնութագիրը, նրա առանձին բաղադրիչներն ու դրսևորումները,<br>  • ճանաչել և զանազանել իրարից համաշախարհային մշակութային գործընթացի պատմական և լոկալ դրսևորումները,<br>  • հասկանալ մերօրյա մշակութային երևույթները և գործընթացները<br>✓ *(ընդհանրական կարողություններ)* | | |

| |
|---|
| ▪ ընկալել սեփական մասնագիտական գործունեությունը որպես ընդհանրական մշակութային գործընթացի բաղկացուցիչ,<br>▪ կիրառել մշակույթի մասին ստացած գիտելիքները կոնկրետ մասնագիտական ոլորտում: |
| *Համառոտ բովանդակությունը.*<br>Դասընթացի ուսումնասիրման օբյեկտը, առարկան և խնդիրները: «Մշակույթ» հասկացության սահմանումներն ու մշակույթի էության, ծագման և զարգացման վերաբերյալ տեսությունները: Մշակույթի կառուցվածքը, բաղադրիչները, գործառույթները և մեխանիզմները: Մշակութային գործընթացներ: Մշակույթը «անհատ», «բնություն», «հասարակություն», «էթնոս», «քաղաքակրթություն» կատեգորիաների համատեքստում: Համաշխարհային և հայ մշակույթների պատմական զարգացումները. մոտեցումներ, հարցադրումներ, օրինաչափություններ: Ժամանակակից մշակութային գործընթացները և գլոբալացման խնդիրը: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները.*<br>Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝<br>նախապես տրամադրված հարցաշարից: |
| *Հիմնական գրականության ցանկը.*<br>1. Ափինյան Ա. Մշակութաբանություն, Մշակույթի տեսություն, Ե., 2008:<br>2. ԳուրնիչՊ. Մշակութաբանություն, Ե., 2002:<br>3. ՄելքումյանԳ. Մշակութաբանություն, Ե., 2001:<br>4. Арутюнов С. А., Рыжакова С. И. Культурная антропология, М., 2004.<br>5. Белик А. А. Культурология. Антропологические теории культур, М., 1999.<br>6. Кравченко А. И. Культурология, М., 2003.<br>7. Розин  В.М. Культурология. М., 1998.<br>8. Флиер А. Я. Культурология для культурологов, М., 2002.<br>9. Armenian Folk Arts, Culture and Identity. Bloomington and Indianapolis, Indiana Univ. Press, 2001. |

<table>
<tr><td>0304/B18</td><td>Իրավագիտություն</td><td>2 կրեդիտ</td></tr>
<tr><td>2 ժամ</td><td colspan="2">32/0/0</td></tr>
<tr><td>3-րդ կիսամյակ</td><td colspan="2">Ստուգարք</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացի նպատակն է ուսանողին հասարակականկյանքիտարբերոլորտներիսահմանադրական-օրենսդրականկարգավորմանհիմունքները, մշակելստացածիրավականգիտելիքներըգործնականումկիրառելուհմտություններ, ինչպեսձևավորելիրավականաշխարհայացքումշակույթ:</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.<ul><li>վերհիշել և գիտակցել պետության իրավունքի հիմնական հասկացությունները,</li><li>վերհիշել և բնութագրել պետությունը և իրավունքի,</li><li>թվարկելևնկարագրելիրավունքիհատկանիշները, տալիրավունքիբնորոշումը,</li><li>թվարկել և նկարագրել իրավունքի արդի ձևերը,</li><li>բացատրել իրավական կարգավորման կառուցակարգը, իրավունքի կենսագործումը,</li><li>պատկերացնելևհասկանալիրավունքիհամակարգը, իրավունքիհիմնականճյուղերը, դրանցկարգավորմանհիմնականաղբյուրները,</li><li>դասակարգելևներկայացնելիրավականտեքստերիմեկնաբանմանկանոններըև նարքները.</li><li>տարբերել օրինականություն, իրավաչափ և իրավախախտ վարքագիծ հասկացությունները,</li><li>բացատրել իրավաբանական պատասխանատվությունը և դրա տեսակները,</li><li>հասկանալկոռուպցիայիդեմպայքարիիրավականհիմնահարցերը,</li><li>վերհիշելևգիտակցելսահմանադրական, դատական, քաղաքացիական, աշխատանքային, ընտանեկան, էկոլոգիական, քրեական, դատավարականիրավունքի, միջազգայինիրավունքիհիմնականհասկաղությունները, կարգավորմանառարկան, հիմնադրույթները:</li></ul>Ունակ կլինի.</td></tr>
</table>

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- համեմատել և տարբերակել պետաիրավական հիմնական հասկացությունները,
- մեկնաբանել պետություն և իրավունք հասկացությունները, թվարկել դրանց ձևերը,
- քննարկել և ընդհանրացնել իրավունքի աղբյուրները, դրանց աստճանակարգությունը,
- իրականացնել իրավական տեքստերի պարզաբանում և բացատրում օգտագործելով մեկնաբանողական տեխնիկան և տեխնոլոգիան, վեր հանել իրավական դրույթների տառացի բովանդակությունը, ոգին,
- տարբերակել իրավակիրառման փուլերը, կատարել դրանցից ամեն մեկին բնորոշ գործողությունները և քայլերը,
- մեկնաբանելևգնահատելիրավաբանականպատասխանատվությանհասկացությունը, հիմքերը, սկզբունքերը,
- արժևորելիրավականսոցիալականպետությանհայեցակարգերը,
- իրականացնելիրավականգործողություններնսեփականիրավունքներիպաշտպ անությանգործողություններօգտագործելովսահմանադրական, դատական, քաղաքացիական, աշխատանքային, ընտանեկան, էկոլոգիական, քրեական, դատավարականիրավունքի, միջազգայինիրավունքիհիմնադրույթները:
- տիրապետելիրավաբանիմասնագիտականարհեստավարժությանընդհանուրհիմունք ներին, տիրապետելիրավականհիմնականեզրույթներին,
- դրսևորելիրավականաշխարհայացք, ձեռքբերելմասնագիտականիրավականմշակույթ:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- ինքնուրույն ուսումնասիրել իրավական կարգավորման աղբյուրները,
- օգտվելիրավականտեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետ ռեսուրսներ, օրենսգրքեր, օրենքներ),
- արտահայտելմտքերնիրավաբանորենճիշտ, տրամաբանորենհետևողականևհասկանալի, բանավիճելևպաշտպանելիրտեսակետըսահմանվածկանոնակարգիևէթիկային անոններիպահպանմամբ,

- օժանդակել օրինականության ապահովմանը, իրականացնել իրավական քարոզչություն, ցուցաբերել քաղաքացիական հասունություն, ակտիվություն, հարգել օրենքը և իրավական պետության արժեքները, ունենալ բարոյաիրավական պատշաճ գիտակցություն, պատասխանատվության զգացում:

*Համառոտ բովանդակությունը*

Հասարակությունևպետություն:Իրավունք:Իրավականկարգավորմանկառուցակարգըևիրավունքիկենսագործումը:Իրավունքիճյուղերը:Իրավունքիհամակարգը:Օրինականություն, իրավաչափվարքագիծ, իրավախախտում:Կոռուպցիայիդեմպայքարիիրավականհիմնահարցերը: Սահմանադրականիրավունք:Դատականիշխանությունևդատականհամակարգ:Քաղաքացիականիրավունք:Աշխատանքայինիրավունք:Ընտանեկանիրավունք:Էկոլոգիականիրավունք:Քրեականիրավունք:Դատավարականիրավունք:Միջազգային իրավունք:

*Գնահատման մեթոդները և չափանիշները*

Ստուգարք՝ տրված հարցաշարով:

*Հիմնական գրականության ցանկը*

1. ՀՀ Սահմանադրություն:
2. ՀՀքաղաքացիական, քրեական, ընտանեկան, աշխատանքային, քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերը:
3. Հասարակագիտություն, դասագիրք 9-րդ դասարանի համար, Ղազինյան Գ., Վաղարշյան Ա. և այլք, Եր., Տիգրան Մեծ, 2008:
4. Հասարակագիտություն, դասագիրք 11-րդ դասարանի համար, Ղազինյան Գ., Վաղարշյան Ա. և այլք, Եր., Տիգրան Մեծ, 2010:

| | | |
|---|---|---|
| 0304/B18 | Քաղաքագիտություն | 2կրեդիտ |
| 2 ժամ | 32/0/0 | |
| III կիսամյակ | Ստուգարք | |
| Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել քաղաքագիտության ձևավորման տեսական և գաղափարական ակունքների, հիմնական կատեգորիաների ու | | |

քաղաքագիտության ուսումնասիրության առարկայական տիրույթի հետ, ուսանողների մոտ ձևավորել քաղաքական իրականության վերլուծության գործնական հմտություններ:

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

*Գիտելիք և իմացություն*

- քաղաքագիտության տեսական և կիրառական նշանակություն ունեցող հիմնահարցերի մասին,

*Ունակ կլինի*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- կունենա քաղաքագիտական վերլուծություններ կատարելու բավարար ունակություններ,
- կկարողանա կողմնորոշվել գործնական քաղաքականության առանձնահատկությունների մեկնաբանման հարցերում,

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- պատկերացում կկազմի քաղաքագիտության առարկայական տիրույթի ու մեթոդաբանության մասին:

*Համառոտ բովանդակություն*

Քաղաքագիտության ձևավորումը որպես գիտություն: Քաղաքագիտության օբյեկտը և առարկան: Քաղաքականության ծագումը և էությունը: Քաղաքական իշխանության էությունն, կառուցվածքը և լեգիտիմությունը: Հասարակության քաղաքական համակարգը: Պետությունը որպես քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտ: Քաղաքական կուսակցությունները և կուսակցական համակարգեր: Քաղաքական գործընթացներ: Ընտրություններ և ընտրական համակարգեր: Քաղաքական գաղափարախոսություններ: Քաղաքական էլիտա և լիդերություն:

*Գնահատման մեթոդները և չափանիշները*

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

*Հիմնական գրականության ցանկը*


- *Քաղաքագիտություն, ուսումնական ձեռնարկ, գլխ. խմբագիր՝ Հ. Մանուչարյան, ԵՊՀ հրատարակչություն, Երևան 2006. - 588 էջ*
- Гаджиев К.С.Политология: Учебник для высших учебных заведений. –

| | |
|---|---|
| | М.: Логос, 2004. – 488 с.<br>▪ Соловьев А.И. Политология: Политическая теория, политические технологии: Учебник длв студентов вузов / А.И. Соловьев. – М.: Аспект Пресс, 2003. – 559 с.<br>▪ Политология: учебник для студентов вузов / Под ред. В.Н. Лавриненко. – 3-е изд., перераб. и доп. – М.: ЮНИТИ-ДАНА, 2006. – 591 с. – (Серия «Золотой фонд российских учебников»).<br>▪ Comparative Governmentand Politics, An Introduction, Rod Hague, Martin Harrop, New York.: PALGRAVE MACMILLAN, 2004. - 365 pp. |

| **0201/ B18** | **Տնտեսագիտություն** | **2 կրեդիտ** |
|---|---|---|
| **2 ժամ** | **32/0/0** | |
| **3-րդ կիսամյակ** | **Ստուգարք** | |
| Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել տնտեսագիտության ընդհանուր հիմունքներին: | | |
| **Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.**<br>*Գիտելիք և իմացություն*<br>▪ հիմնականտնտեսագիտական հասկացություններիվերաբերյալ,<br>▪ արտադրողների և սպառողների վարքագծերի վերաբերյալ,<br>▪ տնտեսական մեխանիզմի գործունեության առանձնահատկությունների վերաբերյալ:<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>▪ հասկանալուիրմասնագիտությանշրջանակներումառաջացողտնտեսագիտականտարատեսակխնդիրներըևմիջոցներձեռնարկելուդրանցլուծմանուղղությամբ:<br>▪ վերլուծելերկրում իրականացվող տնտեսականքաղաքականությունը և կանխատեսել դրա հավանական ազդեցությունը իր մասնագիտական գործունեության ոլորտի վրա:<br>✓ (ընդհանրական *կարողություններ)*<br>▪ վերլուծել առկա խնդիրները և առաջարկել դրանց լուծման եղանակներ: | | |

| |
|---|
| |
| *Համառոտ բովանդակություն*<br>Պահանջարկի և առաջարկի առաձգականությունը: Սպառողի վարքի տեսության հիմունքները: Գործարար ձեռնարկությունները և արտադրողի վարքը: Արտադրության ծախքերի տեսություն: Մրցակցային և ոչ մրցակցային շուկաները: Մակրոտնտեսական ցուցանիշները: Ազգային հաշիվների համակարգը: Մակրոտնտեսական անկայունություն, տնտեսական ցիկլեր, գործազրկություն և ինֆլյացիա: Տնտեսական աճ: Ամբողջական պահանջարկ և ամբողջական առաջարկ: Վճարային հաշվեկշիռ և արժույթային կուրսեր: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները*<br>Ստուգարքին տրվում է առավելագույնը 4 հարց, նախապես տրված հարցաշարից: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>*1. ԱղաջանյանՀ.Ի.,Միկրոէկոնոմիկա, Եր., 2010*<br>*2. К.Р.Макконнелл, С.Л.Брю, Флин, Экономикс, М. 2011,.*<br>*3. Курс экономической теории /под ред. Сидоровича, М.. 2009.* |

| | | |
|---|---|---|
| 0104/ B01 | Համակարգչից օգտվելու հմտություններ | 2 կրեդիտ |
| Շաբաթական 2 ժամ | 8/24/0 | |
| I կիսամյակ | Ստուգարք | |
| Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ համակարգիչների, դրանց տեխնիկական, ծրագրային և ինֆորմացիոն ապահովման մասին, ինչպես նաև ստեղծել անհրաժեշտ հիմքեր համակարգչի օգնությամբ մասնագիտության մեջ գործնական հետազոտություններ ու վերլուծություններ կատարելու համար: | | |
| Դասընթացի ավարտին ուսանողը կունենա<br>*Գիտելիք և իմացություն* | | |

| |
|---|
| ▪ համակարգչի կառուցվածքից և նրա աշխատանքի հիմնական սկզբունքներից,<br>▪ օպերացիոն համակարգից, բազմախնդրայնությունից, տեքստային և գրաֆիկական խմբագիրների աշխատանքների սկզբունքների տարբերությունից:<br>*Ունակ կլինի*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>▪ ինքնուրույն կատարել իր թղթավարությունը (կուրսային, ավարտական աշխատանքներ, հաշվարկների կատարում, զեկուցումների համար սլայդների պատրաստում և այլն):<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>▪ ստեղծագործաբար կիրառել ունեցած գիտելիքները առկա խնդիրները լուծելիս: |
| *Համառոտ բովանդակությունը*<br>Համակարգչի կառուցվածքը և աշխատանքի հիմնական սկզբունքները: Օպերացիոն համակարգի հասկացություն և բազմախնդրայնության գաղափար: Windows օպերացիոն համակարգի գրաֆիկական ինտերֆեյսի հետ աշխատելու հիմնական սկզբունքները: Microsoft Word փաստաթղթի ստեղծում և ձևավորում: Microsoft Excel էլեկտրոնային աղյուսակներ: Microsoft PowerPoint ներկայացման ստեղծում: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները*<br>▪ Դասընթացն ավարտվում է ստուգարքով, որն անցկացվում է համակարգչի վրա: Ուսանողին տրվում են հանձնարարություններ, որոնք հիմնված են դասընթացի ընթացքում անցած թեմաների վրա: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>*1. Katherine Murray, First Look Microsoft Office 2007, Microsoft Press, 2006*<br>*2. Ю. Стоцкий, А. Васильев, И.Телина, Microsoft Office 2010, Питер, 2010*<br>*3. Ю. Стоцкий, Office 2007, Питер, 2007*<br>4. *Առաջադրանքներ՝ էլեկտրոնային կրիչով:* |

| | | |
|---|---|---|
| 0105/B02 | Էկոլոգիայի և | 2 կրեդիտ |

<table>
<tr><td></td><td>բնապահպանության հիմունքներ</td><td></td></tr>
<tr><td>2 ժամ</td><td colspan="2">32/0/0</td></tr>
<tr><td>2-րդ  կիսամյակ</td><td colspan="2">Ստուգարք</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացի նպատակն է ձևավորել էկոլոգիական աշխարհայացք՝ ուսանողներին ծանոթացնելով էկոլոգիա գիտության պատմությանը, բնական համակարգերի կազմավորմանը, կենսահամակարգերի գործունեության հիմունքներին, բնության և դրա առանձին բաղադրիչների վրա անթրոպոգեն ազդեցության հետևանքներին, պոպուլյացիոն էկոլոգիային, կենսացենոզների բնութագրին, էկոհամակարգերի գործունեության սկզբունքներին, կենսաբազմազանության պահպանության հիմունքներին:</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.<br>Գիտելիք և իմացություն<br>• էկոլոգիայի որպես գիտության ձևավորման, կենդանիների և բույսերի էկոլոգիայի, էկոհամակարգի, կենսացենոզի և նոոսֆերայի ուսմունքների, մարդկության կայուն զարգացման սկզբունքների մասին:<br>Ունակ կլինի<br>✓ (բուն մասնագիտական կարողություններ)<br>• էկոլոգիայի հիմունքներ առարկայից ստացած տեսական գիտելիքները օգտագործել բնության պահպանության բնագավառում կիրառվող բնապահպանական միջոցառումները ճիշտ վերլուծելու և կիրառելու գործընթացներում,<br>✓ (ընդհանրական կարողություններ)<br>• վերլուծություններ կատարել էկոլոգիական վիճակի մասին և կատարել համապատասխան եզրակացություններ:</td></tr>
<tr><td colspan="3">Համառոտ բովանդակություն<br>Էկոլոգիա և նրա կայացման պատմությունը: Օրգանիզմի և միջավայրի միջև փոխազդեցությունները: Պոպուլյացիաների էկոլոգիա: Համակեցություններ:</td></tr>
</table>

| |
|---|
| Նյութերի երկրաբանական և կենսաբանական շրջապտույտը: Կենսոլորտ: Կենսոլորտի էվոլյուցիայի հիմնական ուղղությունները: Անթրոպոգեն էկոհամակարգեր: Անթրոպոգենազդեցություններըմթնոլորտի, կլիմայի, ջրոլորտիևքարոլորտիվրա: Բնությանպահպանությաննռացիոնալբնօգտագործմանհիմնականսկզբունք-ները:Էկոլոգիաևմարդուառողջությունը: Էկոլոգիա-կանիրավունքիհիմունքները:Միջազգայինհամագործակցությունըէկո-լոգիայիշրջանակներում:Բնությանպահպանությունևգլոբալիզացիա: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները*<br>Ստուգարքին տրվում է առավելագույնը 3 հարց, նախապես տրված հարցաշարից: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br><br>1. Գրիգորյան Կ.Վ. և ուրիշներ, Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ , Ուսումնական ձեռնարկ, Եր.: Զանգակ – 97, 2010.<br>2. Մարտիրոսյան Մ., Գրիգորյան Կ.Վ., Եսայան Ա.Հ. Բնապահպանություն և աստվածաբանություն, Վաղարշապատ, 2007.<br>3. Маврищев В.В. Основы общей экологии, Минск, 2000.<br>4. Демина Т.А. Экология, природопользование, охрана окружающей среды, “Аспект пресс”, М., 2000.<br>5. Воронцов Н.Н. и др. Эволюция органического мира, М., 2000.<br>6. Воронков Н.А. Основы общей экологии, “Агар”, М, 1999.<br>7. Гирусов Э.В. и др. Экология и экономика природопользования, М., 1998.<br>8. Грант В. эволюционный процесс, “Мир”, М., 1989.<br>9. Бигон М. и др. Экология, “Мир”, М., 1989.<br>10. Одум Ю. Основы экологии, “Мир”, М., 1975. |

| 0001/B03 | Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ | 4 կրեդիտ |
|---|---|---|

<table>
<tr><td></td><td>իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն</td><td></td></tr>
<tr><td>4 ժամ</td><td colspan="2">32/32/0</td></tr>
<tr><td>5կիսամյակ</td><td colspan="2">Ստուգարք</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացների նպատակն է ուսանողներին ծանոթացնել ԱԻ-ում (երկրաշարժ, ջրհեղեղ, հրդեհներ, արտադրական և տրանսպորտային վթարներ, թունավոր նյութեր, ճառագայթային ախտահանում և այլն)և պատերազմական պայմաններում պաշտպանվելու ձևերին և մեթոդներին, նաև փրկարարական աշխատանքների ծավալներին, բովանդակությանը և կատարմանը:</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացիավարտինուսանողըկուննենա.<br>Գիտելիք և իմացություն<br>• կարողանա ստեղծված ԱԻ-ում և պատերազմական պայմաններում ժամանակին և ճիշտ իրականացնի պաշտպանվելու ձևերն ու մեթոդները:<br>Ունակ կլինի<br>✓ (բուն մասնագիտական կարողություններ)<br>• ստեղծված ԱԻ-ում և պատերազմական պայմաններում ժամանակին և ճիշտ իրականացնել պաշտպանվելու ձևերն ու մեթոդները:<br>✓ (ընդհանրական կարողություններ)<br>• կարողանա ստեղծված ԱԻ-ում և պատերազմական պայմաններում ժամանակին և ճիշտ իրականացնի պաշտպանվելու ձևերն ու մեթոդները:<br>• կկարողանա էքստրեմալ պայմաններում (երկրաշարժ, թունավոր նյութեր, ճառագայթային ախտահանում, ոսկորների կոտրվածքներ, արյունահոսություն, շոկային իրադրություն, վնասվածքներ)ցուցաբերել առաջին և մինչբժշկական օգնություն:</td></tr>
</table>

*Համառոտ բովանդակություն*

**ԱԻ-ի նախարարության կառուցվածքը և խնդիրները:ԱԻ-ները,նրանց բնութագրերը և կանխարգելման միջոցառումները: Բնակչության գործողությունները ահաբեկությունների և նրանց սպառնալիքի ժամանակ: Հակառակորդի հարձակման ժամանակակից միջոցների բնութագրերը, նրանց վարակման օջախները և գնահատման մեթոդները: Բնակչության պաշտպանության կազմակերպումը ԱԻ-ների և պատերազմի ժամանակ: ԱԻ-ի և պատերազմի ժամանակ բնակչության բարոյահոգեբանական պատրաստվածության հիմնական ուղղությունները: Փրկարարական աշխատանքների կազմակերպումը ԱԻ-ի և պատերազմի ժամանակ, տեղեկատվության կազմակերպումը: Առաջին բուժօգնությունն ու մինչբժշկական օգնությունն ԱԻ-ում:Ախտահարվածների ու հիվանդների բժշկական տեսակավորումը ԱԻ-ների պայմաններում:Սուր հիվանդություններ և թունավորումներ: Հակահամաճարակային միջոցառումներն ԱԻ-ում: Վնասվածքներ և սուր վիրաբուժական հիվանդություններ:**

*Գնահատման մեթոդները և չափանիշները*

Ստուգումը ընթանում է բանավոր՝ հարցաթերթիկներով: Հարցաթերթիկը ներառում է երեք հարց՝ երկուսը տեսական, մեկը գործնական:

*Հիմնական գրականության ցանկը*


1. ՄարկարյանՌ.Վ., ՋանջուղազյանՆ.Ա., ՕհանջանյանՄ.Մ., ՀարությունյանԱ.Ա., ՀարությունյանՎ.Ս., ԲաղդասարյանԼ.Լ., ՀասրաթյանՌ.Ց., ՎարդանյանՋ.Հ. “Քաղպաշտպանությանևարտակարգիրավիճակներիհիմնահարցեր”, Երևանիհամալս. հրատ., 2006:
2. Л.А.Николаев, “Основы защиты от оружия массового поражения”, Минск, “Вышэйшая школа”, 1988.
3. “Это должен знать и уметь каждый”, серия “Гражданская оборона СССР”, М., Воениздат, 1985.
4. В.М.Емельянов, В.Н.Коханов, П.А.Некрасов “Защита населения и

территорий в чрезвычайных ситуацях”, М.: Академический Проект: Трикста, 2005.
5.Աղամյան Մ.Խ., “Փոխադրական անշարժացում”, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2011:
6.Ուսումնական ձեռնարկ բուժքույրերի պատրաստման համար, Երևան, “Լույս” հրատ., 1983:

| | | |
|---|---|---|
| 0105/B04 | Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ | 2 կրեդիտ |
| 2 ժամ | 32/0/0 | |
| 1-ին կիսամյակ | Ստուգարք | |

Դասընթացի նպատակն է հումանիտար մասնագիտություն ընտրած ուսանողների մոտձևավորելբնագիտականաշխարհայացք՝ծանոթացնելովնրանցբնագիտության զարգացմանպատմությանը, բնությանհամակարգերիկազմավորման, կառուցվածքի և զարգացմանօրինաչափություններին, բնագիտության զարգացման ներկա միտումներին:

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

*Գիտելիք և իմացություն*

- բնագիտության զարգացման հիմնական փուլերի, բնագիտության հիմնական սկզբունքների, բնության համակարգերի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաների մասին:

*Ունակ կլինի*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- հասկանալ բնության համակարգերի կառուցվածքի և զարգացման ընդհանուր սկզբունքները և օրինաչափությունները,

| |
|---|
| ✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• կատարել համապատասխան եզրակացություններ բնության առավել ընդհանուր համակարգերի վերաբերյալ: |
| *Համառոտ բովանդակություն*<br>Բնագիտության առարկան: Օրինաչափությունները և զարգացման հիմնական փուլերը: Բնագիտական և հումանիտար մշակույթներ: Դասական թերմոդինամիկայի և վիճակագրական ֆիզիկայի կոնցեպցիաները: Նյութի կառուցվածքի կոնցեպցիաները: Հարաբերականության հատուկ և ընդհանուր սկզբունքները: Միկրոաշխարհի կառուցվածքների և փոխազդեցությունների կոնցեպցիաները: Անորոշությունը աշխարհում: Անորոշությունների առնչություն: Լրացման սկզբունք: Տարրական մասնիկները: Հիմնարար փոխազդեցությունները: Աստղերի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: Մոլորակների կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: Տիեզերքի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: Քվանտային կոսմոլոգիա: Անթրոպային սկզբունք: Կենդանի նյութի ձևերը, հատկությունները և կազմավորման մակարդակները: Էվոլյուցիոն կենսաբանության կոնցեպցիաները: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները*<br>Ստուգարքին տրվում է առավելագույնը 3 հարց, նախապես տրված հարցաշարից: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>11. Գրիգորյան Կ.Վ. և ուրիշներ, Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ , Ուսումնական ձեռնարկ, Եր.: Զանգակ – 97, 2010.<br>12. Канке В.А. Концепции современного естествознания, М.: Логос. 2002.<br>13. Буданов В.Г., Мелехова О.П. Концепции современного естествознания. МГТУГА. 1998. |

14. Дубнищева И.А. Концепции современного естествознания. Новосибирск, ЮКЭА: 1997.
15. Степин В.С., Кузнецова Л.И. Современная научная картина мира. М.: Наука, 1997.
16. Курдюмов С.П., Князева Е.Н. Законы эволюции и самоорганизации сложных систем. М.: Наука, 1994.
17. Миллер Т., Жизнь в окружающей среде, М.: Пангея. 1994.
18. Небел Б. Наука об окружающей среде. Как устроен мир. М.: Мир, 1993


<table>
<tr><td>0105/B04</td><td>Մաթեմատիկայի հիմունքներ</td><td>2կրեդիտ</td></tr>
<tr><td>2 ժամ</td><td colspan="2">32/0/0</td></tr>
<tr><td>1-ինկիսամյակ</td><td colspan="2">Ստուգարք</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացինպատակներիցէմտածողությանզարգացումը, վերացականմտածողությանձևավորումը, հանրակրթականնհանրամատչելիբնույթիխնդիրնե-րիլուծմանհամարկանոններինբանաձևերիիմացությունը:</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացիավարտինուսանողըկունենա.<br>Գիտելիք և իմացություն<br>• կիմանաբազմություններիտեսության, կոորդինատներիմեթոդին, մաթեմա-տիկականմոդելավորմանընդասականհավանականությանըվերաբերողանհրաժեշտդյույթն երը:<br>Ունակ կլինի<br>✓ (բուն մասնագիտական կարողություններ)<br>• Տիրապետելու պարզագույն օրենքների և բանաձևերի<br>✓ (ընդհանրական կարողություններ)<br>• անհրաժեշտության դեպքում կիրառել պարզագույն օրենքներնու բանաձևերը մասնագիտական որոշ հարցերի հետազոտման մեջ:</td></tr>
<tr><td colspan="3">Համառոտ բովանդակություն<br>Բազմությունների ուսումնասիրման տարրերը:Որոշիչներ և մատրիցներ, գծային</td></tr>
</table>

հավասարումների համակարգեր:Կոորդինատների մեթոդը:Մաթեմատիկական մոդելավորում:Հավանականությունների տեսության տարրերը:Մաթեմատիկական վիճակագրության տարրերը:

*Գնահատման մեթոդները և չափանիշները*

Ստուգարքին տրվում է առավելագույնը 3 հարց, նախապես տրված հարցաշարից:

*Հիմնական գրականության ցանկը*

1. Աթաբեկյան Վ. և ուրիշներ, Մաթեմատիկա հումանիտար մասնագիտությունների համար, ԵՊՀ, Երևան, 2004:
2. Тихомиров Н.Б.,Шелехов А.М., Математика, учебный курс для юристов, Москва, Юрайт, 2000.

| | | |
|---|---|---|
| 0303/B01 | ԿՆՀ մորֆոլոգիա և ԲՆԳ ֆիզիոլոգիա | 4 կրեդիտ |
| 4 ժամ | 40/24/0 | |
| I կիսամյակ | Եզրափակիչ գնահատման | |

Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ԿՆՀ-ի կառուցվածքային առանձնահատությունների և գործառույթների, ԲՆԳ-ի հիմնական օրինաչափությունների մասին լիարժեք մասնագիտական պատկերացումներ:

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

*Գիտելիք և իմացություն*

- մարդու նյարդային համակարգի կառուցվածքաձևաբանական հիմքերից և բարձրագույն նյարդային գործունեության մեխանիզմներից,
- մարդու նյարդային համակարգի կառուցվածքի հիմնական սկզբունքներից:

*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- բացատրել ԿՆՀ-ի կառուցվածքը ըստ հիերարխիական մոտեցման:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- վերլուծել առկա խնդիրները և առաջարկել դրանց լուծման եղանակներ:

*Համառոտ բովանդակությունը*

ԿՆՀ-ի ձևաբանության դասընթացի առարկան և խնդիրները: Ողնուղեղի կառուցվածքը: գլխուղեղի կառուցվածքը՝ երկարավուն ուղեղ: Ուղեղիկի կառուցվածքը: Միջին ուղեղի կառուցվածքը: Միջանկյալ ուղեղի կառուցվածքը: Գանգուղեղային նյարդեր: Գլխուղեղի մեծ կիսագնդերի կառուցվածքը: ԲՆԳ ֆիզիոլոգիայի ուսումնասիրության մեթոդոլոգիա: Վարքի ձևերը: Վարքի

**կազմակերպման գործոնները: Պայմանառեֆլեկտոր գործունեության օրինաչափությունները: Պայմանական ռեֆլեքսների գոյացման մեխանիզմները: Հիշողության մեխանիզմները: Ուղեղի ինտեգրատիվ գործունեություն:**

*Գնահատման մեթոդները և չափանիշները.*

- **2 ընթացիկ գրավոր քննություն, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով,**
- **եզրափակիչ բանավոր քննություն՝ 10 միավոր առավելագույն արժեքով, որոնցից 2-ը հատկացվում է դասընթացի շրջանակում հանձնարարված առաջադրանքներին, իսկ 8-ը՝ հարցատոմսի պատասխանին (հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է):**

*Հիմնական գրականության ցանկը*


1. *Սառաֆյան Ա. Ա., Քյալյան Գ. Պ.* Մարդու անատոմիա: Երևան, 1995, էջ 222-225:
2. *Լիսենկով Ն. Կ. և ուր.* Մարդու նորմալ անատոմիայի դասագիրք: Երևան, 1974:
3. *Синельников Р.Д.* Атлас анатомии человека. Учебник. том 3. М., 1981, 2000.
4. *Воронин Л. Г.* Физиология высшей нервной деятельности. М., 1979
5. *Коган А. Б.* Основы физиологии высшей нервной деятельности. М., 1988
6. *Данилова Н. Н., Крылова А. Л.* Физиология высшей нервной деятельности. М., 1989
7. *Батуев А. С.* Высшая нервная деятельность. М., 1991
8. Դասախոսությունների տեքստեր՝ էլեկտրոնային կրիչով


| | | |
|---|---|---|
| **0303/B02** | **Մասնագիտության ներածություն** | **2 կրեդիտ** |
| **2 ժամ** | **32/0/0** | |
| **I կիսամյակ** | **Առանց եզրափակիչ գնահատման** | |

**Դասընթացինպատակնէիրազեկելուսանողինուսումնականգործունեությանառանձ-նահատկություններիմասին, նպաստելհոգեբանությանբնագավառումգիտելիք-ներիձեռքբերմանըևկիրառմանը:**

**Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.**

*Գիտելիք և իմացություն*

- մասնագիտական գործունեությանբովանդակության, առանձնահատկություններիմասին,
- ուսումնական գործունեության տրամաբանության մասին:

*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- պատկերացնել արդի հոգեբանության հիմնադրույթներն հասկացությունները,
- կողմնորոշվելհոգեբանությանտարբերբնագավառներում գիտելիքներիձեռքբերմանուղիներում,

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- կազմակերպելիրուսումնական գործունեությունըինչպեսլսարանայինպայմաններում, այնպեսէլինքնուրույնուսումնականևհետազոտականաշխատանքներում:

*Համառոտ բովանդակություն*

**Հոգեբանությանառարկանևխնդիրները: Հոգեբանուսանողիուսումնական գործունեությանառանձնահատկությունները՝ ուսումնական, հետազոտական, գործնականաշխատանքներիյուրահատկությունները: Հոգեբանու-թյանզարգացմանպատմականանցյալը և ժամանակակից միտումները: Հոգեբանու-թյանմիջառարկայականկապերը: Հոգեբանությանբնագավառները: Հոգեբանական գիտելիքները այլ գիտակարգերում:Հոգեբանի գործունեու-թյանբարոյագիտականհիմունքները:**

*Գնահատման մեթոդները և չափանիշները.*

- **2 ընթացիկ ստուգում՝ բանավոր և գրավոր, յուրաքանչյուրը 9 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0.5 է:**

*Հիմնական գրականության ցանկը*


1. Ավանեսյան Հ. Մ., Հովհաննիսյան Ս. Վ., Հովհաննիսյան Հ. Ռ., Ասրիյան Է. Վ., Հոգեբանություն (դեմ-քեր, փաստեր): Ուսումնամեթոդական ձեռնարկ, ԵՊՀ հրատ., Երևան, 2010թ.:
2. Նալչաջյան Ա. Հոգեբանության հիմունքներ, Երևան, 1998թ.:
3. Алахвердов В.М. Опыт теоретической психологии. – СПб.: 1993
4. Асмолов А. Г. Психология личности: Учебник. – М.: Изд-во МГУ, 1990
5. Естественнонаучные основы психологии. Под ред. А.А. Смирнова, А.Р. Лурия, В.Д. Небылицина. – М.: Педагогика, 1978
6. Годфруа Ш. Что такое психология. Учебник в 2-х т. – М.: Мир, 1996
7. Климов Е. А., Психология как профессия. М.: МГУ, 2009
8. Маклаков А.Г. Общая психология. – СПб. :Питер, 2006. – 583с.
9. Психология/ Учебник. Под ред. А.А. Крылова. – М.: ПБОЮЛ, 2000
10. Психология личности. Хрестоматия в 2-х т./ Под. Ред. Д.Я. Райгородского. – Самара: “Бахрар-М”, 2002
11. Столяренко Л.Д. Основы психологии: Учебное пособие. – Ростов н/Д: Феникс, 2003
12. Хьелл Л., Зиглер Д. Теории личности, СПб.: Питер, 1997
13. Ярошевский М.Г. История психологии от античности до середины XX в. М., 1996

| | | |
|---|---|---|
| **0303/B03** | **Ընդհանուր հոգեբանություն-1** | **6 կրեդիտ** |
| 6 ժամ | 64/0/32 | |
| I կիսամյակ | **Եզրափակիչ գնահատման** | |
| Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել մարդու հոգեկան երևույթների առանցքային օրինաչափություններին և մեխանիզմներին, անձի հոգեկան զարգացմանն ու անհատական առանձնահատկություններին | | |
| Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.<br>*Գիտելիք և իմացություն*<br>▪ կիմանա հոգեբանության ընդհանուր դրույթները, հոգեկան գործընթացների և վիճակների առանձնահատկությունները և ձևավորման հիմնական օրինաչափությունները,<br>▪ կկարողանա կիրառել հոգեբանական իմացությունը իր հետագա գործունեության մեջ, ինչպես նաև հասարակական կյանքում: | | |
| *Համառոտ բովանդակությունը*<br>Ընդհանուր հոգեբանության առարկան, խնդիրներն ու մեթոդները: Հոգեբանության կապը այլ գիտությունների հետ և հիմնական բնագավառները: Հոգեբանության զարգացման պատմական փուլերը: Հոգեկանի կենսաբանական հիմքերը, հոգեֆիզիոլոգիական մեխանիզմները: Հոգեկանը՝ որպես արտացոլում և ապրում, հոգեկանի կառուցվածքը: Հոգեկան ակտիվության մակարդակները: Հոգեբանության հիմնական տեսությունները և ժամանակակից ուղղությունները: Ուշադրություն: Զգայություն: Ըմբռնում /ընկալում/: Հիշողություն: Մտածողություն: Լեզու, խոսք և մտածողություն: | | |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները*<br>*Ընթացիկ քննություններ*<br>Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր | | |

| |
|---|
| առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:<br>*Եզրափակիչ քննություն*<br>Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br><br>1. 1. Լևի Վ., Ինքնատիրապետման արվեստը, Երևան, 1980:<br>2. Կոլոմինսկի Յա. Լ., Մանկական կոլեկտիվի հոգեբանություն, Երևան, 1988:<br>3. Մազմանյան Մ.Ա., Բնավորություն, Երևան, 1969:<br>4. Նալչաջյան Ա.Ա., Ինտուիցիան գիտական ստեղծագործության պրոցեսում, Երևան, 1976:<br>5. Նալչաջյան Ա.Ա., Ազգային հոգեբանություն, Երևան, 1993:<br>6. Նալչաջյան Ա.Ա., Անձ, խմբային սոցիալականացումևհոգեբանական ադապտացիա, Երևան, 1975:<br>7. Նալչաջյան Ա.Ա., Մկրտչյան Մ.Հ., Դրդապատճառ, կոնֆլիկտ, ֆրուստրացիա, Երևան, 1978:<br>8. Նալչաջյան Ա.Ա., Անձն իր երազներում, Երևան, 1972:<br>9. Աեյլե Հ., Սթրես առանց դիսթրեսի, Երևան, 1983:<br>10. Бассин Ф. В. Проблема бессознательного. – М:1968.<br>11. Лурия А. Р. Эволюционное введение в психологию. – М: 1975.<br>12. Ананьев Б.Г. Психология чувственного познания. – М: 1960. |

| 0303/B04 | Հոգեկան գործընթացներիպրակտիկում - 1 | 2 կրեդիտ |
|---|---|---|
| 2 ժամ | 0/0/32 | |
| I կիսամյակ | Առանց եզրափակիչ գնահատման | |

**Դասընթացում ուսումնասիրվում են կոգնիտիվ հոգեկան գործընթացների (հիշողություն, մտածողություն, խոսք և երևակայություն) հոգեբանական ճանաչողության հիմնական մեթոդները:**

---

**Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.**

*Գիտելիք և իմացություն*

- **հոգեկանգործընթացներիհետազոտմաննդիագնոստիկայիհիմնականմեթոդների մասին:**

*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- **ուսումնասիրել, չափել և վերլուծել հիշողության, մտածողության և երևակայության հիմնական առանձնահատկությունները,**
- **կազմել հետազոտական արձանագրություններ, վերլուծել և ներկայացնել դրանք,**

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- **իրականացնել հոգեկանգործընթացներիհետազոտականգործունեություն,**
- **իրականացնել առաջնային տվյալների հավաքագրում և գրագետ առաջնային վերլուծություն:**

---

*Համառոտ բովանդակությունը*

**Հիշողության հոգեբանական ուսումնասիրում.**

- կարճատև հիշողության ծավալի ուսումնասիրում,
- կամածին և ոչ կամածին մտապահման արդյունավետության ուսումնասիրում,
- մտապահման գերակա տեսակի ուսումնասիրում
- հիշողության ուսումնասիրման այլ մեթոդներ:

**Մտածողության և խոսքի հոգեբանական ուսումնասիրում.**

- մտածողության վերլուծականության և ռեֆլեքսիվության ուսումնասիրում,
- մտածողության տեսակների ուսումնասիրում,
- խմբային մտածողության առանձնահատկությունների ուսումնասիրում,
- խոսքի տեմպոռիթմային առանձնահատկությունների և գրավոր խոսքի ուսումնասիրում:

**Երևակայության հոգեբանական ուսումնասիրում.**

- Ստեղծագործական երևակայության և անհատական առանձնահատկությունների ուսումնասիրում:

---

*Գնահատման մեթոդները և չափանիշները.*

- **2 ընթացիկ ստուգում՝ բանավոր և գրավոր, յուրաքանչյուրը9 միավոր առավելագույն արժեքով,որոնցից 4-ը ուսանողը ստանում է դասերի ընթացքում կատարված գործնական աշխատանքների դիմաց, 5-ը՝ ստուգման արդյունքում:**

| |
|---|
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. ՀայրապետյանԴ.Ռ. Իմացականգործընթացներիպրակտիկում (Հիշողություն, մտածողությունլնխոսք, երևակայություն): Ուսումնամեթոդականձեռնարկ / Կազմ. նզլխ. խմբ. Դ. Ռ. Հայրապետյան - Եր.: ԵՊՀհրատ., 2009, - 190 էջ:<br>2. Практикум по общей психологии / В.В. Богословский, Т.И. Бочкарева, А.И. Великородн. Под ред. А.И. Щербакова. – М.: Просвещение, 1979. С.302.<br>3. Практикум по общей психологии: Учеб. пособие для студентов пед. ин-тов / А. И. Абраменко, А.А. Алексеев, В.В. Богословс-кий и др.; Под ред. А,И. Щербакова. 2-е изд. – М.: Просвеще-ние, 1990. С.288.<br>4. Практикум по психодиагностике. Конкретные психодиагности-ческие методики / Ред. колл. А.И. Зеличенко, И.М. Карлинс-кая, В.В. Столин, А.Г. Шмелев. – М.: Изд-во Моск. ун-та, 1989. С. 176.<br>5. Практикум по психодиагностике. Психодиагностика мотивации и саморегуляции / Ред.колл. А.И. Зеличенко, И.М. Карлинская, С.Р. Пантилеев и др. – М.: Изд-во Моск. ун-та, 1990. С.160.<br>6. Практикум по психодиагностике. Психодиагностические мате-риалы / Под ред. А.А. Бодалева, И.М. Карпинской, С.Р. Панти-леева, В.В. Столина. – М.: Изд-во Моск. ун-та, 198<br>7. Практикум по психологии / Под ред. А.Н. Леонтьева, Ю.Б. Гип-пенрейтер. – М.: Изд-во Моск. ун-та. 1972. С.248. |

| | | |
|---|---|---|
| 0303/B05 | Մարդաբանություն և համեմատական հոգեբանություն | 4 կրեդիտ |
| 4 ժամ | 48/16 | |
| II կիսամյակ | Առանց եզրափակիչ գնահատման | |
| Դասընթացինպատակնէծանոթացնելուսանողներինհոգեկանիառաջացմանէվոլյուցիային, տալտեղեկություններգոոհոգեբանությաննէթոլոգիայիհետազոտություններիժամանակակիցնվաճումներիվերլուծություններիևընդհանրացումներիվերաբերյալ: | | |
| Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.<br>*Գիտելիք և իմացություն*<br>▪ համեմատական հոգեբանության և էթոլոգիայի վերաբերյալ,<br>▪ հոգեկանի զարգացման և գործունեության օրինաչափությունների վերաբերյալ՝ սկսած ստորակարգ կենդանիներից մինչև մարդ:<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)* | | |

- համակարգել և ընդհանրացնել կենդանիների հոգեկանի գործունեության վերաբերյալ հետազոտությունների արդյունքները,
- կատարել համեմատական վերլուծություններ հիվանդությունների վերաբերյալ, որոնք փորձարկված են կենդանիների վրա,

*(ընդհանրական կարողություններ)*

- կիրառել գիտելիքները հետագա գիտական հետազոտություններում:

*Համառոտ բովանդակություն*

Մարդաբանության պատմական ակնարկ:Գերմանական փիլիսոփայական մարդաբանություն (Մ.Շելլեր, Ա.Հելեն): Մարդանման կապիկների ընդհանուր բնութագիրը, ռամոպիտեկներ, ավստրալոպիտեկներ՝ արտաքին կառուցվածքը և ապրելակերպը: Կոնստիտուցիոնալ մարդաբանություն: Հոգեկանի էվոլյուցիան և անթրոպոգենեզը: Մարդու հոգեկանի ճանաչման սկզբունքները ըստ Վագների: Հմտությունների հիմնական առանձնահատկությունները: Կենդանիների ագրեսիվ վարք: Կենդանիների հաղորդակցումը: Կենդանիների հաղորդակցումը ուսումնասիրելու մեթոդները: Կենդանիների զգայության և ըմբռնման ուսումնասիրման մեթոդները:

*Գնահատման մեթոդները և չափանիշները.*

- 2 ընթացիկ գրավոր ստուգում, յուրաքանչյուրը 9 միավոր առավելագույն արժեքով:

*Հիմնական գրականության ցանկը*


1. Պապոյան Վ.Ռ. Դասախոսություններ մարդաբանությունից, Երևան 2004
2. Антропология, Хрестоматия, М., 2002
3. Вагнер В.А. Сравнительная психология. Москва – Воронеж, 1998
4. Зорина З.И., Полетаева И.И., Зоопсихология. Экспериментальноемышлениеживотных\\ УчебноепособиепоВНДизоопсихологии. М, 2001
5. Хрисанорова Е.Н., Перевозчиков И.И., Антропология, М. 1999
6. Хомутов А.А. Антропология, М.2002
7. Фабри К.Э. Основы зоопсихологии, Москва 1986
8. Филиппова Г.Г. Зоопсихология и сравнительная психология, Москва, 2004

| | | |
|---|---|---|
| 0303/B06 | Հոգեկան գործընթացների պրակտիկում - 2 | 2 կրեդիտ |
| 2 ժամ | 0/0/32 | |
| II կիսամյակ | Առանց եզրափակիչ գնահատման | |
| Դասընթացում ուսումնասիրվում են կոգնիտիվ հոգեկան գործընթացների (հիշողություն, մտածողություն, խոսք և երևակայություն) հոգեբանական ճանաչողության հիմնական մեթոդները: | | |
| Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.<br>*Գիտելիք և իմացություն*<br>▪ հոգեկանգործընթացներիհետազոտմանդիագնոստիկայիհիմնականմեթոդների մասին:<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>▪ ուսումնասիրել, չափել և վերլուծել հիշողության, մտածողության և երևակայության հիմնական առանձնահատկությունները,<br>▪ կազմել հետազոտական արձանագրություններ, վերլուծել և ներկայացնել դրանք,<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>▪ իրականացնել հոգեկանգործընթացներիհետազոտականգործունեություն,<br>▪ իրականացնել առաջնային տվյալների հավաքագրում և գրագետ առաջնային վերլուծություն: | | |
| *Համառոտ բովանդակությունը*<br>**Հիշողության հոգեբանական ուսումնասիրում.**<br>• կարճատև հիշողության ծավալի ուսումնասիրում,<br>• կամածին և ոչ կամածին մտապահման արդյունավետության ուսումնասիրում,<br>• մտապահման գերակա տեսակի ուսումնասիրում<br>• հիշողության ուսումնասիրման այլ մեթոդներ:<br>**Մտածողության և խոսքի հոգեբանական ուսումնասիրում.**<br>• մտածողության վերլուծականության և ռեֆլեքսիվության ուսումնասիրում,<br>• մտածողության տեսակների ուսումնասիրում,<br>• խմբային մտածողության առանձնահատկությունների ուսումնասիրում,<br>• խոսքի տեմպոռիթմային առանձնահատկությունների և գրավոր խոսքի ուսումնասիրում:<br>**Երևակայության հոգեբանական ուսումնասիրում.**<br>• Ստեղծագործական երևակայության և անհատական առանձնահատկությունների ուսումնասիրում: | | |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները.* | | |

| |
|---|
| ▪ **2 ընթացիկ ստուգում՝ բանավոր և գրավոր, յուրաքանչյուրը9 միավոր առավելագույն արժեքով,որոնցից 4-ը ուսանողը ստանում է դասերի ընթացքում կատարված գործնական աշխատանքների դիմաց, 5-ը՝ ստուգման արդյունքում:** |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>8. ՀայրապետյանԴ.Ռ. Իմացականգործընթացներիպրակտիկում (Հիշողություն, մտածողությունևխոսք, երևակայություն): Ուսումնամեթոդականձեռնարկ / Կազմ. նգլխ. խմբ. Դ. Ռ. Հայրապետյան - Եր.: ԵՊՀհրատ., 2009, - 190 էջ:<br>9. Практикум по общей психологии / В.В. Богословский, Т.И. Бочкарева, А.И. Великородн. Под ред. А.И. Щербакова. – М.: Просвещение, 1979. С.302.<br>10. Практикум по общей психологии: Учеб. пособие для студентов пед. ин-тов / А. И. Абраменко, А.А. Алексеев, В.В. Богословс-кий и др.; Под ред. А,И. Щербакова. 2-е изд. – М.: Просвеще-ние, 1990. С.288.<br>11. Практикум по психодиагностике. Конкретные психодиагности-ческие методики / Ред. колл. А.И. Зеличенко, И.М. Карлинс-кая, В.В. Столин, А.Г. Шмелев. – М.: Изд-во Моск. ун-та, 1989. С. 176.<br>12. Практикум по психодиагностике. Психодиагностика мотивации и саморегуляции / Ред.колл. А.И. Зеличенко, И.М. Карлинская, С.Р. Пантилеев и др. – М.: Изд-во Моск. ун-та, 1990. С.160.<br>13. Практикум по психодиагностике. Психодиагностические мате-риалы / Под ред. А.А. Бодалева, И.М. Карпинской, С.Р. Панти-леева, В.В. Столина. – М.: Изд-во Моск. ун-та, 198<br>14. Практикум по психологии / Под ред. А.Н. Леонтьева, Ю.Б. Гип-пенрейтер. – М.: Изд-во Моск. ун-та. 1972. С.248. |

| **0303/B07** | **Ընդհանուր հոգեբանություն-2** | **6 կրեդիտ** |
|---|---|---|
| 6 ժամ | 64/0/32 | |
| I I կիսամյակ | **Եզրափակիչ գնահատման** | |
| Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել մարդու հոգեկան երևույթների առանցքային օրինաչափություններին և մեխանիզմներին, անձի հոգեկան զարգացմանն ու | | |

անհատական առանձնահատկություններին:

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

*Գիտելիք և իմացություն*

- կիմանա հոգեբանության ընդհանուր դրույթները, հոգեկան գործընթացների և վիճակների առանձնահատկությունները և ձևավորման հիմնական օրինաչափությունները,
- կկարողանա կիրառել հոգեբանական իմացությունը իր հետագա գործունեության մեջ, ինչպես նաև հասարակական կյանքում:

*Համառոտ բովանդակություն*

Երևակայություն: Հույզեր և զգացմունքներ: Կամք: Գործունեություն: Հաղորդակցում: Անձնավորություն: Խառնվածք: Բնավորություն: Ինտելեկտ և ընդունակություններ:

*Գնահատման մեթոդները և չափանիշները*

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

*Հիմնական գրականության ցանկը*


1. Восприятие деятельности. Под ред. А.Н. Леонтьева. – М:1983.
2. Лурия А.Р. Ощущения и восприятия. – М: 1975.
3. Зинченко П. И. Непроизвольное запоминание. – М: 1961.
4. Лурия А.Р. Маленькая книжка о большой памяти. – М: 1968.
5. Рубинштейн h.Л. Основы общей психологии: Ә 2-х т. М., Наука, 1982
6.. Современная психология /Под ред. В.Н.Дружинина. М., 1999 24
7. “Общая психология”. Под. ред. В. В. Богословского и др., М. 1981.
8.. “Общая психология”. Под. ред. В. В. Петровского, М:, 1986.
9.Маклаков А.Г. Общая психология. hՈվԱՑ-կպՑպՐոցՐչ: կՌՑպՐ. 2008
10. Немов Р.С. Психология. Кн. 1 М., 1997.

11.Психология. /Под ред. А.А. Крылова. Москва.: Проспект, 2008
12.Психология человека: от рождения до смерти./կՏՊ ՐպՊ. ՀպՈվՈ Ը.Ը.. Cկn. Ծ., 2001.

| | | |
|---|---|---|
| **0303/B08** | **Տեսական մանկավարժություն** | **4 կրեդիտ** |
| 4 ժամ | 48/0/16 | |
| I I կիսամյակ | **Եզրափակիչ գնահատման** | |

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել մանկավարժություն գիտության ժամանակակից հիմնախնդիրները, նրա զարգացումը՝ գիտական հարացույցների հիմքի վրա, և ցույց տալ մանկավարժություն գիտության տեղն ու դերը մարդուն ուսումնասիրող գիտությունների շարքում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը

1. կիմանա մանկավարժության ժամանակակից տեսությունները, ճյուղերը, հիմնական հասկացությունները, ուսուցման և դաստիարակության դերը մարդու անձի ձևավորման և զարգացման գործընթացում, ՀՀ կրթության համակարգի արդի բարեփոխումները, ուսուցման նոր տեսակները (աշակերտակենտրոն և ուսանողակենտրոն), ուսուցման կազմակերպման նոր ձևերն ու մեթոդները, կրթության կառավարման հիմնահարցերը,
2. կհասկանա մանկավարժություն գիտության տեղն ու դերը մարդու անձի սոցիալականացման համատեքստում,
3. կկարողանա տեսական գիտելիքները կիրառել գործնականում:

*Համառոտ բովանդակությունը*

Մանկավարժության ընդհանուր հիմունքներ: Մանկավարժական գիտությունների

համակարգը, կապն այլ գիտությունների հետ, ուսումնասիրու-թյան օբյեկտը, առարկան, հետազոտության մեթոդները: Մանկավար-ժական մտքի պատմական զարգացումը, կրթական գործը սփյուռքում: Դաստիարակության հիմունքներ. անձի ձևավորումը, գործոնները, զարգացումն ու դաստիարակությունը: Դաստիարակության սկզբունքները, մեթոդները, բա-ղադրիչները: Դիդակտիկայի հիմունքներ: Կրթության բովանդակությու-նը, ուսուցման գործընթացի էությունը, սկզբունքները, մեթոդները, կազմակերպ-ման ձևերը: Գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումն ու գնահատումը: Կրթության կառավարում: ՀՀ կրթության համակարգը, կառավարումը և բարեփոխումները:

*Գնահատման մեթոդները և չափանիշները*

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրա-քանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց՝ համապատասխանաբար 3, 3, 2, 2 արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Հիմնական գրականության ցանկը*


Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Երևան, 1980թ.:

2. Ալեքսանդրյան Է., Նախադպրոցական մանկավարժություն, Երևան, 1989թ.:

3. Խուդոյան Ս., Անձի զարգացման ճգնաժամային տարիներ, Երևան, 2001թ.:

4. Կրուտեցկի Վ.Ա., Մանկավարժության հոգեբանության հիմունքներ, Երևան, 1976թ.:

5. Ամիրջանյան Յու, Սահակյան Ա., Մանկավարժություն, Երևան, 2001թ.:

6. Ղուցումչյան Գ., Մանկավարժություն, գիրք 1, 2, Երևան, 2005թ.:

7. Մանկավարժություն, (Բանանսկու խմբ.), Երևան, 1986, 87թ., գիրք 1,2:

8. Подласыи И. П., Педагогика, М., 2000г.:

<table>
<tr><td>0303/B09</td><td>Հոգեբանության պատմություն</td><td>4 կրեդիտ</td></tr>
<tr><td>4 ժամ</td><td colspan="2">48/0/16</td></tr>
<tr><td>III կիսամյակ</td><td colspan="2">Եզրափակիչ գնահատման</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացինպատակնէներկայացնելհոգեբանական գաղափարներիընդհա-<br>նուրտեսությանմշակմաներկարաձիգ ճանապարհը, սկսածհոգեկանիմա-<br>սինառաջին գիտականպատկերացումներիցմինչևժամանակակիցհոգեբա-<br>նությանվերջիննվաճումները:</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.<br>Գիտելիք և իմացություն<br>▪ հոգեկանիրականությանվերաբերյալ,<br>▪ գիտությանտրամաբանությանվերաբերյալ, որնունիոչմիայնտեսական, այլև գործնականիմաստ:<br>Ունակ կլինի.<br>✓ (բուն մասնագիտական կարողություններ)<br>▪ կկարողանա կատարել հոգեկանի մասին գիտական պատկերացումների համեմատական վերլուծություն:<br>✓ (ընդհանրական կարողություններ)</td></tr>
</table>

- **կկողմնորոշվի հոգեբանության պատմության տեսությունների, ուղղությունների և մոտեցումների մեջ:**

*Համառոտ բովանդակությունը*

Հոգեբանական գիտելիքներիզարգացումըհոգումասինուսմունքիշրջանակ-ներում:Հոգեբանական գիտելիքներիզարգացումը գիտակցությանմա-սինփիլիսոփայականուսմունքներիշրջանակներում: Գիտակցությանմասին գիտությանզարգացումըմինչևէքսպերիմենտալհոգեբանությանձևավորումը: Վարքիմասին գիտությանզարգացումըմինչևէքսպերիմենտալհոգեբանու-թյանձևավորումը: Հոգեբանությանառանձնացումըորպեսինքնուրույն գիտու-թյուննրազարգացումըմինչևբացճգնաժամիժամանակաշրջան: Բացճգնաժամիժա-մանակաշրջանիհոգեբանությունը: Խորհրդայինհոգե-բանությանկազմավորումընզարգացմանտենդենցները:Արտասահման-յանհոգեբանությանարդիվիճակը: Հայաստանի հոգեբանության զարգացման արդի վիճակը:

*Գնահատման մեթոդները և չափանիշները.*

- **2 ընթացիկ գրավոր քննություն, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով,**
- **եզրափակիչ բանավոր քննություն՝ 10 միավոր առավելագույն արժեքով, որոնցից 2-ը հատկացվում է դասընթացի շրջանակում հանձնարարված առաջադրանքներին, իսկ 8-ը՝ հարցատոմսի պատասխանին (հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է):**

*Հիմնական գրականության ցանկը*

1. Նալչաջյան Ա, Թութունջյան Հ., Հոգեբանության մտքի զարգացումը Հայաստանում: Երևան, 1997
2. Аристотель. ОДуше., М.,1937
3. ВыготскийЛ. Историческийсмыслпсихологическогокризиса (Собр. соч. в 6 т.), М., 1982
4. ГриншпунИ.Б. Введениевпсихологию., М. 1997
5. ЖданА.Н. Историяпсихологии. Отантичностидонашихдней., М., Изд-воМосковскогоуни-та, 1990

6. ПиажеЖ. Избранныепсихологическиетруды., М., 1969
7. Рубинштейн С. Принципы и пути развития психологии, М., 1959
8. Фрейд З. Психология бессознательного, М., 1989
9. Ярошевский М. История психологии, М., 1985

| 0303/B10 | Հոգեֆիզիոլոգիա | 6 կրեդիտ |
|---|---|---|
| 4 ժամ | 48/16/0 | |
| III կիսամյակ | Եզրափակիչ գնահատման | |

Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել հոգեկան գործընթացների ֆիզիոլոգիական օրինաչափությունների, հոգեֆիզիոլոգիական տարբեր դպրոցների կողմից ընդունված տեսությունների և հայեցակարգերի մասին լիարժեք մասնագիտական պատկերացումներ:

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

*Գիտելիք և իմացություն*

- հոգեֆիզիոլոգիական գիտության տեսական խնդրացանկից,
- հոգեկան գործընթացների ուղեղային ապահովման մեխանիզմներից:

*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- բացատրել հիմնական հոգեկան գործընթացների ձևավորման և զարգացման նյարդաֆիզիոլոգիական հիմքերը,
- օգտագործել հոգեֆիզիոլոգիական ցուցանիշների գրանցման մեթոդները,

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- վերլուծել առկա խնդիրները և առաջարկել դրանց լուծման եղանակներ,
- կատարել հետազոտական աշխատանք հոգեֆիզիոլոգիայի հայացակարգերին հիմնվելով:

*Համառոտ բովանդակություն*

Հոգեֆիզիոլոգիայի առարկան, ուսումնասիրության մեթոդները և խնդիրները: Հոգեֆիզիոլոգիական ցուցանիշների գրանցման մեթոդները: Գիտակցված վարքի ապահովման գործառնական բլոկեր: Ընկալման հոգեֆիզիոլոգիա: Շարժումների և գործողությունների հոգեֆիզիոլոգիա: Ուշադրության և հիշողության

| |
|---|
| **հոգեֆիզիոլոգիա: Մտածողության հոգեֆիզիոլոգիա: Գիտակցության և քնի հոգեֆիզիոլոգիա: Գործառնական միջկիսագնդային անզուգաչափություն: Սթրեսի հոգեֆիզիոլոգիա:** |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները.*<br>▪ **2 ընթացիկ գրավոր քննություն, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով,**<br>▪ **եզրափակիչ բանավոր քննություն՝ 10 միավոր առավելագույն արժեքով, որոնցից 2-ը հատկացվում է դասընթացի շրջանակում հանձնարարված առաջադրանքներին, իսկ 8-ը՝ հարցատոմսի պատասխանին (հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է):** |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. Գրիգորյան Վ. Հ. Հոգեֆիզիոլոգիա. Եր.: Երևանի համալս. հրատ., 2007, 366 էջ<br>2. Основы психофизиологии / отв. ред. Ю. И. Александров. 3-е изд. М.-СПб, 2004: 456 с.<br>3. Данилова Н.Н. Психофизиология: Учебник для вузов. - М.: Аспект Пресс, 2004. 368 с.<br>4. Лурия А. Р. Основы нейропсихологии. М., Изд-во Академия. 2006. 381с.<br>5. Хессет Дж. Введение в психофизиологию. М., 1981<br>6. Блум Ф., Лейзерсон А., Хофстедтер Л. Мозг, разум и поведение. Пер. с англ.- М.: Мир., 1988, 248с<br>7. Бианки В. Л. Механизмы парного мозга. Л.: Наука, 1989. 264 с.<br>8. Доброхотова Т. А., Брагина Н. Н. Левши. М.: Книга лтд., 1994, 232 с.<br>9. Դասախոսությունների տեքստեր՝ էլեկտրոնային կրիչով |

| **0303/B11** | **Անձի հոգեբանություն** | **4 կրեդիտ** |
|---|---|---|
| **Շաբաթական 4 ժամ** | **48/16/0** | |
| **III կիսամյակ** | **Եզրափակիչ գնահատման** | |
| **Դասընթացն նպատակն** էանձի հոգեբանության հիմնահարցերի և հիմնական հասկացությունների հետ ուսանողների ծանոթացումը, անձի կառուցվածքի, զարգացման, առողջության և անձի ուսումնասիրման մեթոդաբանության վերաբերյալ ամբողջական գիտելիքի ձևավորումը, անձի վերաբերյալ դասական և նոր հոգեբանական մոտեցումների յուրացումը: | | |

**Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.**

*Գիտելիք և իմացություն*

- անձի հոգեբանության առարկայի և պատմության և ուսումնասիրման հիմնական ուղղությունների մասին,
- անձի հոգեբանության հիմնական գիտական հասկացություններից, ժամանակակից տերմինաբանությունից,
- անձի ուսումնասիրման անհրաժեշտ մեթոդաբանական հիմքերից,
- անձի կառուցվածքի և ինքնագիտակցության վերաբերյալ,
- անձի զարգացման սոցիալ-հոգեբանական օրինաչափությունների և դետերմինանտների մասին,
- անձի դրդապատճառապահանջմունքային ոլորտի և դրա ձևավորման առանձնահատկությունների մասին,
- անձի արժեհամակարգի կայացման օրինաչափությունների վերաբերյալ,
- անձի հոգեկան առողջության և պաթոլոգիայի չափանիշների հարցերի մասին:

*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- Անձի հոգեբանության դիրքերից մեկնաբանել մարդկանց հոգեկան հատկանիշները, խնդիրները, վարքագծի և շփման առանձնահատկությունները:
- Առաջ քաշել անձի հոգեբանության տեսակետից կիրառական նշանակություն ունեցող հետազոտական խնդիրներ և ընտրել դրանք ուսումնասիրելու համապատասխան մեթոդներ ու մեթոդիկաներ:
- Վերլուծել անձի հոգեբանությանն առնչվող գրականություն և դրանք ըստ համապատասխանության ինքնուրույն կիրառել անհատական աշխատանքներում (օրինակ՝ կուրսային աշխատանքում):

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- Համագործակցել և թիմային աշխատել՝ խմբային հանձնարարությունների իրականացման միջոցով,
- Պատրաստել և ներկայացնել թեմատիկ անհատական և խմբային զեկուցումներ՝ համակարգչային power point ծրագրով,
- Իրականացնել մասնագիտական և հասարակագիտական այլ նյութերի համեմատական

| |
|---|
| վերլուծություն: |
| ***Համառոտ բովանդակությունը*** <br> Ներածություն. անձի հոգեբանության հիմնահարցերը և մեթոդաբանությունը: Անձի հոգեբանության կապը հոգեբանության այլ բնագավառների հետ: Անձի ուսումնասիրման մեթոդներ: Համակարգային մոտեցումն անձին, անձի ուսումնասիրման համակարգային-գործունեական մոտեցման սկզբունքները: Գործունեական մոտեցում անձին: Անձի զարգացման հիմնարարցը. զարգացման դետերմինացիան, պայմանները և գործոնները: Անձի զարգացման առանձնահատկությունները և փուլերը: Լ.Ս. Վիգոտսկու պատմամշակութային մոտեցումն անձին: Անձի հոգեբանական կառուցվածքը: Հասկացություն անձի ինքնագիտակցության և ես-կոնցեպցիայի մասին: Անձ և շփում/անձ և միջանձնային հարաբերություններ: Անձի հոգեկան առողջության չափանիշները և մակարդակները (Բրատուսի հայեցակարգի քննարկում): Անձի դրդապատճառապահանջմունքային ոլորտ. դրդապատճառների դասակարգումը, կապը պահանջմունքների և նպատակադրման հետ, դրդապատճառների հիերարքիկ համակարգը: Հասկացություն անձի արժեքային և իմաստային ոլորտների մասին: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները.*** <br> • մասնակցություն՝ 2 միավոր առավելագույն արժեքով, <br> • 2 գրավորընթացիկքննություն, յուրաքանչյուրը՝ 4 միավորառավելագույնարժեքով, <br> • եզրափակիչբանավորքննություն՝10միավորառավելագույնարժեքով, (հարցատոմսըպարունակումէ4 հարց, առաջին երկու հարցը՝ 3 միավոր, իսկ երրորդևչորրորդ հարցերը՝ 2-ականմիավոր: |
| ***Հիմնական գրականության ցանկը.*** <br> 1. Абульханова-Славская К.А. Психология и сознание личности. М.:Мысль,1999 <br> 2. Ананьев Б.Г. Человек как предмет познания. СПб,: Питер,2001 <br> 3. Братусь Б.С. Аномалии личности. М.,1988 <br> 4. Выготский Л.С. Собр.соч в 6-ти т.,М., 1982 <br> 5. Ильин Е.П. Мотивация и мотивы. СПб.:Питер, 2000 <br> 6. Леонтьев А.Н. Деятельность. Сознание. Личность. М., 1977 <br> 7. Платонов К.К. Структура и развитие личности. М.: Наука 1986 <br> 8. Психология личности./ Под ред. П.Н. Ермакова, В.А. Лабунской. М.,Изд. «Эксмо», 2008 |

9. Рубинштейн С.Л. Основы общей психологии. СПб,: Питер,2009
10. Серый А.В., Яницкий М.С. Ценностно-смысловая сфера личности. Кемерово, КГУ, 1999
11. Слотина Т.В. Психология личности. СПб,: Питер, 2008
12. Хекхаузен Х. Мотивация и деятельность. М.: Педагогика, 1988
13. Хьелл Л, Зиглер Д. Теории личности. СПб.:Питер, 2000

| | | |
|---|---|---|
| *0303/B12.* | **Դիֆերենցիալ հոգեբանություն և պրակտիկում** | **6 կրեդիտ** |
| **Շաբաթական 6 ժամ** | **40/24/32** | |
| **III կիսամյակ** | **Եզրափակիչ գնահատման** | |

**Դասընթացի նպատակն է** դիֆերենցիալհոգեբանությանմեթոդաբանության, անհատականությանկառուցվածքիևանհատականտարբերություններիվերաբերյալգիտելիքներիձևավորումը:

**Դասընթացի ավարտին ուսանողը կունենա**

*Գիտելիք և իմացություն*

- դիֆերենցիալհոգեբանությանձևավորմանևժամանակակիցմեթոդաբանականուղղություններիմասին
- անհատականությանկառուցվածքիմասին՝հիմնվածտարբերտեսություններիվրա
- անհատականտարբերություններիմասին՝հիմնվածանձնայինգծերիևտիպերիտարբերակմանվրա

*Ունակ կլինի*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- գնահատել անձնային գծերի արտահայտվածությունը
- տարբերակելխառնվածքիևբնավորությանգծերըևտիպերը
- վերլուծելառանձինբաղադրիչներիփոխհարաբերակցությունըանհատականությանկառուցվածքում

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- վերլուծել անհատական տարբերություններին ուղղված հետազոտական ծրագրեր
- ներկայացնել ինքնուրույն աշխատանքների տվյալները՝ հիմնված անձնային գծերի գնահատման վրա

***Համառոտ բովանդակությունը.***

| |
|---|
| Դիֆերենցիալ հոգեբանության զարգացումը, մեթոդները և ուսումնասիրման ուղղությունները: Անհատականության կառուցվածքը. բաղադրիչները և մակարդակները: Խառնվածքի ուսումնասիրման ուղղությունները. հումորալ, կոնսիտուցիոնալ, գործոնային, նեյրոֆիզիոլոգիական: Խառնվածքի տեսություններ (Տեպլով, Մեռլին, Ռուսալով, Ստրելյաու): Լոնգիտյուդ և հոգեգենետիկ ուսումնասիրություններ: Բնավորություն և անձ: Բնավորության կառուցվածքը, գծերը: Բնավորության ակցենտուացիաները (Լեոնհարդ, Լիչկո): Ընդունակությունները որպես անձնային առանձնահատկություններ: Ընդունակությունների դասակարգումը: Ընդունակությունների վաղ զարգացում և օժտվածություն: Ընդունակությունների զարգացման մակարդակները. օժտվածություն, տաղանդ, հանճար: Ընդունակություններ և գործունեության անհատական ոճ: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները.***<br>▪ 2 ընթացիկգրավորքննություն, յուրաքանչյուրը՝ 4 միավորառավելագույնարժեքով,<br>▪ եզրափակիչբանավորքննություն՝ 10 միավորառավելագույնարժեքով: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>5. Нартова-Бочавер С.К. Дифференциальная психология<br>6. Либин А.В. Дифференциальная психология: на пересечении европейских, российских и американских традиций. Издательство: Москва. "Смысл" Год: 1999<br>7. Гиппенрейтер Ю.Б., Романов В.Я. Психология индивидуальных различий: хрестоматия, 2006<br>8. Купер К. Индивидуальные различия Год издания: 2000 |

| | | |
|---|---|---|
| ***0303/B14.*** | **Անձիտեսություններ** | **4 կրեդիտ** |
| **Շաբաթական 4 ժամ** | **48/16/0** | |
| **IV կիսամյակ** | **Եզրափակիչ գնահատման** | |
| **Դասընթացնուղղված է** անձի տեսությունների հիմնական հասկացությունների և հայեցակարգերի վերաբերյալ իմացության ձևավորմանը: | | |
| **Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.**<br>*Գիտելիք և իմացություն* | | |

- Անձի տեսության գործառույթների, գնահատման չափանիշների և բաղադրիչների վերաբերյալ:
- Անձի տեսությունների տարբեր ուղղությունների հիմնադրույթների վերաբերյալ:
- Հոգեվերլուծական, բիհեվիորիստական, սոցիալ-կոգնիտիվիստական և հումանիստական տեսությունների հիմնական հասկացությունների և դրանց կիրառական նշանակության վերաբերյալ:

*Ունակ կլինի*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*
- Վերլուծել տարբեր տեսությունների զարգացման նախադրյալները, մշակութային համատեքստը և տարբեր տեսությունների հիմքում ընկած մարդու բնույթի վերաբերյալ արժեքային պատկերացումները:
- Վերլուծել առանձին տեսություններ ըստ գնահատման չափանիշների:
- Համեմատել տարբեր տեսությունների հիմնադրույթները և հասկացությունները:
- Կիրառել տեսության հիմնադրույթը անձի հոգեբանական առանձնահատկությունը վերլուծելու և հասկանալու համար:

✓ *(ընդհանրական կարողություններ)*
- Վերլուծել միևնույն հոգեբանական երևույթը տարբեր տեսությունների հիմնադրույթների և հասկացությունների համատեքստում:
- Քննադատական վերլուծության ենթարկել տեսությունների հիմնադրույթները:
- Մասնակցել անհատական ներկայացման և խմբային քննարկումներին:

***Համառոտ բովանդակություն.***

Անձի տեսություն, տեսության գործառույթներ և գնահատման չափնիշներ:

Հոգեվերլուծության հիմնադրույթները: Հոգեկանապարատի տոպոգրաֆիկ և կառուցվածքային մոդելները /Ֆրոյդ/: Զարգցացման հոգեսեռական փուլեր: Էդիպյանբարդույթիէությունը: Պաշտպանական մեխանիզմներ: Անալիտիկ հոգեբանության հիմնադրույթները /Յունգ/: Հասկացություն կոլեկտիվ անգիտակցական. արքետիպ և սիմվոլ: Անձի կառուցվածք. հիմնական արքետիպերը: Անձի զարգացում /ինդիվիդուացիա/: Անձիտիպաբանություն. էգո-

| |
|---|
| ուղղվածություններևհոգեկանֆունկցիաներ: Անհատական հոգեբանության հիմնադրույթներ /Ադլեր/: Թերարժեքության զգացում և փոխհատուցում, գերազանցության ձգտում: Կյանքի ոճ հասկացությունը: Սոցիալական զգացում և ստեղծագործական «Ես»: Նեոհոգեվերլուծության ուղղությունները և հիմնադրույթները. էգո-հոգեբանություն /Էրիքսոն/, մշակութային հոգեվերլուծություն /Հորնի, Ֆրոմ/: Բիհեվիորիստականհոգեբանությանհիմնադրույթները: Սոցիալականուսուցման տսության հասկացությունները /Սկիներ/: Ռեսպոնդենտ և օպերանտ վարք: Վարքիամրապնդումևամրապնդման ռեժիմներ: Վարքիվերահսկումևփոփոխություն Սոցիալ-կոգնիտիվստականտեսությանհիմնադրույթները /Բանդուրա/: Ամրապնդում դիտման միջոցով, անուղղակի ամրապնդում և ինքնաամրապնդում: Ես-համակարգ. ինքնակարգավորման մեխանիզմներ Հումանիստականհոգեբանությանհիմնադրույթները: Պահանջմունքների հիերարխիա և մետապահանջմունքներ: Պատկերացում դեֆիցիտար և աճի պահանջմունքների մասին /Մասլոու/: Ֆենոմենոլոգիական դաշտ և ինքնիրացման ձգտում /Ռոջերս/: Ես-կոնցեպցիաևԵս-կոնցեպցիայիզարգացում: Լիարժեքգործողմարդուբնութագրեր: Պրոպրիում, զարգացման փուլերը /Օլպորտ/: Ֆունկցիոնալավտոնոմիայիհասկացությունը /Օլպորտ/: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները.***<br>▪ մասնակցություն՝ 2 միավոր առավելագույն արժեքով,<br>▪ 2 ընթացիկ գրավոր քննություն, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով,<br>▪ եզրափակիչ բանավոր քննություն՝ 10 միավոր առավելագույն արժեքով, որոնցից 2-ը հատկացվում է դասընթացի շրջանակում հանձնարարված առաջադրանքներին և խմբային նախագծին, իսկ 6-ը՝ հարցատոմսի պատասխանին (հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուրը՝ 3 միավոր): |
| ***Հիմնական գրականության ցանկը.***<br>1. Хьелл Л., Зиглер Д., Теории личности.- СПб.: Питер, 2004.-607с. |

2. Фрейджер Р., Фейдимен Д. Личность. Теории, упражнения, эксперименты. – СПб., 2004
3. Холл Г., Линдсей К. Теории личности.М., 1997
4. Психология личности. Хрестоматия в 2-х томах / Под ред. Райгородского, М., 2002

<table>
<tr><td>0303/B13</td><td>Ընտանիքի հոգեբանության հիմնահարցեր</td><td>4 կրեդիտ</td></tr>
<tr><td>Շաբաթական 4 ժամ</td><td colspan="2">(40/24/0)</td></tr>
<tr><td>IV կիսամյակ</td><td colspan="2">Եզրափակիչ գնահատման</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացի նպատակն է՝<br>Ուսանողինտալհիմնարարգիտելիքներընտանիքիծագմաննզարգացմանօրինաչափ ությունների,<br>ամուսիններիդերաֆունցիոնալընկալումներիևհարաբերություններիմասին:</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացի ավարտին ուսանողը կունենա<br>Գիտելիք և իմացություն<br>▪ ընտանիքի կառուցվածքի և ֆունկցիաների մասին,<br>▪ կիմանա ամուսինների համատեղելիության ոլորտները, հարաբերությունների համակարգը:<br>Ունակ կլինի.<br>✓ (բուն մասնագիտական կարողություններ)<br>▪ վերլուծել ընտանիքում առաջացած կոնֆլիկտների պատճառները,<br>▪ գտնել կոնֆլիկտների լուծման ուղիներ,<br>▪ բացահայտել այն խոչընդոտները, որոնք ազդում են բավարարվածության վրա ամուսնական կյանքում,<br>▪ պարզաբանել հոգևոր և ինտիմ կյանքի փոխկապակցվածության խնդիրը,<br>✓ (ընդհանրական կարողություններ)<br>▪ ապահովել ընտանիքի առողջ և բարեկեցիկ մթնոլորտ:</td></tr>
</table>

| |
|---|
| *Համառոտ բովանդակությունը*<br>Ընտանիքի կարևորագույն հատկությունները. բարեկեցիկ կյանք, ամուսինների մտերմություն, երեխայի ծնունդ: Կոնֆլիկտներ, դրանց պատճառները և լուծման ուղիները: Ընտանիքի դերաֆունկցիոնալ խնդիրները: Երջանիկ կյանքի ձևավորում: Ընտանիքի ազգային բնութագիրը. զարգացման միտումներ, երիտասարդ սերնդի պատկերացումների փոփոխությունը ապագա ընտանիքի վերաբերյալ: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները.*<br>▪ 2 ընթացիկ գրավոր քննություն, յուրաքանչյուրը` 4 միավոր առավելագույն արժեքով,<br>▪ եզրափակիչ բանավոր քննություն` 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցումըպարունակումէ 4 հարց, համապատասխանաբար 2,2,3,3 բալերով (Միավորների քայլը 0.5 է): |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. ЕлизаровА. Н. Психологическоеконсультирваниесемьи. “Ось 89” 2004<br>2. КарабановаО.А. – Психологиясемейныхотношенийиосновысемейногоконсультирования. М., 2005г.<br>3. РайгородскийД. Я. Психологиясемьи. “Самара” 2002.<br>4. ШнейдерЛ.Б. Психологиясемейныхотношений. М. 2008.<br>5. ЭйдемиллерЭ.Г. ДобряковН. В. Семейнаяпсихотерапия.Санкт-Петербург 2006. |

| | | |
|---|---|---|
| **0303/B15** | **Հուզակամային ոլորտի հոգեբանություն և պրակտիկում** | **6 կրեդիտ** |
| **6 ժամ** | **(48/0/16/32)** | |
| **IV կիսամյակ** | **Եզրափակիչ գնահատման** | |
| **Դասընթացի նպատակն է ուսանողին** | | |

խորըտեսականնպրակտիկգիտելիքներտալհուզակամայինոլորտիառանձնահատկություններիմասին:

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա

*Գիտելիք և իմացություն*

- հույզերի, հուզական վիճակների, զգացմունքների, կամքի առկա գիտական հայեցակարգերի մասին,
- հույզերի, հուզական վիճակների, կամքի հիմնական հոգեբանական, հոգեֆիզիոլոգիական, սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների և օրինաչափությունների մասին:

*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- ախտորոշել համապատասխան հուզական երևույթներն ու վիճակները,
- հոգեբանական շտկողական և խորհրդատվական աշխատանք կազմակերպել նշված ոլորտում,
- համապատասխան մեթոդիկաների միջոցով հետազոտել հուզակամային ոլորտի դրսևորման առանձնահատկությունները:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- տարբերակել տարբեր հույզերը, հուզական վիճակները և հոգեբանական վերլուծության ենթարկել դրանք,
- տարբերակել կամային տարբեր հատկությունները և դրանց զարգացման միտումները:

*Համառոտ բովանդակություն*

Առարկան ընգրկում է հույզերի և կամքի մասին առկա հիմնական գիտական հայեցակարգերի և տեսություններիվերլուծություն: Վերլուծվող հասկացությունների ֆիզիոլոգիական, նյարդամկանային և ֆենոմենոլոգիական առանձնահատկությունների քննարկում: Նշված ոլորտի ախտորոշման հիմնական մեթոդների կիրառման հնարավորության ուսուցանում, ինչպես նաև հուզակամա-յին ոլորտի շտկողական և խորհրդատվական որոշ առանձնահատկությունների կիրառման առանձնահատկոյունները:

*Գնահատման մեթոդները և չափանիշները.*

- **2 ընթացիկ գրավոր քննություն, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:**
- **եզրափակիչ բանավոր քննություն՝ 10 միավոր առավելագույն արժեքով, հարցատոմսը պարունակում է 3 հարց, որոնցիցերկուսը 3 միավորնմեկը 4 միավոր:**

*Հիմնական գրականության ցանկը*


9. Вилюнас В. Психология эмоций. – СПб.: Питер, 2008. – 496 с.
10. Изард К.Э. Психология эмоций. – СПб.:Питер, 2008. – 464 с.
11. Ильин Е.П. Психология воли. – СПб.:Питер, 2002. – 288 с.
12. Психология состояний. Хрестоматия / Составители Т.Н. Васильева, Г.Ш. габдреева, А.О. Прохоров / Под ред. Проф. А.О. Прохорова. – М.: ПЕР СЭ ; СПб.: Речь, 2004. – 608 с.
13. Френкель Я. Психология страха. – М.: Профит Стайл, 2010. – 272 с.


| **0303/B16** | **էթնոհոգեբանություն** | **4 կրեդիտ** |
|---|---|---|
| 4 ժամ | 40/0 /24/ | |
| IV կիսամյակ | **Առանց եզրափակիչ. գնահատման** | |

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին էթնիկականհոգեբանության հետ, սովորեցնելառարկայիուսումնասիրությանխնդիրներնուգործընթացները:

**Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.**

*Գիտելիք և իմացություն*

1. էթնոսի կառուցվածքը
2. էթնոսի տեսակները և զարգացման փուլերը
3. էթնիկական նույնականացումը
4. էթնիկական կարծրատիպերը
5. էթնիկական գիտակցությունը և անգիտակցականը ու նրանց կառուցվածքը
6. էթնիկականհանդուրժողականությունը
7. Տարբեր էթնոսների հոգեբանական նկարագրերը*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

1. Ուսումնասիրել ու վերլուծել էթնիկական բնույթի խնդիրները

| |
|---|
| ✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>▪ վերլուծել առկա խնդիրները և առաջարկել դրանց լուծման եղանակներ |
| *Համառոտ բովանդակությունը*<br>էթնոհոգեբանության առարկան, խնդիրները, մեթոդները; էթնոհոգեբանության հիմնադրույթները; <<Ազգ>>, <<էթնոս>>, <<էթնիկական գիտակցություն>>, <<էթնիկական հանդուրժողականություն>>, <<ազգային մենտալիտետ>> հասկացությունների վերլուծություն; Ազգամիջյան լարվածություն, կոնֆլիկտներ, պատերազմներ. Առաջացման պատճառները, գործոնները, դրանց հաղթահարման ռազմավարարական մոտեցումները և եղանակները: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները.*<br>▪ **2 ընթացիկ քննություն /գրավոր, բանավոր/, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով,**<br>▪ **եզրափակիչ բանավոր քննություն՝ 10 միավոր առավելագույն արժեքով(հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0.5 է):** |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. Белик А. А., Культура и личность. М.,2001<br>2. Платонов Ю.П. Основы этнической психологии. Санкт-Петербург, 2003<br>3. Стефаненко Т.Г. Этнопсихология. М. 2003 г.<br>4. Этническая психология под редакцией А. И. Егоровой, Санкт-Петербург, 2003 |

| | | |
|---|---|---|
| **0303/B17** | **Փորձարարական հոգեբանություն** | **6 կրեդիտ** |
| **6 ժամ** | **64/16/16** | |
| **IV կիսամյակ** | **Առանց եզրափակիչ գնահատման** | |
| Դասընթացինպատակնէուսանողներինծանոթացնելհոգեբանությանմեջփորձարա-րականհետազոտություններիտեսություններին, մեթոդաբանությանհիմքերին, կողմ-նորոշելհոգեբանականհետազոտություններիմեթոդներիհամակարգում, ձևավորել | | |

գիտելիքներիհոգեբանական գիտափորձերիպլանավորմանհամար:

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

*Գիտելիք և իմացություն*

- հոգեբանական գիտափորձիկազմակերպմանձևերիցուհետազոտու-թյուններիհիմնականծրագրերից,
- հոգեբանական հետազոտության կազմակերպման տրամաբանության վերաբերյալ:

*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- կողմնորոշվել հոգեբանական հետազոտության մեթոդաբանական հիմնախնդիրներում և իրականացնել հետազոտություն,

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- ինքնուրույնօգտագործել գիտելիքները գիտափորձերիկազմակերպման, ծրագրավորմաննայլէմպիրիկհետազոտություններիհամար:

*Համառոտ բովանդակությունը*

Փորձարարականմեթոդըորպեսհոգեբանականվարկածներիստուգմաննոր-մատիվներիհամակարգ նհետազոտողիպրակտիկ գործունեությանտեսակ: Գիտափորձըհոգեբանականհետազոտություններիհամակարգում: Հո-գեբանականվարկածներնտեսականվերակառուցումներէքսպերիմենտալմեթո-դիշրջանակներում: Փորձարարականփաստերինամփոփումներիտրամաբանությունը: Հոգեբանական գիտափորձիպլանավորմանհիմքերըևփորձարարականսխեմաներիդա-սակարգումը: Գիտափորձերիվալիդությու-նըորպեսփորձարարականվերահսկմաննպատակ: Հոգեբանական գի-տափորձերիտեսակներ: Կորելյացիոնմոտեցումըհոգեբանականհետազոտություննե-րում: Քվազիէքսպերիմենտներևփորձարարականմեթոդինձգտողհետազոտություններ: Հոգեբանականհետազոտությանկազմակերպմանմեթոդաբանականհարցեր:

*Գնահատման մեթոդները և չափանիշները.*

- 2 ընթացիկ գրավոր քննություն, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով,
- եզրափակիչ բանավոր քննություն՝ 10 միավոր առավելագույն արժեքով, որոնցից

| |
|---|
| **2-ը հատկացվում է դասընթացի շրջանակում հանձնարարված առաջադրանքներին, իսկ 8-ը՝ հարցատոմսի պատասխանին (հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է):** |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. ԱվանեսյանՀ. Մ. Փորձարարականհոգեբանություն: Ուսումնականձեռնարկ, ԷդիթՊրինտ, Երևան, 2010<br>2. Братусь Б. С., Опыт обоснования гуманитарной психологии // Вопросы психологии. 1990. # 6, с. 9-17.<br>3. Волков Б. С., Волкова Н. В., Губанов А. В., Методология и методы психологического исследования/ Учеб. пос. для вузов. М.: Фонд "Мир", 2005.<br>4. Годфруа Ж., Что такое психология? М. 1992.<br>5. Дорфман Л. Я., Методологические основы экспериментальной психологии, М.: Смысл, 2005<br>6. Дружинин Н. Д., Экспериментальная психология. СПб.: Питер, 1998.<br>7. Зароченцев К. Д., Худяков А. И., Экспериментальная психология/ Учебник. М., 2005.<br>8. Карл Л. Поппер. "Логика рост научного знания" М., 1983.<br>9. Кемпбелл Д. Модели эксперимента в социальной психологии и прикладных исследованиях. СПб, 1996.<br>10. Корнилова Т. В., Экспериментальная психология: Теория и методы: Учебник для вузов. М.: Аспект Пресс, 2003.<br>11. Найсер У., Познание и реальность: смысл и принципы когнитивной психологии – пер. с англ. В.В. Лучкова – М.: Прогресс, 1981.<br>12. Немов Р. С., Психология. Книга 3. М.: ВЛАДОС ИМПЭ им. А. С. Грибоедова, 2002.<br>13. Первин, О. Джон. Психология личности. Теория и исследования. Москва, 2001.<br>14. Экспериментальная психология/ Под ред. П. Фресса, Ж. Пиаже. М.: Прогресс, 1966. |

| | | |
|---|---|---|
| **0303/B18** | **Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի** | **2 կրեդիտ** |

| | | |
|---|---|---|
| | **հիմունքներ** | |
| 2 ժամ | 32/0/ | |
| V կիսամյակ | **Առանց Եզրափակիչ գնահատման** | |

Սույն դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել գիտելիքներ կոնկրետ սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանական և մեթոդա-կան հիմունքների, դրանց կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ, ինչպես նաև համալիր պատկերացումներ սոցիալական աշխատանքի ընդհա-նուր տեխնոլոգիաների և մեթոդների վերաբերյալ:

Դասընթացի ավարտին ուսանողը

1. կիմանա սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանական հի-մունքները, հետազոտությունների տեսակները, անցկացման ընթացակարգը, առանձնահատկությունները,
2. պատկերացում կունենա սոցիալական աշխատանքի զարգացման պատ-մության, գաղափարախոսության, հասկացական հիմքերի, սոցիալական աշխատանքի հիմնարար արժեքների ու սկզբունքների, սոցիալական աշ-խատանքում կիրառվող տեխնոլոգիաների առանձնահատկությունների վերաբերյալ,
3. կկարողանա անցկացնել հետազոտություններ՝ կապված կոնկրետ հիմ-նախնդիրների հետ:

*Համառոտ բովանդակություն*

Սոցիոլոգիական հետազոտությունը որպես սոցիալական իրակա-նության ճանաչման եղանակ, հետազոտությունների տեսակները: Սո-ցիոլոգիական հետազոտության ծրագիրը: Չափման խնդիրը սոցիոլո-գիական հետազոտություններում: Ընտրանքը սոցիոլոգիական հետա-զոտություններում: Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդները: Սոցիալական աշխատանքի զարգացման պատմությունը: Սո-ցիալական աշխատանքը որպես գիտություն և մասնագիտություն: Սո-ցիալական աշխատանքը որպես գործունեության հատուկ ձև: Սոցիա-լական աշխատանքի մեթոդները: Սոցիալական աշխատանքի տեխնո-լոգիաները:

*Գնահատման մեթոդները և չափանիշները*

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները. Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է

9 միավոր առավելագույն արժեքով: Որպես կանոն` յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 3 հարց: Ստուգման ձևերն են.

*1-ին ստուգում.* Բանավոր կարճ հարցում: Միավորների քայլը` 0,5:

*2-րդ ստուգում.* Փոքրածավալ գրավոր /ստուգողական աշխատանք: Միավորների քայլը` 0,5:

*Հիմնական գրականության ցանկը*


1. Սոցիալական հոգեբանություն, Ա. Նալչաջյան, «Զանգակ 97», Երևան 2004
2. Социальная психология: Третье издание. Г.М.Андреева , М.: Наука, 1994
3. Социальная психология: В. Г. Крысько, Издательство: Владось-Пресс, 2002
4. Социальная психология: хрестоматия Белинская Е.П.Аспект-Пресс, 2008
5. Психология адаптации личности Баранов А.А. Издательство: Прайм-ЕВРОЗНАК, 2008

6 Краткий словарь по социологии. - М., 1989.

7 Кантор И.М. Понятийно-терминологическая система педагогики. - М., 1980.

9 Понятийный аппарат педагогики и образования. - Екатеринбург-1995.

10 Словарь терминов по социальной работе. - Калуга. 1992.

11 Художественный язык средневековья. - М., 1980.

<table>
<tr><td>0303/B19</td><td>Սոցիալական հոգեբանություն</td><td>7 կրեդիտ</td></tr>
<tr><td>6 ժամ</td><td colspan="2">64/0/32</td></tr>
<tr><td>V կիսամյակ</td><td colspan="2">Եզրափակիչ գնահատման</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացինպատակնէուսանողին ծանոթացնել սոցիալականհոգեբանության հիմնադրույթներին, տալ համակարգված գիտելիք հասարակականկեցությանհոգեբանականառանձնահատկությունների, հասարակականկառույցների, գործընթացների, փոխազդեցությունների մասին: Ուսանողների շրջանում ձևավորել հասարակականերևույթների տարբերակման, մեկնաբանմաննկանխատեսման հմտություններ:</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.<br>Գիտելիք և իմացություն<br>• հասարակական հոգեբանության հիմնական դրույթների մասին<br>• հասարակականկառույցների, գործընթացների, փոխազդեցություններիհոգեբանականմեխանիզմներիմասին,<br>• հասարակականգործընթացներումներգրավվածանձիհոգեբանականդրսևորումներիմասին:<br>Ունակ կլինի.<br>(բուն մասնագիտական կարողություններ)<br>▪ տարբերակել և մեկնաբանել հասարակական երևույթները,<br>▪ հայտնաբերել հասարակական երևույթների հիմքում ընկած հոգեբանական մեխանիզմները,<br>▪ մեկնաբանել և կանխատեսել հասարակական երևույթների հնարավոր զարգացումները,<br>▪ կանխատեսել անձի խմբային վարքը:<br>(ընդհանրական կարողություններ)</td></tr>
</table>

- կառուցել հասարակական արդյունավետ փոխազդեցություններ,
- կառավարել և կարգավորել սեփական, ինչպես նաև մերձավոր միջավայրի հասարակական դսրևորումները :

*Համառոտ բովանդակությունը*

Ներածություն. սոցիալական հոգեբանությունը որպես գիտակարգ, դրա առարկան, խնդիրները և մեթոդները: Սոցիալական հոգեբանության տեղը գիտական համակարգում: Հասարակական գիտելիքի կառուցվածքը: Գաղափարախոսություն և հասարակական հոգեբանություն:

Հասարակական երևույթների ձևավորման և զարգացման հոգեբանական հիմքերը: Սոցիալ-հոգեբանական երևույթների տիպաբանություն: Խմբեր և դրանց դասակարգումը:

Սոցիալական հոգեբանության կառուցվածքն ու հիմնախնդիրները: Հաղորդակցում և համատեղ գործունեություն: Սոցիալ-հոգեբանական երևույթների առանձնահատկությունները փոքր և միջին խմբերում՝ խմբերի ձևավորում, խմբային դինամիկա, խմբի կառուցվածք, լիդերություն: Սոցիալ-հոգեբանական երևույթների առանձնահատկությունները միջին և մեծ խմբերում՝ էթնիկական, դասակարգային, կրոնական, բարոյական, քաղաքական հասարակական կազմավորումներ: Զանգվածակերպ հասարակական դրսևորումների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները: Անձի սոցիալ-հոգեբանական խնդիրները: Հասարակական գիտակցության փոփոխման և հասարակության վերակառուցման ազդեցությունը սոցիալ-հոգեբանական երևույթների վրա:

*Գնահատման մեթոդները և չափանիշները.*

- 2 ընթացիկ քննություն /գրավոր, բանավոր/, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով,
- եզրափակիչ բանավոր քննություն՝ 10 միավոր առավելագույն արժեքով(հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 3,3,2,2 միավոր: Միավորների քայլը 0.5 է):

*Հիմնական գրականության ցանկը*


1. Андреева Г.М. Социальная психология. М., 1998.
2. Бехтерев В.М. Избранные труды по социальной психологии. М., 1997.
3. Выготский Л.С. Исторический смысл психологического кризиса. Собр.соч.М., 1982, т.1.
4. Московичи С. Общество и теория в социальной психологии // Современная
5. зарубежная социальная психология. Тексты. М., 1984
6. Крысько В.Г. Социальная психология М., 2001.

7. Парыгин Б.Д. Социальная психология. СПб, 1999.
8. Социальная психология. Хрестоматия. М., 1999
9. Уледов А.К. Общественная психология и идеология. М., 1985.
10. Դասախոսությունների տեքստեր՝ էլեկտրոնային կրիչով


| **0303/B21** | **Տարիքային հոգեբանություն** | **5 կրեդիտ** |
|---|---|---|
| **Շաբաթական 4 ժամ** | **48/16/0** | |
| **V կիսամյակ** | **Եզրափակիչ գնահատման** | |

**Դասընթացինպատակնէ**ձևավորելանձինկատմամբվերլուծականմոտեցում՝հոգեբանականտարիքիըմբռնման տեսանկյունից, ձևավորելգիտելիքների, գործնականհմտություններիևկարողություններիամբողջականհամակարգ՝ըստտարբերտարիքայինփուլերու մմարդուհոգեկանզարգացմանհիմնահարցերիլուծմանուղիներինախազգուշացման, վերլուծությանևմշակման:

**Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.**

*Գիտելիք և իմացություն*

- տարիքի, այդ թվում ճգնաժամային տարիքի հոգեբանական վերլուծությունների մասին,
- տարիքային հոգեբանության տեսական և գործնական խնդիրների լուծման համար ստեղծված մեթոդաբանությունից,
- հիմնական հասկացություններից ու եզրութաբանությունից:

*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- կազմակերպել տարբեր տարիքային ճգնաժամերի ընթացքում հոգեբանական աջակցության արդյունավետ գծեր և ուղիներ,
- ուսումնասիրել յուրաքանչյուր տարիքային փուլին բնորոշ զարգացման հիմնահարցերը,
- մշակել զարգացման հիմնահարցի վերլուծության ալգորիթմը, որը կարտացոլի զարգացման հիմնահարցի լուծման և կանխարգելման հնարավորությունը:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- իմանալով հոգեբանական առանձնահատկությունները՝ արդյունավետ հաղորդակցվել տարիքային տարբեր խմբերի հետ,
- հասկանալու և տարբերակելու անձի զարգացման տարիքային օրինաչափությունները:

***Համառոտ բովանդակությունը.***

Հասկացողություն հոգեկան զարգացման հիմնահարցերի մասին: Հոգեկան զարգացման ճգնաժամերը: Պերինատալ, զարգացման հիմնահարցերը: Նորածնության և վաղ մանկության հիմնահարցերը: Մինչնախադպրոցականի և նախադպրոցականի զարգացման հիմնահարցը: Կրտսեր դպրոցականի զարգացման առանձնահատկությունները, Զարգացման հիմնահարցերը դեռահասության տարիքում: Զարգացման հիմնահարցերը պատանեկության տարիքում: Հոգեկան զարգացման հիմնահարցերը հասունության տարիքում: Ծերունական տարիքի հոգեբանական հիմնահարցերը:

***Գնահատման մեթոդները և չափանիշները.***

- մասնակցություն՝ առավելագույնը 2 միավոր արժեքով,
- 2 գրավորընթացիկքննություն, յուրաքանչյուրը՝ 4 միավորառավելագույնարժեքով,
- եզրափակիչքանավորքննություն՝10միավորառավելագույնարժեքով, (հարցատոմսըպարունակումէ 3 հարց, առաջին երկու հարցը՝ 4 միավոր, իսկ երրորդ հարցը՝ 2):

***Հիմնական գրականության ցանկը.***


1. Ананьев Б. Г. , О проблемах современного человекознания. М., 1977, гл. 5, с. 275-311
2. Выготский Л. С., Собрание сочинений в 6-и томах, М. 1984
3. Возрастная и педагогическая психология. Под. ред. М. В. Гомезо, М. Б. Матюхиной, Т. С. Михальчик, М. 1984
4. Валлон А., Психическое развития ребенка. М., 1987
5. Гальперин П. Я., Метод “срезов” и метод поэтапного формирования в исследовании детского мышления, 1966
6. Гальперин П. Я., Запорожец А. В., Карпова С. Н., Актуальные проблемы возрастной психологии. М., 1978
7. Грегор О. Жить не старея. М., 1992
8. Крайг Г., Бокум Д., Психология развития. М. 1992
9. Кон И.С., Психология ранней юности. М., 1989
10. Кон И.С., В поисках себя. М., 1984
11. Кон И.С., Ребенок и общество. М., 1998
12. Кле М., Психология подростка. М., 1991
13. Кулагина И. Ю., Колюцкий В. Н., Восрастная психология. М., 2006
14. Кулагина И. Ю.,Восрастная психология. М., 1997
15. Мухина В. С., Детская психология. М., 1997
16. Обухова Л. Ф., Возрастная психология. М., 2007
17. Проблема формирования ценностных ориентаций и социальной активности/сост. В. С. Мухина, М., 1984


| | | |
|---|---|---|
| 0303/B22 | Կրթության հոգեբանություն | 2 կրեդիտ |

| | |
|---|---|
| Շաբաթական 2 ժամ | 24/8/0 |
| V կիսամյակ | Եզրափակիչ գնահատման |

**Դասընթացի նպատակն է** ծանոթացնել ուսանողներին կրթության կառուցվածքին, ուսումնական և մանկավարժական գործունեության հոգեբանական առանձնահատկություններին և օրինաչափություններին, ձևավորել կրթության գործընթացի հոգեբանական վերլուծության հմտություններ:

**Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.**

*Գիտելիք և իմացություն*

- Կրթության՝ որպես համակարգ և գործընթաց, օրինաչափությունների և առանձնահատկությունների, այդ գործընթացի սուբյեկտների՝ աշակերտի և մանկավարժի հոգեբանական բնութագրերի վերաբերյալ,
- ուսումնական գործունեության բնութագրի կառուցվածքի, առարկայական բովանդակության, ուսումնական մոտիվացիայի մասին,
- մանկավարժական գործունեության բնութագրերի, ձևերի, մեթոդների, գործառույթների և մանկավարժական շփման առանձնահատկությունների մասին:

*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- վերլուծել կրթական գործընթացը, տարբերակել դրա առանձին բաղադրիչների կազմակերպման հոգեբանական առանձնահատկությունները,
- գնահատել երեխայի ուսումնական մոտիվացիայի մակարդակը,
- կատարել դասի հոգեբանական վերլուծություն:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ,
- ստեղծագործաբար կիրառել յուրացրած գիտելիքը և հմտությունները:

***Համառոտ բովանդակությունը.***

Մանկավարժական հոգեբանության գիտական բնութագիրը, կայացման նախապատմությունը, առարկան, խնդիրները, կառուցվածքը: Մանկավարժական

| |
|---|
| հոգեբանության մեթոդները: Կապը այլ գիտությունների հետ: Կրթությունը որպես մանկավարժական հոգեբանության առարկա: Կրթության բաղադրիչները: Կրթության ուղղությունները: Ուսուցում և զարգացում: Զարգացնող ուսուցում: Կրթական գործընթացի սուբյեկտները՝ մանկավարժ և սովորող /աշակերտ, ուսանող/: Մանկավարժի անձը: Ուսումնական գործունեության սուբյեկտների տարիքային առանձնահատկությունները: Դպրոցականը և ուսանողը որպես ուսումնական գործունեության սուբյեկտ: Ուսումնական գործունեության ընդհանուր բնութագիրը և կառուցվածքը: Ուսումնական գործունեության առարկայական բովանդակությունը: Ուսումնական մոտիվացիա: Մանկավարժական գործունեության ընդհանուր բնութագիրը, ձևերը, հիմնական գործառույթները: Դասաժամի հոգեբանական վերլուծություն: Կրթության հոգեբանական ուղեկցություն: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները.***<br>▪ մասնակցություն՝ առավելագույնը 2 միավոր արժեքով,<br>▪ 2 ընթացիկ գրավոր քննություն՝յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով,<br>▪ եզրափակիչ բանավոր քննություն՝ 10 միավոր առավելագույն արժեքով, (հարցատոմսը պարունակում է 4 հարց, երկուսը՝ 2 միավոր, երկուսը՝3 միավորարժեքով: Միավորների քայլը 0.5 է): |
| ***Հիմնական գրականության ցանկը.***<br>1. Айсмонтас Б.Б. - Педагогическая психология. Схемы и тесты.-М. 2002<br>2. Зимняя И.А. Педагогическая психология. М., 2004<br>3. Овчарова Р.В. Практическая психология образования.- М., 2003<br>4. Педагогическая психология. Хрестоматия.Соцт. В.Н. Карандашев, Х.В.Носова, О.Н.Щепелина.-Спб. Питер. 2006<br>5. Педагогическая психология: Учеб. для студ. высш учеб заведений / Под ред. Н.В. Клюевой. - М.: 2003.<br>6. Практическая психология образования; Учебное пособие 4-е изд. / Под редакцией И. В. Дубровиной — СПб.: Питер, 2004 |

| | | |
|---|---|---|
| *0304/B23* | Տրամաբանություն | 2 կրեդիտ |
| 2 ժամ | 24/0/8 | |
| V կիսամյակ | **Առանց Եզրափակիչ գնահատման** | |

Նպատակը.

Դասընթացի հիմնական նպատակն է բարձրացնել ուսանողի մտածական որակները, զարգացնել վերլուծական մտածողություն:

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մտքի կառուցվածքը, այն տրամաբանական կանոններն ու օրենքները, որոնք կշռադատության ընթացքում ապահովում են մեր մտքի կանոնավորությունը և հետևողականությունը, ճշմարիտ եզրակա-ցությունների ստացումը և գիտական գիտելիքների հիմնավորվածությու-նը,
2. կիասկանա տրամաբանության ճանաչողական և մեթոդաբանական գոր-ծառույթների անհրաժեշտությունը գիտատեսական և գործնական ուսումնասիրությունների ժամանակ,
3. կկարողանա տրամաբանական գիտելիքների և հմտությունների միջոցով բարձրացնել իմացական գործընթացների և հատկապես գիտական հետազոտությունների արդյունավետությունը

*Համառոտ բովանդակությունը*

Տրամաբանության առարկան և նշանակությունը: Լեզվի տրամաբանական վերլուծությունը: Հասկացությունը որպես տրամա-բանական ձև և հասկացության ընդհանուր բնութագրությունը: Դատո-ղություն: Մտածողության ձևական տրամաբանական հիմնական օրենքները: Դեդուկտիվ մտահանգում: Մտահանգման ընդհանուր բնու-
թագիրը: Ինդուկտիվ մտահանգումներ: Փաստարկման տրա-մաբանական հիմունքներ: Տրամաբանական սխալներ:

*Գնահատման մեթոդները և չափանիշները*

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է
9 միավոր առավելագույն արժեքով: Որպես կանոն՝ յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 3

հարց: Ստուգման ձևերն են.

*1-ին ստուգում.* Բանավոր կարճ հարցում: Միավորների քայլը՝ 0,5:

*2-րդ ստուգում.* Փոքրածավալ գրավոր /ստուգողական աշխատանք: Միավորների քայլը՝ 0,5:

*Հիմնական գրականության ցանկը*

| Թիվ | ՀԵՂԻՆԱԿ (ՆԵՐ) | ՎԵՐՆԱԳԻՐ | ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒ-ԹՅՈՒՆ | ՎԱՅՐ | ՏԱՐԵԹԻՎ | |
|---|---|---|---|---|---|---|
| I. Պարտադիր | | | | | | |
| 1. | *ԲրուտյանԳ.Ա* | *Տրամաբանության դասընթաց* | *Երևանի համալսարանի հրատարակչություն* | *Երևան* | *1976* | |
| 2. | *Մարտիրոսյան Ռ. Ա.* | *Տրամաբանություն* | *Էլ. Տարբերակ* | - | *2013* | |
| | - | - | - | - | - | |
| II. Լրացուցիչ | | | | | | |
| 1. | *Кондаков Н.Н* | *Логический словарь* | *,,Наука..* | *Москва* | *1975* | |
| 2. | *Гетманов А.Д* | *Логика* | *,,Высшая школа..* | *Москжа* | *1993* | |
| | - | - | - | - | - | |
| III. Երաշխավորվող | | | | | | |
| 1. | *Маковелский А.О* | *История логики* | *Советская энциклопедия* | *Москва* | *1967* | |
| | *Демидов И.В.* | *Логика* | - | *Москва* | *2004* | |
| | - | - | - | - | - | |

| **0303/B24** | **Մանկավարժական հոգեբանություն** | **4 կրեդիտ** |
|---|---|---|
| 4 ժամ | *48/0/16* | |
| V կիսամյակ | **Առանց Եզրափակիչ գնահատման** | |
| Նպատակը. | | |

| |
|---|
| Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ուսումնական գործընթացի վերլուծության ժամանակակից մոտեցումներին: |
| Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.<br>▪ ծանոթ կլինի մանկավարժական ներգործության հոգեբանական մեխանիզմներին և օրինաչափություններին: |
| *Համառոտ բովանդակությունը*<br>Մանկավարժական հոգեբանության առարկան և խնդիրները: Ուսումնական գործունեության կառուցվածքը: Մանկավարժական հոգեբանության մեթոդները: Մանկավարժի անձնային որակների և մասնագիտական պատրաստվածության հիմնախնդիրները: Մանկավարժական գործունեության շարժառիթները, մանկավարժական կոլեկտիվի հոգեբանություն: Մանկավարժական կարողություններ և հմտություններ: Մանկավարժական գործունեության կառուցվածքը: Դաստիա-րակության հոգեբանություն: Կրթության հոգեբանություն: Ուսուցման հոգեբանություն:Ուսուցչի անձի հոգեբանություն: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները*<br>Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները. Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է<br>9 միավոր առավելագույն արժեքով: Որպես կանոն՝ յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 3 հարց: Ստուգման ձևերն են.<br>*1-ին ստուգում.* Բանավոր կարճ հարցում: Միավորների քայլը՝ 0,5:<br>*2-րդ ստուգում.* Փոքրածավալ գրավոր /ստուգողական աշխատանք: Միավորների քայլը՝ 0,5: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. Ананьев Б.Г. Человек как предмет познания. СПб., 2001.<br>2. Ананьев Б.Г. Педагогические приложения современной психологии // Советская педагогика. |

1954. № 8.
3. Биологическое и социальное в развитии человека / Под общ. ред. Б.Ф. Ломова. М., 1977.
4. Блонский П.П. Педология: Кн. для преподават. и студ. высш. пед. учеб. заведений / Под ред. В.А. Сластенина. М., 1999.
5. Возрастная и педагогическая психология / Под ред. А.В. Петровского. М., 1981.
6. Возрастная и педагогическая психология: Хрестоматия: Учеб. пособие для студ. сред. пед. учеб. заведений / Сост. И.В. Дубровина, А.М. Прихожан, В.В. Зацепин. М., 1999.
7. Возрастная и педагогическая психология: Тексты / Сост. и коммент. О. Шуаре Марта. М., 1992.
8. Волович М.Б. Не мучить, а учить: О пользе педагогической психологии. М., 1992.
9. Выготский Л.С. Педагогическая психология. М., 1996.
10. Габай Т.В. Педагогическая психология. М., 1995.
11. Дистервег Ф.А. Избранные педагогические сочинения. М., 1956.
12. Зимняя И.А. Педагогическая психология: Учеб. пособие. Ростов н/Д, 1997.
13. Ильясов И.И. Структура процесса учения. М., 1986.
14. Каптерев П.Ф. Детская и педагогическая психология. М.; Воронеж, 1999.
15. Крутецкий В.А. Основы педагогической психологии. М., 1972.
16. Курс общей, возрастной и педагогической психологии / Под ред. М.В. Гамезо. М., 1982. Вып. 3.
17. Лейтес Н.С. Возрастная одаренность школьников: Учеб. пособие для студ. высш. пед. учеб. заведений. М., 2000.
18. Лингарт И. Процесс и структура человеческого учения. М., 1970.
19. Немов Р.С. Психология: Учеб. пособие для студентов высш. пед. учеб. заведений: В 3 кн. Кн. 2. Психология образования. 2-е изд. М., 1995.
20. Обухова Л.Ф. Возрастная психология: Учебник. М., 1996.

| | | |
|---|---|---|
| 0303/B20 | Հոգեղիագնոստիկա | 4 կրեդիտ |
| 4 ժամ | 48/0/16 | |
| V կիսամյակ | Եզրափակիչ գնահատման | |
| Դասընթացինպատակնէուսանողներիմոտձևավորելպատկերացումներհոգեղիագնոստիկ ագիտակագիմասին, ծանոթացնելկիրառական մեթոդներինևմեթոդիկաներին, ժամանակակիցթեստաբանությանխնդիրներին, ինչպեսնաևներկայացնելհոգեղիագնոստիմասնագիտականհնարավորություններընևսահմ անափակումները: | | |
| Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.<br>*Գիտելիք և իմացություն*<br>▪ հոգեղիագնոստիկ սկզբունքների, հասկացությունների և հիմնական դրույթների վերաբերյալ,<br>▪ հոգեղիագնոստիկ ընթացակարգերի կառուցման տրամաբանության վերաբերյալ:<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>▪ ինքնուրույն ընտրել և կիրառել մանագիտական գործիքը,<br>▪ կատարել հետազոտական տվյալների վերլուծություն և մեկնաբանություն,<br>*(ընդհանրական կարողություններ)*<br>▪ կիրառել հոգեղիագնոստիկան կիրառական և հետազոտական աշխատանքներում: | | |
| *Համառոտ բովանդակություն*<br>Հոգեղիագնոստիկայի զարգացման պատմությունը: Հոգեհիագնոստիկայի առարկան և խնդիրները: Մեթոդների դասակարգում: Մեթոդիկաների հոգեմետրիկական հիմքերը և դրանց ներկայացվող պահանջները: Անձնային բնութագրիչների հոգեղիագնոստիկա: | | |

| |
|---|
| Ինքնագիտակցության հոգեդիագնոստիկա: Պրոյեկտիվ դիագնոստիկա: Ընդունակությունների հոգեդիագնոստիկա: Հոգեդիագնոստիկ հետազոտության բարոյագիտական սկզբունքները: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները.*<br>▪ **2 ընթացիկ գրավոր քննություն, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով,**<br>▪ **եզրափակիչ բանավոր քննություն՝ 10 միավոր առավելագույն արժեքով, ըստհարցատոմսի պատասխանի (հարցատոմսը պարունակում է 4 հարց, որից 2-ը՝3 միավոր, 2-ը՝ 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է):** |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. Бурлачук Л.Ф. Психодиагностика: Учебник для вузов.-СПб.: Питер, 2006<br>2. Общая психодиагностика: Учебное пособие / под ред. Бодалева А.А, Столина- В.В.-изд. МГУ, 1987<br>3. Психологическая диагностика: Уч. пособ / под.ред. К.М. Гуревича и Е.М. Борисовой. –УРАО, 1997<br>4. Романова Е.С. Психодиагностика: 2-е изд.-СПб,: Питер, 2008<br>5. Шмелев А.Г. и коллектив. Основы психодиагностики: Учебное пособие, М., ''Феникс'', 1996 |

| | | |
|---|---|---|
| **0303/B28** | **Արտակարգ իրավիճակների հոգեբանություն** | **2 կրեդիտ** |
| **2 ժամ** | **24/0/0** | |
| **VI կիսամյակ** | **Առանց եզրափակիչ գնահատման** | |
| **Դասընթացում դիտարկվում են արտակարգ գործոնների ազդեցության հետևանքներն ու դրանց կանխատեսման և կանխարգելման հոգեբանական հարցերը:** | | |
| **Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.**<br>*Գիտելիք և իմացություն*<br>▪ արտակարգ իրավիճակների, պայմանների ընդհանուր և հոգեբանական բնութագրերի մասին,<br>▪ անձի հուզավարքային և մտային դրսևորումների վերաբերյալ,<br>▪ կծանոթանա տուժածների և անձնակազմերի հետ հոգեբանական պրակտիկ աշխատանքների կազմակերպմանը:<br>*Ունակ կլինի*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>▪ **հետևել և հնարավորինս ճշգրիտ նկարագրել հոգեբանական ոչ ստանդարտ իրավիճակներն ու վարքագծերը,**<br>▪ **ընտրել համապատասխան մեթոդներ՝ կազմակերպելու հոգեբանական** | | |

աշխատանքներն արտակարգ իրավիճակներում և պատահարներից հետո,

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- հետազոտություն կատարել արտակարգ գործոն պարունակող բնազավառներում,
- սատարելմասնագիտական ընտրության, պատրաստման և որակավորման աշխատանքներին,
- ուղեկցել աշխատանքի կառավարման մեթոդական և տեխնիկական գործընթացներին:

*Համառոտ բովանդակություն*

Աշխատանքային վարքի մոդել, արտակարգ իրավիճակների տեսակներ, արտակարգություն, ինքնակարգավորում և ինքնակառավարում, հոգեբանական աջակցություն, հոգեբանական կանխատեսում, հոգեբանական պատրաստվածություն, հոգեբանի միջամտություն, սթրես-կառավարում, սովորական (ստանդարտ) և ոչ սովորական պայմաններ, տուժածներ և նրանց հարազատներ, օրգանիզմի հարմարում, ֆունկցիոնալ վիճակներ:

*Գնահատման մեթոդները և չափանիշները*

- 2 ընթացիկ գրավոր ստուգում, յուրաքանչյուրը՝ 9 միավոր առավելագույն արժեքով:

*Հիմնական գրականության ցանկը*


1. Մկրտումյան Մ.Պ. Արտակարգ իրավիճակների հոգեբանության կանխարգելման և վերականգնողական հիմնախնդիրները: Ուս.ձեռնարկ_ Եր., Զանգակ-97, 2008_ 320 էջ
2. Антипов В.В.- Психологическая адаптация к экстремальным ситуациям, М.2002г., 176с.
3. Магомед-Еминов М.Ш. Феномен экстремальности_ 2-е изд._М., Психоаналитическая Ассоциация, 2008,_218 с.
4. Малкина-Пых И. Г. Экстремальные ситуации. – М.: Изд-во Эксмо, 2005. – 960 с. – (Справочник практического психолога)
5. Психология экстремальных ситуаций для спасателей и пожарных/Подобщейред. Ю.С. Шойгу. М., Смысл, 2007. – 319 с.
6. Ромек В. Психологическая помощь в кризисных ситуациях, СПб. 2004г., 256с.

| | |
|---|---|
| 7. | Смирнов В.Н. Психология управления персоналом в экстремальных условиях_М., «Академия», 2007._ 256 с. |
| 8. | Шербатых Ю. Психология стресса и методы корекции, СПб. 2008г., 256с. |

| | | |
|---|---|---|
| **0303/B25** | **Բժշկական հոգեբանություն** | **6 կրեդիտ** |
| 8 ժամ | 56/0/40 | |
| VI կիսամյակ | **Եզրափակիչ գնահատման** | |

**Դասընթացի նպատակն է**ուսանողիմոտ ձևավորել ձևավորել լիարժեք գիտելիքներ մարմնական և հոգեկան հիվանդի հոգեբանական առանձնահատկությունների և օրինաչափությունների, ինչպես նաև հոգեկան խանգարումները կանխարգելելու հնարավորությունների մասին:

**Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.**

*Գիտելիք և իմացություն*

1. Բժշկական հոգեբանության բաժիններից
2. Հոգեկան տարբեր խանգարումների հոգեբանական առանձնահատկություններից և դրանց հաղթահարման տարբեր մոտեցումներից

*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

1. Կարողանալ լրացնել հիվանդության անամնեզը
2. կարողանալ ախտորոշել առկա խանգարումը՝ ելնելով DSM-IV-R-ից

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- վերլուծել առկա խնդիրները և առաջարկել դրանց լուծման եղանակներ

*Համառոտ բովանդակությունը*

Բժշկական հոգեբանության ընդհանուր հիմնահարցերը, առողջության և հիվանդության հոգեբանական խնդիրները; անձի ախտաբանությունը; ախտահոգեբանություն; հոգեկան գործընթացների խանգարումներ; սոմատիկ հիվանդների հոգեբանական ասպեկտները; բժշկական դեոնթոլոգիա:

*Գնահատման մեթոդները և չափանիշները.*

| | | |
|---|---|---|
| ▪ 2 ընթացիկ քննություն /գրավոր, բանավոր/, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով,<br>▪ եզրափակիչ բանավոր քննություն՝ 10 միավոր առավելագույն արժեքով(հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 3,3,2,2 միավոր: Միավորների քայլը 0.5 է): | | |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. МенделевичВ.Д., Клиническаяимедицинскаяпсизология, М,. 2002<br>2. ДжудитТод, АртурБогард, Основыклиническойиконсультативнойпсихологии, Эксмо-Пресс, 2001<br>3. КарвасарскийБ.Д., Медицинскаяпсихология, Л., 1982<br>4. ЛакосинаН.Д., УшаковГ.К., Медицинскаяпсихология, М., 1984<br>5. БанщиковВ.М., ГуськовВ.С., МягковИ.Ф., Медицинскаяпсихология, М., 1977<br>6. ЗейгарникБ.В., Личностьипатологиядеятельности, М., 1971<br>7. ЗейгарникБ.В., Введениевпатопсихологию, М., 1960<br>8. ЗейгарникБ.В., Патопсихология, М., 1976<br>9. ЗейгарникБ.В., Хрестоматияпопатопсихологии, М., 1981 | | |
| **0303/B26** | **Կազմակերպչական հոգեբանություն** | **6 կրեդիտ** |
| 6 ժամ | 40/32/0 | |
| VI կիսամյակ | **Եզրափակիչ գնահատման** | |
| Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել լիարժեք մասնագիտական պատկերացումներ կազմակերպչական հոգեբանության արդի հիմնախնդիրների, կազմակերպության գործառության հոգեբանական առանձնահատկությունների մասին, որոնք ունեն գործնական նշանակություն կազմակերպության ղեկավարման, աշխատանքայինգործընթացիկազմակերպման, կադրերիընտրության, ինչպեսնաևաշխատանքիարդյունավետությանբարձրացմանգործընթացում: | | |
| Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.<br>*Գիտելիք և իմացություն*<br>▪ Կազմակերպչական սոցիալական հոգեբանությանն առնչվող խնդիրների և | | |

արդի ձեռքբերումների համակողմանի իմացություն,

- Կազմակերպության ներքին և արտաքին հարաբերությունների ձևավորման վրա մարդկային գործոնների ազդեցության ամբողջական իմացություն
- Կտիրապետի մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտում հոգեբան-մասնագետի /որպես հետազոտող-փորձագետ և խորհրդատու/ հիմնական գործառույթներին

*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- Վերլուծել կազմակերպությունում առկա սոցիալ-հոգեբանական մթնոլորտն ու խնդիրները
- Բացատրել կազմակերպության ներսում առաջացող խնդիրները, նրանց պատճառները և առաջարկել  համարժեք լուծումներ
- Կազմակերպել առողջ սոցիալ-հոգեբանական մթնոլորտ ստեղծելուն ուղղված համապատասխան միջոցառումներ /աշխատանքներ
- Նպաստել կազմակերպության ներքին և արտաքին հաղորդակցմանը
- Իրականացնել հոգեբանի գործառույթները կազմակերպությունում
- Տեխնիկական և վարչական բնույթի որոշումներ կայացնել մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտում

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- Կկարողանա գնահատել կազմակերպություններում հոգեբանների գործունեության  զարգացման հնարավորությունները
- Կկարողանա  կատարել հետազոտական աշխատանք կազմակերպչական հոգեբանության  մոտեցումների շրջանակներում և կազմակերպության ներսում և այլ կազմակերպությունների համար
- Կկարողանա գնահատել կազմակերպությունում հոգեբանական աշխատանքների առկա ռեսուրսները
- Կկարողանա աշխատել տարբեր տեղական, միջազգային և արտասահմանյան կազմակերպություններում
- Կկարողանա շփվել այլ ոլորտների մասնագետների հետ
- Կկարողանա աշխատել ինքնուրույն

| |
|---|
| ▪ Կարողանա արդյունավետ աշխատել թիմում: |
| *Համառոտ բովանդակությունը*<br>Կազմակերպչական հոգեբանության առարկան և խնդիրները,հիմնական հասկացությունները:Կառավարման տեսության կայացումը և զարգացումը: Կազմակերպության ղեկավարման հոգեբանական խնդիրները: Կազմակերպությունը և նրա հիմնական խնդիրները: Արտասահմանյան կազմակերպչական սոցիալական հոգեբանություն /ամերիկյան դասական դպրոց, ամերիկյան սոցիալ-հոգեբանական դպրոց, ճապոնական դպրոց/: Լիդերություն և ղեկավարում: Լիդերության հիմնական տեսությունները: Կառավարչական գործունեության հիմնական գործառույթները: Կառավարման փիլիսոփայություն և ռազմավարություն: Մենեջմենթի ներկազմակերպչական ապահովում: Հաղորդակցումը կազմակերպության մեջ: Ղեկավարի գործունեության ընթացքում խմբային երևույթների կառավարման հոգեբանություն: Սոցիալ-հոգեբանական մթնոլորտ, էությունը: Կորպորատիվ մշակույթ: Անձնակազմի մոտիվացիան և խթանումը: Գենդերային միտումները կազմակերպությունում: Կոնֆլիկտները կազմակերպությունում: Հոգեբանի գործունեության սպեցիֆիկան կազմակերպությունում: Մարդկային ռեսուրսների կառավարում: Կորպորատիվ հոգեբանի հիմնական գործառույթների իրականացում: Որոշման կայացման հոգեբանություն: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները.*<br>▪ 2 ընթացիկ գրավոր քննություն, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով,<br>▪ եզրափակիչ բանավոր քննություն՝ 10 միավոր առավելագույն արժեքով, որոնցից 2-ը հատկացվում է դասընթացի շրջանակում հանձնարարված առաջադրանքներին, 2-ըսեմինարևգործնականպարապունքներիմասնակցության, իսկ 6-ը՝ հարցատոմսի պատասխանին (հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ 2 միավոր: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>*1.* Գործարարության հոգեբանական նախադրյալները, Երևան 2010<br>2. Андреева Г.М. Социальная психология. - М.: Изд-во МГУ, 1980. |

3. Бандурка А.М., Бочарова С.П., Землянская Е.В. Психология управления. - Харьков: ООО «Фортуна-пресс1998.
4. Вересов Н.Н. Психология управления: Учеб. пособие. - М.; МПСИ; Воронеж: Изд-во НПО «МОДЭК», 2001
5. Власова Н.М. Руководство по управлению людьми: инструменты власти и влияния. - М.: ИНФРА-М, 2000.
6. Гончаров В.В. Важнейшие понятия и концепции в современном управлении. - М.: МНИИПУ, 1998.
7. Занковский А.Н. Организационная психология: Учеб. пособие. - М.: Флинта: МПСИ, 2000.
8. Кабаченко Т.С. Психология в управлении человеческими ресурсами: Учебн. пособие. - СПб.: Питер. – 2003.
9. Почебут Л.Г., Чикер В.А. Организационная социальная психология. - СПб.: Речь, 2000
10. Психология бизнеса: Хрестоматия / Сост. К.В.Сельченок. - Мн.: Харвест, 1998
11. Психология и этика делового общения: Учебник для вузов / Под ред. проф. В.Н.Лавриненко. - 4-е изд., перераб. и доп. - М.: ЮНИТИ-ДАНА, 2003.
12. Суходольский Г.В. "Организационная психология":Гуманитарный центр, 2004.
13. Steve M. Jex, Thomas W. Britt "Organizational Psychology: A Scientist-Practitioner Approach" Publisher: Wiley, 2008, 648 Pages
14. Handbook of Industrial, Work and Organizational Psychology Volume 2: Organizational Psychology by Professor Neil Anderson, Deniz S Ones, Handan Kepir Sinangil, Dr. Chockalingam Viswesvaran Publisher: Sage Publications Ltd, Pages: 480, 2002
15. Colin Silverthorne "Organizational Psychology in Cross Cultural Perspective" NYU Press, 2005, 351 pages

| | | |
|---|---|---|
| **0303/B35** | **Հոգեբանական խորհրդատվություն** | **3 կրեդիտ** |
| **Շաբաթական 2 ժամ** | **8/24/0** | |

| VII կիսամյակ | Եզրափակիչ գնահատման |
|---|---|
| **Դասընթացնուղղված է** հոգեբանական խորհրդատվության հիմնական սկզբունքների, ձևերի և տեխնիկաների վերաբերյալ իմացության ձևավորմանը: | |
| **Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.**<br>*Գիտելիք և իմացություն*<br>• Հոգեբանական խորհրդատվության նպատակների, խնդիրների և ձևերի վերաբերյալ:<br>• Հոգեբանական խորհրդատվության կազմակերպման սկզբունքների վերաբերյալ:<br>• Հոգեբանական խորհրդատվության ընթացքում հոգեբանի կողմից կիրառվող մեթոդների և տեխնիկաների վերաբերյալ:<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• Վերլուծել հոգեբանական խորհրդատվության ծառայության կազմակերպման հիմնահարցերը:<br>• Վերլուծել հոգեբան-խորհրդատուի անձին ներկայացվող պահանջները, աշխատանքի էթիկական չափանիշները, հնարավորությունները և սահմանափակումները:<br>• Տարբերակել հոգեբանական խորհրդատվության գործընթացի փուլերը և յուրաքանչյուրի նշանակությունը:<br>• Տարբերակել հոգեբանական խորհրդատվության ընթացում կիրառվող տեխնիկաները և հնարները:<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• Կիրառել խորհրդատվական զրույցի հնարները այլ տիպի միջանձանյին հարաբերություններում /գործնական, մասնագիտական/<br>• Ճանաչել մարդկանց հաղորդակցման մեջ առաջացող դժվարությունները՝ պայմանավորված անձնային գործոններով և ներհոգեբանական խնդիրներով:<br>• Զարգացնելու մասնագիտական դերը և հոգեբանին անհրաժեշտ անձնային առանձնահատկությունները: | |
| **Համառոտ բովանդակությունը.**<br>Հոգեբանական խորհրդատվության նպատակները և խնդիրները: Հոգեբանական խորհրդատվություն և հոգեթերապիա: Հոգեբանական խնդրի էությունը, | |

| |
|---|
| տեսակները և կառուցվածքը: Անձի տեսությունների նշանակությունը խորհրդատվության համար:<br>Խորհրդատվության գործընթացի կառուցվածքը և փուլերը:Խորհրդատուի դերը խորհրդատվության գործընթացում: Խորհրդատուի արժեքային համակարգը և նշանակությունը խորհրդատվական գործընթացում: Խորհրդատուի մասնագիտական պատրաստվածության էությունը և ձևերը:<br>Խորհրդատվական կոնտակտ. էությունը և նշանակությունը: Թերապևտիկ մթնոլորտի հասկացությունը. թերապևտիկ մթնոլորտի ֆիզիկական և հուզական բաղադրիչները<br>Ոչ վերբալ և վերբալ շփման նշանակությունը խորհրդատվության համար:<br>Հոգեբանական անամնեզ և հոգեբանական դիագնոզի խնդիրը: Առաջին հանդիպման առանձնահատկությունն ու նշանակությունը: Խորհրդատվությունից հրաժարվելու պատճառները: Խորհրդատվական տեխնիկաներ. հարցադրում, խրախուսում, և հանգստացում, բովանդակության արտացոլում, զգացմունքների արտացոլում, լռություն, ինֆորմացիայի տրամադրում, մեկնաբանում, հակադրում, զգացմունքներ և ինքնաբացում: |
| **Գնահատման մեթոդները և չափանիշները**<br>• 2 ընթացիկգրավոր քննություն, յուրաքանչյուրը՝ 4 միավորառավելագույնարժեքով,<br>• եզրափակիչբանավորքննություն՝10միավորառավելագույնարժեքով, որոնցից 2-ըհատկացվումէդասընթացիշրջանակումհանձնարարվածառաջադրանքներին, իսկ8-ը՝ հարցատոմսիպատասխանին (հարցատոմսըպարունակումէ 3 հարց, առաջին երկու հարցը՝ 2 միավոր, իսկ երրորդ հարցը՝ 3: Միավորներիքայլը 0.5 է): |
| **Հիմնական գրականության ցանկը**<br>1. Кочюнас Р. Основы психологического консультирования<br>2. Линде Н. Д. Психологическое консультирование. Теория и практика. – М.: Аспект Пресс, 2009<br>3. Немов Р. С. Основы психологического консультирования – М.: Владос, 1999<br>4. Нельсон-Джоунс Р. Теория и практика консультирования – СПБ.: Питер, 2000 |

| |
|---|
| 5. Психологическое консультирование и психотерапия: Сборник статей/ Сост. А.Б. Орлов. М.: ООО "Вопросы психологии", 2004<br>6. Шнейдер Л.Б. Пособие по психологическому консультированию: Учебное пособие. – М.: Ось-89, 2003 |


| **0303/B27** | **Սոցիալական փոխներգործության հոգեբանություն** | **4 կրեդիտ** |
|---|---|---|
| 4 ժամ | 32/16/0 | |
| VI կիսամյակ | **Եզրափակիչ գնահատման** | |
| Դասընթացի նպատակն է ծանոթացնել բակալվրիատի ուսանողներին «սոցիալականփոխներգործություն» հասկացության հետ, բացահայտել դրա ձևավորման մեխանիզմները և օրինաչափությունները: | | |
| Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.<br>*Գիտելիք և իմացություն*<br>• Սոցիալական փոխներգործության հիմնական տեսությունների մասին<br>• Սոցիալականփոխներգործության ձևավորման մեխանիզմների մասին<br>• Սոցիալականփոխներգործությանտեսակների մասին<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• Բացատրել ներազդման`որպես սոցիալական փոխներգործության գրծառնության օրինաչափությունները<br>• Առանձնացնել սոցիալական փոխներգործության ուսումնասիրման մեթոդները<br>• Ճանաչել ներազդումըւ կանխելու և դրան հակադրվելու միջոցները<br>• Բացատրել ԶԼՄ-ների դերը սոցիալական փոխներգործության գործընթացում:<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>▪ վերլուծել իմիջի հոգեբանության առկա խնդիրները և առաջարկել դրանց լուծման եղանակներ,<br>▪ կառուցել իմիջի ձևավորման հոգեբանական ռազմավարություն: | | |
| *Համառոտ բովանդակությունը* | | |

| |
|---|
| «Սոցիալական փոխներգործության հոգեբանությունը» -ը հանդիսանում է ընդհանուր մասնագիտական դասընթաց՝ նախատեսված հոգեբանության բաժնի բակալվրիատի երրորդ կուրսի համար: Դասընթացը ներառում է տեսական և գործնական գիտելիքների համակարգ, որը ձևավորվել է սոցիալական, ներազդման և կառավարման հոգեբանության, ինչպես նաև մի շարք հարակից գիտությունների, այն է՝ գովազդի հոգեբանության և հասարակայնության հետ կապերի գիտահամակարգերի հատման արդյունքում: Դասընթացի բովանդակությունն է կազմում «սոցիալական փոխներգործություն» հասկացության նկարագիրը, և դրա զարգացման մեխանիզմները և օրինաչափությունները: Մարդկանց միջև կապը իրականացվում է փոխներգործության միջոցով: Կյանքի առաջին իսկ օրվանից երեխան կոնտակտի մեջ է շրջակա աշխարհի հետ՝սկզբից միայն մոր միջոցով, սկայն հետագայում կապերը շատանում և բարդանում են: Եվ այդ սկզբանական կապի հաստատման որակից է կախվաշ յուրաքանչյուր անձի փոխներգործության հետագա ընթացքը:<br>Դասընթացը ներառում է փոխներգործության երևույթի բազմամակարդակ ուսումնասիրություն: Առաջին հերթին, ուսանողներին է ներկայացվում փոխներ-գործությանմասին տեսությունները և դրա ներքին կառուցվածքը՝իր տարրատեսակներով: Այնուհետև, անդրադարձ է կատարվում սոցիալական փոխներգործության հիմնական տեսակներին, որոնք վերավերվում են ներազդմանը և մանիպուլյացիային: Ռ. Չալդինիի, Ֆ. Զիմբարդոյի և Վ. Շեյնովի կողմից մշակված կոնցեպցիաների շնորհիվ ուսանողները սովորելու են ճանաչել, կանխել ներազդումը կամ հակադրվել դրան: Սոցիալական փոխներգործությունը ցույց է տրվելու նաև դրական տեսանկյունից՝այն ոլորտներում, որտեղ դրա շնորհիվ հնարավոր է զարգացում, կառուցողականություն և առողջություն /կրթություն, հոգեթերապիա, առողջ ապրելակերպ/: Դասընթացը ներառում է նաև գիտելիքներ զանգվածային լրատվության միջոցների ներազդման օրինաչափությունների վերաբերյալ: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները.*<br>▪ Գիտելիքի ընթացիկ յուրացումը ստուգվում է միջանկյալ գրավոր աշխատանքներով՝ յուրաքանչյուրը՝ 4 միավոր<br>▪ Եզրափակիչ գնահատականը կազմվում է միաջանկյալ քննությունների,և ներկայության համար հատկացվող միավորների և եզրափակիչ բանավոր քննության |

| |
|---|
| գնահատականի հիման վրա /4+4+2+ 10/ |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. Зимбардо Ф., Ляйппе М. Социальное влияние.  СПб.: Питер, 2001. - 448 с.<br>2. Крысько В.Г. Социальная психология, М., изд-во ВЛАДОС-ПРЕСС, 2002.<br>3. Социальная психология, М.,2001.<br>4. Социальная психология, Хрестоматия.-М.,1999.<br>5. Социальная психология, М.,2002.<br>6. Сидоренко Е.В. Тренинг влияния и противостояния влиянию. Издательство: Речь, 2004 256с.<br>7. Чалдини Р. Психология влияния, М.,2003<br>8. Фрай Олдерт - Ложь. Три способа выявления. Как читать мысли лжеца, как обмануть детектор лжи. М: 2006. 256 с.<br>9. Шейнов В.П. Психологическое влияние, М.,изд-во Харвест, 2007. |

| | | |
|---|---|---|
| 0303/B30 | Հոգեբանության դասավանդման մեթոդիկա | 2 կրեդիտ |
| 2 ժամ | 32/0/0 | |
| VII կիսամյակ | Առանց եզրափակիչ գնահատման | |
| Դասընթացընպատակունիուսանողներինծանոթացնելուարդիուսուցմանհոգեբանությանհիմունքներին, հիմնականտեսություններին, որոնքընկածենդպրոցումևբուհումդասավանդմանկազմակերպմանհիմքում: | | |
| Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.<br>*Գիտելիք և իմացություն*<br>▪ ուսուցմանհոգեբանությանհիմնականտեսությունների մասին,<br>▪ ուսուցման կազմակերպմանհոգեբանականյուրահատկությունների մասին:<br>*Ունակ կլինի*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>▪ կիրառել դպրոցումևբուհումուսուցմանկազմակերպմանհիմնականեղանակները,<br>✓ *(ընդհանրական կարողություններ)* | | |

| |
|---|
| ▪ կտիրապետիհոգեբանությանտարբերբնագավառներիդասավանդմանպահանջ-ներիննիմտություններին: |
| *Համառոտ բովանդակություն*<br>**Բուհականուսուցմանառանձնահատկությունները: Ուսուցմանհո-գեբանությանհիմնականտեսությունները: Ակտիվդասավանդմանմեթոդները: Հոգեբանությանբնագավառներիդասավանդմանառանձնահատկությունները: Ուսանողիինքնուրույնուսումնականակտիվությանկազմակեր-պումնուվերահսկումը:** |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները*<br>▪ **2 ընթացիկ գրավոր ստուգում, յուրաքանչյուրը՝ 9 միավոր առավելագույն արժեքով:** |
| *Հիմնական գրականության ցանկը* |

| | | |
|---|---|---|
| **0303/B41** | **Մանկան զարգացման հոգեբանություն** | **2 կրեդիտ** |
| **Շաբաթական 2 ժամ** | **16/0/0/8** | |
| **VI կիսամյակ** | **Առանց եզրափակիչ գնահատման** | |
| **Դասընթացի նպատակնէ**ծանոթացնել ուսանողներին երեխայի զարգացման առանձնահատկություններին և օրինաչափություններին, առանձին հոգեկան գործընթացների զարգացման, երեխայի կենսաբանական, հոգեբանական, սոցիալական զարգացման առանձնահատկություններին, նրանց գործունեության ձևերին, ծնող-երեխա շփման առանձնահատկություններին: | | |
| **Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.**<br>*Գիտելիք և իմացություն*<br>• մանկան հոգեբանության և զարգացման հիմնական առանձնա-հատկություններիմասին, | | |

- յուրաքանչյուր տարիքային փուլում մանկան զարգացման օրինաչափություններիմասին,
- մանկան հոգեբանությունը լուսաբանող բազմաբնույթ տեսություններիվերաբերյալ,
- մանկան զարգացման ընթացքում ծագող հիմնական ճգնաժամերի և դրանց հաղթահարման ուղիներիմասին:

*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- տարբերակել մանկության տարբեր փուլերում գտնվող երեխայի պահանջմունքները, կարիքները,
- գնահատել մանկության տարբեր փուլերում գտնվող երեխայիզարգացմանը նպաստող և խոչընդոտող պայմանները:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- տարանջատելու տարբեր էտապներում գտնվող երեխայի կենսաբանական, հոգեբնական, սոցիալական զարգացման առանձնա-հատկությունները,
- տարբերակելու տարբեր տարիքային էտապներում գտնվող երեխայի առանձնահատկությունները, խնդիրները, զարգացմանը նպաստող պայմանները:

**Համառոտ բովանդակությունը.**

*Թեմա 1.* Երեխայի զարգացման վերաբերյալ տարբեր մոտեցումներ, զարգացման հիմնական տեսությունները: *Թեմա 2.* Նորածնության տարիքի առանձնահատկությունները: *Թեմա 3.* Վաղ տարիքի երեխայի զարգացման օրինաչափությունները: *Թեմա 4.* Նախադպրոցական տարիքում հոգեկանի զարգացումը: *Թեմա 5.* Ճգնաժամերի էությունը, երեխայի զարգացման ընթացքում էական ճգնաժամային փուլերի նկարագրությունը: *Թեմա 6.* Կրտսեր դպրոցական տարիք, առանձնահատկությունները, հոգեկան գործընթացների զարգացումը: *Թեմա 7.* Տարբեր տարիքային փուլերում գործունեության տեսակների առանձնահատկությունները: *Թեմա 8.* Առաջատար գործունեության

հասկացությունը, հոգեկան գործընթացների զարգացումը առաջատար գործունեության ներքո:

**Գնահատման մեթոդները և չափանիշները.**

- մասնակցություն՝ 2 միավոր առավելագույն արժեքով
- 2 ընթացիկ ստուգում (գրավորբեւբանավոր)՝ յուրաքանչյուրը 9 միավորառավելագույնարժեքով:

**Հիմնականգրականությանցանկը.**


1. Абрамова Г.С. “Возрастная психология”, М., Академический проект, 2000. – 624 с.
2. “Возрастная и педагогическая психология” Хрестоматия. Сост. Дубровина И.В., Прихожан А.М и др., М., Академия, 2005. – 368 с.
3. “Детская практическая психология”, под ред. Т.Д.Марцинковской, М., Гардарики, 2000. – 255 с.
4. Зеньковский В.В. “Психология детства”, М., Академия, 1996. – 348 с.
5. Крайг Г. "Психология развития", СПб., Речь, 2000. – 992 с.
6. Кулагина И.Ю. “Возрастная психология. Развитие ребенка от рождения до 17 лет”, М., УРАО, 1997. -176 с.
7. Мухина В.С. “Детская психология”, М., Просвещение, 2000. – 352 с.
8. Мухина В.С.”Возрастная психология”, М., Academia,1997. – 432 с.
9. Ньюкомб Н. “Развитие личности ребенка”, Спб., Питер, 2006. – 640 с.
10. Обухова Л.Ф. “Детская психология: теория, факты, проблемы”, М., Российское педагогическое агенство, 1995. -357 с.
11. Овчарова Р.В. “Практическая психология образования”, М., Академия, 2005. – 448 с.
12. “Психическое развитие младших школьников” под ред. В.В. Давыдова, М., Педагогика, 1990. – 682 с
13. AINSWORTH M., BLEHAR M., WATERS E., WALL S.1978, Patterns of Attachment, Hillsdale, NJ: Erlbaum
14. BREMNER J GAVIN (EDITOR), SLATER A. (EDITOR)2003, Theories of Infant Development, UK: Wiley-Blackwell
15. FEDOR-FREYBERG P., VOGEL M.,1988, Prenatal and Perinatal Psychology and Medicine, Carnforth, Lanc: Parthenon
16. FIELD T.1990, Infancy, Cambridge, MA: Harvard University Press
17. HUGES F.1991, Children, Play and Development, Boston: Allyn and Bacon
18. JOHNSON J., CHRISTIE J., YAWKEY T.1987, Play and Early Childhood Development, Glenview, IL:

Scott, Foresman
19. KITZINGER S., 1981, The Complete Book of Pregnancy and Childbirth, New York: Knopf
20. KOHLBERG L.1984, Essays of Moral Development, New York: Harper and Row
21. PIAJET J.1950, The Psichology Of Intellegence, New York: Harcourt Brace
22. WHITEBREAD D.2011, **Developmental Psychology and Early Childhood Education,** Cambridge University: *SAGE Publications Ltd*

| | | |
|---|---|---|
| **0303/B42** | **Հոգեբանական ծառայությունը դպրոցում** | **2 կրեդիտ** |
| **Շաբաթական 2 ժամ** | **24/0/0/8** | |
| **VII կիսամյակ** | **Առանց եզրափակիչ գնահատման** | |

**Դասընթացի նպատակն է** ծանոթացնել ժամանակակից դպրոցում հոգեբանական ծառայության կազմակերպման ավանդական և ժամանակակից մոտեցումներին, որի արդյունքում ակընկալվում է ուսանողների մոտ կայուն գիտելիքների և հմտությունների ձևավորումը դպրոցական ուսուցման տարբեր օղակներում հոգեբանական աշխատանքի ընթացքում կիրառելու համար:

**Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.**

*Գիտելիք և իմացություն*

- դպրոցական հոգեբանության մեջ կիրառվող հոգեախտորոշիչ, լուսավորող և խորհրդատվական աշխատանքի սկզբունքների մասին,
- դպրոցական հոգեբանական ծառայության կազմակերպման և գործարկման եղանակներն ու սկզբունքների մասին

*Ունակ կլինի*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- արդյունավետ համագործակցել դպրոցում ուսումնական գործընթացի մասնակիցներիհետ՝ երեխաների բարենպաստ հոգեբանական զարգացումը ապահովելու նպատակով,
- բացահայտել ուսումնական գործընթացի մասնակիցների խնդիրները ,
- կիրառել հոգեբանական ախտորոշման և կարգավորման արդյունավետ

| |
|---|
| մեթոդները ,<br>▪ կազմելու մեթոդական առաջարկներ, կազմակերպել կարգավորման և ուսուցման վերահսկման գործընթացները:<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>▪ զարգացնելու ինքնուրույն և ստեղծարար մտածողության հմտությունները՝ իրական իրադրություններում բանիմաց գործելուն պատրաստ լինելու համար: |
| ***Համառոտ բովանդակություն.***<br>Դասընթացը նվիրված է կրթության հոգեբանության հետևյալ թեմաներին՝ Դպրոցական հոգեբանական ծառայության պատմությունն ու իրավիճակը ժամանակակից շրջանում: Պրակտիկ հոգեբանի աշխատանքի սկզբունքները դպրոցում: Հոգեբանի գործունեության բովանդակությունը դպրոցում: Հոգեբանական խորհրդատվությունը և հոգեկարգավորումը դպրոցում: Հոգեբանի աշխատանքը կրտսեր դպրոցականների հետ: Հոգեբանի գործունեության բովանդակությունը դպրոցում և այլ կարևորր թեմաներին: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները.***<br>▪ մասնակցություն՝ 2 միավոր առավելագույն արժեքով<br>▪ 2 ընթացիկ ստուգում (գրավորեւբանավոր)՝ յուրաքանչյուրը 9 միավորառա-վելագույնարժեքով: |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Р. В. Овчарова. Технологии практического психологии образования. – М., 2001<br>2. Битянова. М.Р. Организация психологической работы в школе. – Изд-во Генезис, М., 2000.<br>3. Бурменская Г.В., Карабанова О.А., Лидерс А.Г., Возрастно-психологическое консультирование. Проблемы психического развития детей. – М., 1990.<br>4. Дубровина И.В. Школьная психологическая служба: вопросы теории и практики. М., Педагогика. 1991<br>5. Психическое здоровье детей и подростков в контексте психологической службы / Руководство практического психолога. / Под.ред. Дубровиной И.В.<br>6. Вачков В. И. Групповые методы в работе школьного психолога: Учебно-методологическое пособие. – М.: Ось-89, 2002. С. 53-76<br>7. Вачков В. И. Основы технологии группового тренинга. Психотехники: Учеб. |

пособие. – 3-е изд, - М.: Ось-89, 2005с. – С. 56

8. Венгер А.Л., Цукерман Г.А. Схема индивидуального обследования детей младшего школьного возраста. – Томск. 1993.
9. Возрастная и педагогическая психология. Хрестоматия. Москва- 2003. С-91-93.
10. Истратова О. Н., Эксакусто Т. В. Справочник психолога средней школы. – Ростов н /Д: Феникс, 2003.

| | | |
|---|---|---|
| 0303/B42 | Սեռի հոգեբանություն | 2 կրեդիտ |
| Շաբաթական 2 ժամ | 24/0/0/8 | |
| VII կիսամյակ | Առանց եզրափակիչ գնահատման | |

**Դասընթացի նպատակն է** ծանոթացնել ուսանողներին սեռային տարբերակման էությանըևմեկնաբանողտեսություններին, սեռային տարբերություններին, հոգեսեռականզարգացմանտարիքայինառանձնահատկություններին, սեռային դաստիարակությանհիմնախնդիրներին:

**Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.**

*Գիտելիք և իմացություն*

- սեռային տարբերակման էվոլյուցիոն և գենետիկ ասպեկտների, սեռային տարբերակման մինչծննդյան և հետծննդյան փուլերի, հետծննդյան սեռային տարբերակումը մեկնաբանող տեսություններիվերաբերյալ:
- մորֆոլոգիական, ֆիզիոլոգիական և հոգեբանական սեռային տարբերությունների, սեռային հասունացման շրջանի հոգեբանական առանձնահատկությունների վերաբերյալ
- սեռային դաստիարակության, սեռական կողմնորոշման և դրա խանգարումների, արական և իգական սեռականության առանձնահատկությունների վերաբերյալ:

*Ունակ կլինի*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- հասկանալ և գնահատել հոգեսեռական զարգացման օրինաչափ դրսևորումները,
- իրականացնել լուսավորչական աշխատանք սեռայի դաստիարակության խնդիրներով:

✓ *(ընդհանրական կարողություններ)*
- օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ,
- ստեղծագործաբար կիրառել յուրացրած գիտելիքը և հմտությունները:

***Համառոտ բովանդակություն.***
Սեռային տարբերակման նշանակությունը: Սեռային տարբերակման փուլերը: Անտենատալ սեռային տարբերակում: Հետծննդյան սեռային տարբերակում: Սեռային տարբերություններ՝ մորֆոլոգիական, ֆիզիոլոգիական, ֆունկցիոնալ ասիմմետրիա: Սեռական տարբերակման բնույթը: Կենսաբանական, հոգեբանական և մշակութաբանական մոտեցումներ: Սեռային նույնականության փուլերը: Սեռային սերեր, սեռադերային կարծրատիպեր: Հոգեսեռական զարգացումը և սեռական վարքը նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքում: Հոգեսեռական զարգացումը և սեռական վարքը դեռահասության տարիքում: Սեռական հասունացման կենսաբանական մեխանիզմները և հոգեբանական առանձնահատկությունները: Հոգեսեռական տարբերակման դետերմինատները: Սեռական կողմնորոշում և սեռականություն: Սեռական կողնորոշման ձևավորումը, բաղադրիչները: Սեռական կողմնորոշման տեսակները և խանգարումները: Սեռ, սեռականություն, էրոտիզմ: Արական և իգական սեռականության տարբերությունները: Սեռական գրավչություն: Սեռական դաստիարակություն:

***Գնահատման մեթոդները և չափանիշները.***
- մասնակցություն՝ 2 միավոր առավելագույն արժեքով
- 2 ընթացիկ ստուգում (գրավորեւբանավոր)՝ յուրաքանչյուրը 9 միավորառա-վելագույնարժեքով:

***Հիմնական գրականության ցանկը***

1. Խաչատրյան Ն. Գենդերի սոցիալական հոգեբանություն: Եր., 2006 թ.
2. Հարությունյան Ս., Մարդու հոգեսեռական զարգացման հիմունքները. Եր., ԵՊՀ Հրատ., 2004, 228 էջ
3. Ильин. Дифференциальная психофизиология мужчины и женщины. Питер. 2007
4. Ильин Е.П., Пол и гендер. Питер. 2010

| | | |
|---|---|---|
| **0303/B31** | **Կոնֆլիկտի հոգեբանություն** | **4 կրեդիտ** |
| 4 ժամ | 32/0/32 | |
| VII կիսամյակ | **Եզրափակիչ գնահատման** | |

Դասընթացինպատակնէուսանողին ծանոթացնել կոնֆլիկտի հոգեբանական դիտարկման հիմնադրույթներին, տալ համակարգված գիտելիք կոնֆլիկտների, դրանց առաջացման, ընթացքի և հանգուցալուծման հոգեբանական մեխանիզմների մասին: Ուսանողների շրջանում ձևավորել կոնֆլիկտների տարբերակման, նախազգուշացման, կանխարգելման և հանգուցալուծման հմտություններ:

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

*Գիտելիք և իմացություն*

- կոնֆլիկտի հոգեբանության հիմնական դրույթների մասին
- կոնֆլիկտների առաջացմանն, ընթացքին ու հանգուցալուծմանը վերաբերող հոգեբանական մոտեցումներիմասին:

*Ունակ կլինի.*

*(բուն մասնագիտական կարողություններ)*

- կանխորոշել և տարբերակել կոնֆլիկտային իրավիճակները,
- հայտնաբերել կոնֆլիկտների առաջացման հոգեբանական գործոնները,
- կանխատեսել և հնարավորինս կանխարգելել կոնֆլիկտային իրավիճակի զարգացումը,
- կանխատեսել կոնֆլիկտային իրավիճակում հայտնված անձի, խմբի հնարավոր վարքային դրսևորումները,
- ընտրել կոնֆլիկտի հանգուցալուծման առավել արդյունավետ մարտավարությունն ու իրականացնել այն:

*(ընդհանրական կարողություններ)*

- կողմնորոշվել կենսական բարդ, կոնֆլիկտային իրավիճակներում,
- օգնել շրջապատի մարդկանց կոնֆլիկտային իրավիճակներում արդյունավետ գործելու, կոնֆլիկտներին կոնստրուկտիվ լուծումներ տալու հարցում:

*Համառոտ բովանդակությունը*

Ներածություն. կոնֆլիկտի հոգեբանությունը որպես գիտակարգ: Կոնֆլիկտի հոգեբանության գաղափարների պատմական զարգացումը: Կոնֆլիկտ հասկացության

| |
|---|
| սահմանումը:<br>Կոնֆլիկտի կառուցվածքային, գործառութային, ուժաբանական, պատճառագիտական նկարագրությունը: Կոնֆլիկտների ընթացքը պայմանավորող հոգեբանական գործոնները: Կոնֆլիկտների դասակարգման հիմնական սկզբունքները: Կոնֆլիկտների տեսակներն ու դրանց առանձնահատկությունները: Անձը կոնֆլիկտում. կոնֆլիկտային վարք, կոնֆլիկտային մարտավարություն: Կոնֆլիկտի կառավարում հասկացությունը. կոնֆլիկտի կանխատեսում, կանխարգելում, հրահրում, ուղղորդում, հանգուցալուծում: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները.*<br>▪ 2 ընթացիկ քննություն /գրավոր, բանավոր/, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով,<br>▪ եզրափակիչ բանավոր քննություն՝ 10 միավոր առավելագույն արժեքով(հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 3,3,2,2 միավոր: Միավորների քայլը 0.5 է): |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. Анцупов А. Я., Шипилов А. И. Конфликтология: Учебник для вузов. — М.: Эксмо, 2009<br>2. Белкин А. С, Жаворонков В. Д., Зимина И. С. Конфликтология: Наука о гармонии. — Екатеринбург: «Глаголъ», 1995.<br>3. Гришина Н. В. Психология конфликта. — СПб.: Питер, 2004.<br>4. Громова О. Н. Конфликтология. Курс лекций. — М.: Ассоциация авторов и издателей «Тандем», ЭКМОС, 2000.<br>5. Дмитриев А. В. Конфликтология. – М.: Гардарики. 2000.<br>6. Зеркин Д. П. Основы конфликтологии: Курс лекций. — Ростов н/Д: Феникс, 1998.<br>7. Козырев Г. И. Введение в конфликтологию. — М.: Владос, 1999.<br>8. Конфликтология / Под ред. А. С. Кармина. — СПб.: Лань, 1999.<br>9. Коузер Л. Основы конфликтологии. – СПб.: Светлячок. 1999.<br>10. Основы конфликтологии. / Под ред. В. Н. Кудрявцева. — М.: Юристъ. 1997.<br>11. Цибульская М. В. и др. Конфликтология. — М.: МГИЭСИ, 1998.<br>12. Դասախոսությունների տեքստեր՝ էլեկտրոնային կրիչով |

<table>
<tr><td>0303/B32</td><td>Իրավաբանական հոգեբանություն և փորձաքննություն</td><td>6 կրեդիտ</td></tr>
<tr><td>6 ժամ</td><td colspan="2">56/0/40</td></tr>
<tr><td>VII կիսամյակ</td><td colspan="2">Եզրափակիչ գնահատման</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացի նպատակն է Փիլիսոփայությաննհոգեբանությանֆակուլտետիհոգեբանությանբաժնիբակալավրիատի ուսանողներին ծանոթացնել իրավաբանականհոգեբանությանոլորտիտեսականնկիրառականխնդիրներին:</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.<br>Գիտելիք և իմացություն<br>• Հանցագործության ծագման և հանցագործ անձի ձևավորման հոգեբանական նախադրյալների և օրինաչափությունների մասին<br>• Հանցագործությունների կանխարգելման սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների մասին<br>• Իրավաբանական գործունեության սոցիալ-հոգեբանական պատրաստվածության առանձնահատկությունների մասին<br>• Դատահոգեբանական փորձաքննությունների պրակտիկայի ժամանակակից առանձնահատկությունների մասին<br>Ունակ կլինի.<br>✓ (բուն մասնագիտական կարողություններ)<br>▪ մեկնաբանելանձիքրեածիննհանցածինվարքիձևավորման, զարգացմաննդրսևորմանհոգեբանականմեխանիզմները, անձիքրեականացանօրինաչափությունները<br>▪ ձևավորելևզարգացնելկարողություններստացվածհոգեբանականգիտելիքներըիրավաբանականգործունեությանմեջկիրառելուհամար<br>▪ ուսումնասիրելանձիբարոյագիտակցությաննիրավագիտակցությանձևավորմանհոգեբանականպայմաններըևգործոնները,</td></tr>
</table>

| |
|---|
| դիտարկելանձիսոցիալիզացիայիգործընթացըանբարենպաստհոգեբանականպայմանն երիազդեցություններքո<br>▪ ձևավորելգիտելիքներիհամակարգհանցավորվարքիհոգեբանականխնդիրներին դրա կանխարգելման մասին<br>▪ ձևավորել հարցադրումներ դատահոգեբանական փորձաքննությունների հետ կապված<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• ձևավորելուգիտելիքներիհամակարգհոգեբանությաննիրավունքիփոխկապակցվածությ անվերաբերյալ, ուղղվածանձիիրավագիտակցությանզարգացմաննդրավրաազդեցությունունեցողերևույթներինգնահատականտալուն<br>• հանցագործ անձի համակարգային հոգեբանական վերլուծության նպատակով համադրել փաստեր, կատարել հետևություններ, գնահատելկանխարգելմանսոցիալ-հոգեբանականհնարավորությունները<br>• կիրառելսոցիալ-հոգեբանականպատրաստվածությանհնարքներըիրավաբանականգործունեությաննառավելարդյունավետդարձնելուհամար<br>• քննադատական և ստեղծագործ մտածողությամբ կիրառել ու զարգացնել ունեցած գիտելիքները |
| *Համառոտ բովանդակությունը*<br>Իրավաբանական հոգեբանության առարկան, խնդիրները, մեթոդները: Իրավաբանական հոգեբանության կառուցվածքը: Անձիբարոյազանցիիրավազանցվարքիկառուցվածքը: Անձիսոցիալականախտահարմանգործոնները: Հանցագործիանձիհոգեբանականառանձնահատկությունները: Հանցավորվարքիհոգեբանականկառուցվածքը: Քրեականվարքիակունքները. ուսուցումնիրավիճակայինգործոններ: Հանցագործությունններհոգեկանխանգարումները: Մարդկայինագրեսիաննբռնությունը: Անչափահաս հանցագործների հոգեբանությունը: Ընտանեկանբռնություն: Սեռականբնույթիհանցագործություններ: Կազմակերպված |

| |
|---|
| հանցագործության հոգեբանությունը: Հանցագործությունների պրոֆիլակտիկայի հոգեբանական նախադրյալները: Քննչական գործունեության հոգեբանություն: Դատական հոգեբանություն: Փաստաբանական գործունեության հոգեբանություն: Քրեակատարողական հոգեբանություն: Դատահոգեբանական փորձաքննություններ: Միջնորդությունը՝ վեճի լուծման այլընտրանքային եղանակ: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները*<br>Գրավորհարցում: Գրավոր երկու միջանկյալ քննությունները կրելու են թեստի բնույթ: Հարցերը ունենալու են բազմակի պատասխաններ, որոնցին մեկն է լինելու ճիշտ, ինչպես նաև լինելու են ճիշտ և սխալ պատասխանների տարբերակներ: Յուրաքանչյուր թեստի առավելագույն արժեքը լինելու է 4 միավոր: Միավորներիքայլը 0,5 է:<br>Եզրափակիչքննություն. Բանավորհարցում:<br>Ստուգմանընթացքումյուրաքանչյուրուսանողիտրվումէհարցատոմս, որըպարունակումէ 2 տեսական՝ 1 միավոր արժեքովև 1 գործնական առաջադրանք[a] 2միավորարժեքով:<br>Միավորներիքայլը 0,5 է: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. Աղուզումցյան Ռ. Գասպարյան Ա. Մելքոնյան Վ. Իրավաբանական հոգեբանություն, Երևան, 2002<br>2. Է. Գրին, Ս. Արզումանյան, Իրավաբանական հոգեբանություն, Երևան 2003<br>3. Է. Գրին, Դատահոգեբանական փորձաքննություն, Երևան, 2002<br>4. Է. Գրին, Քրեակատարողական հոգեբանություն, Երևան, 2002<br>5. Է. Գրին, Փաստաբանական գործունեության հոգեբանություն, Երևան, 2002<br>6. Է. Գրին, Դատական հոգեբանություն, Երևան, 2002<br>7. Антонян Ю.М. и др. Психология преступника и расследования преступлений.-М., 1996<br>8. Бартол К. Психология криминального поведения, СПб, 2004<br>9. Башкатов И.П.Психология неформальных подростково-молодежных групп . - М., 2000.<br>10. Берковиц Л. Агрессия-причины, последствия и контроль, Москва, 2001<br>11. Васильев В.Л.Юридическая психология: Учеб.пособие для студ.вузов . - СПб., 2000.<br>12. Зелинский А.Ф.Криминальная психология. - Киев, 1999. |

13. Карменов М.М. Изучение следователем психологии обвиняемого. М., 1987.
14. Кандыба В.М. Криминальный гипноз. Примеры технологий криминального психовоздействия.-Спб.,2001
15. Мамайчук Судебно-психологическая экспертиза личности
16. Чуфаровский Общая и юридическая психология


| | | |
|---|---|---|
| **0303/B36** | **Իմիջի հոգեբանության հիմունքներ** | **2 կրեդիտ** |
| **2 ժամ** | **24/0/8** | |
| **VII կիսամյակ** | **Առանց Եզրափակիչ գնահատման** | |

Դասընթացի նպատակն է ծանոթացնել բակալվրիատի ուսանողներին «իմիջ» հասկացության հետ, բացահայտել դրա ձևավորման մեխանիզմները և օրինաչափությունները:

**Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.**

*Գիտելիք և իմացություն*

- Ի ցույց հանել իմիջի գործառնության տարբեր դաշտեր
- Ընդգծել իմիջի հոգեբանական գործածելիության նշանակալիությունը
- Տեսականորեն հիմնավորել իմիջի սոցիալ-հոգեբանական կառուցվածքը
- Տարբերակել իմիջի տեսակները
- Առանձնացնել իմիջի ուսումնասիրման հիմնական մեթոդները և ձևերը

*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- Տարբերակել իմիջի կիրառման հիմնական ոլորտները
- Որոշել իմիջի տեղը անձի կառուցվածքում
- Կիրառել իմիջի ուսումնասիրման մեթոդները
- Բացատրել խմբային և էթնիկական իմիջի գործառնության յուրահատկություննե-

րը

- Բացատրել քաղաքական իմիջի ու դրա գործելակերպի օրինաչափությունները:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- վերլուծել իմիջի հոգեբանության առկա խնդիրները և առաջարկել դրանց լուծման եղանակներ,
- կառուցել իմիջի ձևավորման հոգեբանական ռազմավարություն:

*Համառոտ բովանդակությունը*

«Իմիջի հոգեբանության հիմունքներ» -ը հանդիսանում է հատուկ մասնագիտական դասընթաց՝ նախատեսված հոգեբանության բաժնի բակալավրիատի չորրորդ կուրսի համար: Դասընթացը ներառում է տեսական և գործնական գիտելիքների համակարգ, որը ձևավորվել է սոցիալական, քաղաքական և կառավարման հոգեբանության, ինչպես նաև մի շարք հարակից գիտությունների, այն է՝ քաղաքագիտության, մշակութաբանության, գովազդի հոգեբանության և հասարակայնության հետ կապերի գիտահամակարգերի հատման արդյունքում: Դասընթացի բովանդակությունն է կազմում «իմիջ» հասկացության հոգեբանական նկարագիրը, և դրա ձևավորման հոգեբանական մեխանիզմները և օրինաչափությունները: Ներառված են նաև գիտելիքներ այն հիմնական հասարակական ոլորտնեի վերաբերյալ, որոնցում «իմիջ»-ի երևույթը լայն տարածում ունի:

«Իմիջ» հասկացությունը (անգլ. Image – կերպար, պատկեր) իր այսօրվա իմաստով գործածության մեջ է մտել XX դ. 40-50-կան թթ. ԱՄՆ-ում և Եվրոպայում՝ դառնալով քաղաքական պայքարի կարևորագույն հայեցակետերից մեկը: Այնուհետև, այս հասկացությունը տարածվեց հասարակական կյանքի մյուս ոլորտներում, հատկապես՝շոու-բիզնեսի բնագավառում: Զանգվածային լրատվության միջոցների զարգացումը նպաստեց իմիջի նշանակալիության բարձրացմանը, քանի որ բարձրացավ տպավորություն ստեղծելու, որևէ կերպարանքով հանդես գալու, հասարակայնության սպասելիքներին ամեն գնով համապատասխանելու կարևորությունը: Արդեն պարզ էր, որ ոչ բոլոր քաղաքական կամ հասարակական գործիչները ինքնին համապատասխանում էին վերը նշվածին, ուստի խիստ կարիք առաջացավ այնպիսի մասնագետների, որոնք կօգնեին ստեղծել մի կերպար, որը կլիներ հաճելի, պարզ ու

| |
|---|
| հասանելի հասարակայնության համար՝ վայելելով նրա համակրանքը, և, հետևաբար՝ քվեները: Այս նկատառումներից ելնելով՝ ԱՄՆ-ում և Եվրոպայում XX դարի կեսերին ձևավորվեց իմիջմեյքինգը /անգլ. Image - կերպար making- արարել/, որը հանդիսացավ զուտ կիրառական ուղղություն՝առաջարկելով կոնկրետ գործիքներ և միջոցներէարդյունավետ իմիջ ստեղծելու համար: Իմիջմեյքինգը օգտագործում է հոգեբանական որոշակի գիտելիքներ, սակայն ավելի շատ ուղղված ներազդմանը և մանիպուլյացիային: Հիմնական շեշտը իմիջմեյքինգում դրվում էր ստեղծվող կերպարի արտաքին հատկանիշների՝հագուստի, տեսքի,կազմվածքի, ձայնի տոնայնության, ժեստերի և դիմախաղի վրա: Հոգեբանությունը իմիջմեյքինգում կատարում էր «խորամանկ հնարքի» թաքնված դեր: XX դարի 80-կան թթ. իմիջի հիմնահարցերով սկսեցին զբաղվել մի շարք այլ գիտություններ, այդ թվում նաև հոգեբանությունը: Արդեն պարզ էր, որ արտաքինի վրա հիմնված, արհեստականորեն ստեղծված և մանիպուլյատիվ բնույթ ունեցող իմիջը չի կարող երկարատև ազդեցություն ունենալ մարդկանց գիտակցության վրա, ուստի պահանջարկ առաջացավ ուսումնասիրել այն ավելի խորքային մակարդակի վրա: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դարձնելով իմիջը անձի մի մաս՝դինամիկ և փոփոխական, հնարավոր է բարձրացնել դրա արդյունավետությունը: Հոգեբանոթյունը ուներ հարուստ գործիքակազմ և առաջարկեց բազմաթիվ մեթոդներ՝ իմիջի ձևավորման և արդյունավետ գործունեության համար:<br>Տվյալ դասընթացը ներառում է իմիջի հոգեբանական առանձհատկությունների նկարագրությունը, իմիջի՝որպես անձի Ես-կոնցեպցիայի բաղադրիչ մասի գործառնության մեխանիզմների բացահայտումը, ինչպես նաև ընդգրկում է հասարակական կյանքի հիմնական ոլորտները և ակտիվության նեղ մասնագիտական դաշտերը, որոնք ապահովում են իմիջի գործածելիությունը ու տարածումը: Դասախոսությունների նյութը հավաքված է սոցիալական, քաղաքական հոգեբանության, իմիջմեյքինգի, հասարակայնության հետ կապերի վերաբերյալ գրականությունից: Մենք նաև օգտագործել ենք հայտնի պատմական և մշակութային գործիչների կենսագրությունները և դրանց վերլուծությունը, ինչը և ապացուցում, և հերքում է իմիջի գործառնության օրինաչափությունները: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները.* |

| |
|---|
| ▪ Գիտելիքի յուրացումը ստուգվում է ընթացիկ ստուգողական աշխատանքներով՝ բանավոր և գրավոր, յուրաքանչյուրը՝ 9միավոր<br>▪ Եզրափակիչ գնահատականը կազմվում է ստուգումների և ներկայության համար հատկացվող միավորների հիման վրա /9+9+2/ |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. Богданов Е., Зазыкин В. Психологические основы Паблик рилейшнз. СПб., 2002г. – 256с.<br>2. Грин Р. 48 законов власти., М., 2001.<br>3. Имидж лидера:Психологическое пособие для политиков./под ред. Б.В. Егоровой-Гартман.М.,1994.<br>4. Имиджеология. Как нравиться людям. М.: Народное образование, 2002.-575с.<br>5. Крысько В.Г. Социальная психология, М., изд-во ВЛАДОС-ПРЕСС, 2002.<br>6. Назаретян А,П. Агрессивная толпа, массовая паника, слухи. Лекции по социлаьной и политической психологии. СПб-Питер,2003.<br>7. Ольшанский Д.В. Основы политической психологии, изд-во “Деловая книга”,2001.<br>8. Панасюк А.Ю. Я- Ваш имиджмейкер и готов помочь сформировать Ваш профессиональный имидж. М.: Дело, 2003.- 240с.<br>9. Перелыгина Е.Б. Психология имиджа: Учебное пособие, М.,Аспект Пресс,2002.<br>10. Политическая психология /под ред.А.А. Деркача/, М.,2003.<br>11. Почепцов Г.Г. Профессия: имиджмейкер. СПб.: Алетейя, 2001. - 256 с.<br>12. Психология и психоанализ власти, в 2-х томах. Хрестоматия. Самара, изд. Дом «БАХРАХ»,1999.<br>13. Социальная психология, М.,2001.<br>14. Социальная психология, Хрестоматия.-М.,1999.<br>15. Социальная психология, М.,2002.<br>16. Шейнов В.П. Психология власти, М.,Ось-89,2003.<br>17. Щербатых Ю.В. Психология выборов. Изд-во ЭКСМО, 2007.- 400с.<br>18. Մելքոնյան Ն, Քաղաքական իմիջ: Մեկնաբանություններ և ձևավորման սկզբունքներ: Երևանի համալսարանի հրատ., 2007: |

| **0303/B33** | **Ստեղծագործության** | **6 կրեդիտ** |
|---|---|---|

| | **հոգեբանություն** | |
|---|---|---|
| 4 ժամ | 32/0/32 | |
| VII կիսամյակ | **Եզրափակիչ գնահատման** | |
| Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել լիարժեք գիտելիքներ ստեղծագործության հոգեբանության հիմնական գաղափարների մասին: | | |
| Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.<br>*Գիտելիք և իմացություն*<br>1. Ստեղծագործության հոգեբանության տեսություններից<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>2. Օգտագործել ստեղծագործության հոգեբանության գիտելիքները հոգեթերապևտիկ և զարգացնող աշխատանքներում:<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>✓ Մշակել ու ներկայացնել հանձնարարված մենագրությունները | | |
| *Համառոտ բովանդակությունը*<br>Անձի մասին ժամանակակից տեսությունները. Էլիս, Մոսկովիչի, Բանդուրա, Կոխուտ, Վիննիկոտ, Գրոֆ, Ասաջոլի: Դասական տեսությունների կիրառումը ժամանակակից հոգեբանության պարադիգմալ շրջանակներում: | | |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները.*<br>▪ 2 ընթացիկ քննություն /գրավոր, բանավոր/, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով,<br>▪ եզրափակիչ բանավոր քննություն՝ 10 միավոր առավելագույն արժեքով(հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ 4, 3,3 միավոր: Միավորների քայլը 0.5 է): | | |

*Հիմնական գրականության ցանկը*


1. Թութունջյան Հ., <<Հոգեբանական էտյուդներ>>, Երևան, 1991 թ.
2. Арнаудов М., ,,Психология литературного творчества'', Москва, 1970 г.
3. Выгодский Л. С., ,,Психология исскуства'', Москва, 1976 г.
4. Пономарев, ,,Психология творчества'', 1976
5. Фрейд З., ,,Художник и фантазирование'', Москва, 1995 г.


| | | |
|---|---|---|
| **0303/B34** | **Ինքնակարգավորման հիմունքներ** | **6 կրեդիտ** |
| 4 ժամ | 32/32/0 | |
| VII կիսամյակ | **Առանց եզրափակիչ գնահատման** | |

*Դասընթացինպատակնէ*ուսանողներիմոտձևավորելինքնահետազոտմանևինքնիրենևհոեբանականո զնությունցուցաբերելումոտիվացիա:
Ինքնակարգավորմանկոնկրետմեթոդիկաներիևմեթոդներիուսումնասիրությանընթացքումնպաստե լուսանողներիկողմիցդրանցյուրացմանը:
Գործնականպարապմունքներիժամանակիոզեբանականտրենինգիմիջոցովուսանողներըկարողենյո ւացնելինքնակարգավորմանմիջոցներնուեղանակները:

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.
*Գիտելիք և իմացություն*
ինքնակարգավորմանընդհանուրտեսական, պատմական, էթիկական, մեթոդականտեսանկյուններիմասին
• կյուրացնիդասընթացի գիտականհասկացությունները
*Ունակ կլինի.*
✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*
• կկարողանավերլուծելևհամեմատելինքնակարգավորմանմեթոդներնումեթոդիկաները, իմաստավորելևարժևորելինքնադիտարկմանհմտությունները
•
կգիտակցիինքնահետազոտմանևինքնակարգավորմանկարևորությունըմանկավարժևհոգեբ անիաշխատանքում, մասնագիտականինքնորոշմանմեջ,

| |
|---|
| ձեռքկբերիինքնադիտարկմանկարողություններ<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>ձեռքկբերիինքնակարգավորմանհիմնահարցերինվերաբերող գիտական գրականությանմշակմանհմտություններ<br>*Համառոտ բովանդակությունը*<br>Ինքնակարգավորմաննինքնակառավարման գործընթացներիհոգեբանականբնութագրությունը: Ինքնակարգավորմանտեսականմոտեցումները: Ինքնակար-գավրրմանմեթոդներիընդհանուրբնութագրությունևվերլուծություն: Ինքնագիտակցություննինքնակարգավորում: Ինքնաճանաչում, ինքնավերահսկում, ինքնակազմակերպում: Ինքնակարգավորումնինքնագիտակցությանհուզականբաղադրամասերը: Ինքնակարգավորմանմեխանիզմներըևմակարդակները: Մարդկայինմարմինըորպեսէներգետիկհամակարգ: Ռելաքսայինվիճակիհամակարգը, ֆունկցիաները, մեխանիզմները: Ռելաքսայինվիճակիառաջացմանպայմանները: Ռելաքսայինպրոցեսիերեքմակարդակները: Ինքնակարգավորմանձևերիդասակարգումըմկաններիթուլացմանհիմքիվրա: Պարայինշարժողականնմարմնականկողմնորոշումունեցողհոգետեխնիկաներ: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները.*<br>▪ 2 ընթացիկ ստուգում/գրավոր նրանավոր/, յուրաքանչյուրը՝ 9 միավոր առավելագույն արժեքով:<br>▪ Առանցեզրափակիչքննության: Հարցատոմսըպարունակումէ 3 հարց՝ 3,3,3 միավորով: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br><br>1. Прохоров, Александр Октябринович. Саморегуляция психических состояний: феноменология, механизмы,закономерности/А.О.Прохоров.-М.:ПЕРСЭ,2005.-352с<br>2. Гремлинг С., Ауэрбах С. Практикум по управлению стрессом. – Спб: Питер, 2002. – 240 с.<br>3. Гримак Л.П. Как жить в гармонии с собой: Начала психологии активности. – М.: ОЛМА-ПРЕСС, 2000. – 351 с.<br>4. Гринберг Дж. Управление стрессом. – Спб: Питер, 2004.- 496 с.<br>5. Марищук В.Л., Евдокимов В.И. Поведение и саморегуляция человека в условиях стресса. – Спб: Изд. Дом «Сентябрь», 2001. – 260 с. |

6. Моросанова В.И. Индивидуальный стиль саморегуляции. – М.: Наука, 2001.
7. Панкратов В.Н. Саморегуляция психического здоровья: Практическое руководство. – М.: Ин-т Психотерапии, 2001. – 352 с.
8. Алиев Х. Ключ к себе: Этюды о саморегуляции. – М.: Молодая гвардия, 1990. – 223 с.
9. Вильямс К. Тренинг по управлению стрессом. – М.: ЭКСМО, 2002. – 272 с.
10. Воробейчик Я.Н. Руководство по аутопсихотерапии. – Одесса, 2004. = 360с.


| | | |
|---|---|---|
| **0303/B37** | **Անձնային խանգարումների հոգեբանություն** | **3 կրեդիտ** |
| 8ժամ | 24/0/8 | |
| VIII կիսամյակ | **Եզրափակիչ գնահատման** | |

Դասընթացի նպատակն է ուսանողին ներկայացնել անձնային խանգարումների ծագումնաբանությունը, ընթացքը, տեսակները և ներքին հոգեբանական օրինաչափությունները, մասնավորապես՝ հոգեդինամիկ և կոգնիտիվ տեսությունների շրջանակներում:

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

*Գիտելիք և իմացություն*

- Անձնային խանգարումների ծագման և ձևավորման դինամիկայի հոգեբանական առանձնահատկություններից:
- Անձնային խանգարումների դիֆֆերենցիալ ախտորոշումից և դասակարգումից:

*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- Տարանջատել անձնային տարբեր խանգարումների ախտանիշները:
- Օգտվել անձնային խանգարումների ախտորոշման համակարգերից:
- Բացատրել անձնային խանագարումների առաջացման հոգեդինամիկ և կոգնիտիվ մոդելները:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- Իրականացնել վերլուծական /մտածական/ աշխատանք:
- Համադրել տեսական և գործնական գիտելիքները:

- Ճանաչել սեփական անձնային հակվածությունները:

*Համառոտ բովանդակություն*

Անձի կառուցվածքը և տեսությունները: Անձնային խանազարումների սահմանումը, հասկացումը հոգեբուժության մեջ: Անձնային խանգարումների հոգեդինամիկհասկացումը: Անձնային խանգարումների կոգնիտիվ հոգեբանական հասկացումը: Անձնային խանգարումների տիպերը ըստ ախտորոշիչ համակարգերի: Առանձին անձնային խանգարումների բնորոշումները և դիֆֆերենցիալ ախտորոշումը: Անձնային խանգարումների հոգեթերապիայի առանձնահատկությունները հոգեդինամիկ և կոգնիտիվ-վարքաբանական մոդելներում:

*Գնահատման մեթոդները և չափանիշները.*

- 2 գրավոր ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով,
- եզրափակիչ բանավոր քննություն՝ 10 միավոր առավելագույն արժեքով(հարցատոմսը պարունակում է 4 հարց, համապատասխանաբար՝ 3, 3, 2, 2 միավոր արժեքով: Միավորների քայլը 0.5 է):

*Հիմնական գրականության ցանկը*

1. Мак-Вильямс Н. Психоаналитическая диагностика: Понимание структуры личности в клиническом процессе . М.: Независимая фирма "Класс", 1998.
2. Кернберг О. Тяжелые личностные расстройства. Стратегии психотерапии. М.: Независимая фирма "Класс", 2001
3. Когнитивная психотерапия расстройств личности / Под ред. А.Бека и А.Фримена. СПб.: Питер, 2002.
4. Личко А. Е.Психопатии и акцентуации характера у подростков / Под ред. Ю. Б. Гиппенрейтер, В. Я. Романова — СПб.: Речь, 2009.
5. Personality Disorders by Mario Maj (Editor) February 2005.
6. Personality Disorders in Modern Life, 2nd Editionby Theodore Millon, Carrie M. Millon, Sarah Meagher, Seth Grossman, Rowena Ramnath August 2004.
7. Международная статистическая классификация болезней и проблем, связанных со здоровьем. 10 пересмотр, М.: Медицина, 2003.
8. Diagnostic and Statistical Manual of Mental Disorders: DSM-IV — 4-е издание. — Вашингтон: American Psychiatric Publishing, май 1994.


<table>
<tr><td>0303/B38</td><td>Անալիտիկ հոգեբանություն</td><td>3կրեդիտ</td></tr>
<tr><td>8 ժամ</td><td colspan="2">24/0/16</td></tr>
<tr><td>VIII կիսամյակ</td><td colspan="2">Եզրափակիչ գնահատման</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացի նպատակն է ուսանողներինհաղորդելամբողջականգիտելիքներանալիտիկհոգեբանությանհիմնական անգաղափարներիմասին:</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.<br>Գիտելիք և իմացություն<br>▪ Անալիտիկ հոգեբանության հիմնադրույթներից,<br>Ունակ կլինի.<br>✓ (բուն մասնագիտական կարողություններ)</td></tr>
</table>

| |
|---|
| ▪ Կիրառելանալիտիկհոգեբանությաննհոգեթերապիայիտեխնիկաներըպրակտիկայում<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>▪ ստեղծագործաբար կիրառել ու զարգացնել անալիտիկ հոգեբանության գիտելիքները |
| *Համառոտ բովանդակությունը*<br>Հոգեկան իրականության հասկացությունը անալիտիկ հոգեբանության մեջ: <<Լիբիդո>> հասկացությունը անալիտիկ հոգեբանության մեջ: Հոգեվերլուծությաննանալիտիկհոգեբանությանընդհանուրգծերը:Արքետիպեր: Նևրոզների գենեզիսը: Անալիտիկ հոգեթերապիայի սկզբունքներն ու փուլերը: Անալիտիկհոգեբանությանտեխնիկաները: Երազներիմեկնաբանությունըևվերլուծությունը: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները.*<br>• Դասերին մասնակցության համար առավելագույնը 2 միավոր:<br>• Երկու ընթացիկ 2 քննություն՝ գրավոր: Յուրաքանչյուրից առավելագույնը 4 միավոր:<br>• Եզրափակիչ բանավոր քննություն՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց՝ 4, 3, 3 բաշխմամբ: (Միավորներիքայլը 0.5 է): |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. К. Г. Юнг, ,,Об архетипах коллективного бессознательного”<br>2. К. Г. Юнг, ,,Подход к бессознательному”<br>3. К. Г. Юнг, ,,Нераскрытая самость”<br>4. К. Г. Юнг, ,,Отношения между эго и бессознательным”<br>5. К. Г. Юнг, ,,Человек и его символы”<br>6. К. Г. Юнг, ,,Алхимия”<br>7. К. Г. Юнг, ,,Тавистовские лекции” |

| | | |
|---|---|---|
| 0303/B39 | Հոգեգենետիկայի հիմունքներ | 3 կրեդիտ |
| 6 ժամ | 24/0 | |
| VIII կիսամյակ | Առանց եզրափակիչ գնահատման | |
| Դասընթացինպատակնէ ծանոթացնելուսանողներինվարքիգենետիկայի, հոգեկաննվարքայինշեղումներիժառանգականհիմքերի, ինչպեսնաևարտաքինմիջավայրինշանակությանհետ՝ հիմնվելովհոգեգենետիկայիերկվո րյակայինմեթոդիվրա: | | |
| Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.<br>*Գիտելիք և իմացություն*<br>▪ անհատական տարբերությունների ձևավորման ընթացքում ժառանգականության և միջավայրի դերի մասին,<br>▪ հոգեգրամի կառուցման սկզբունքը ինչպես առողջ, այնպես էլ հոգեկան խանգա-րումներով անհատների համար:<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>▪ օգտագործել ստացված գիտելիքները դիֆերենցիալ հոգեբանության մեջ,<br>▪ կազմակերպել ինքնուրույն հետազոտություն, առանձնացնելով ժառանգական ու ձեռքբերովի հատկությունները և նրանց հիմքում ընկած միջավայրի դերը,<br>*(ընդհանրական կարողություններ)*<br>▪ կիրառել գիտելիքները հետագա գիտական հետազոտություններում, անձի զարգացման և կլինիկական հոգեբանության բնագավառներում: | | |
| *Համառոտ բովանդակությունը*<br>Գենետիկական հոգեբանությունը որպես սահմանային/դիֆերենցիալ/ գիտություն հոգե-բանության և գենետիկայի միջև: Վարքիգենետիկա՝ Ա.Ֆոնեմ, Կ.Վոլֆ: Մարդը որպեսգե-նետիկայի և հոգեբանության օբյեկտ: Գենետիկական հոգեբանության մեթոդները: Գենո-տիպ – միջավայր փոխհարաբերությունների տատանման կոգնիտիվ ֆունկցիաները: խառնվածքի գենետիկական և միջավայրի դետերմինանտները: Դետերմինանտները կրտսեր տարիքի երեխաների մոտ: Գենոտինգտոնի խորեա հիվանդության ախտանիշները: Ֆենիլկետոնուրիա: Մտավոր ընդունակություններ: | | |

| |
|---|
| *Գնահատման մեթոդները և չափանիշները.*<br>▪ 2 ընթացիկ գրավոր քննություն, յուրաքանչյուրը 9 միավոր առավելագույն արժեքով: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. Александров А.А. Психогенетика , Питер, 2007<br>2. Равич – Щербо И.В., Марютина Т.М. Психогенетика. М.1999<br>3. Бочков Н.П. «Гены и судьбы».М., 1989<br>4. Инге – Вечтомов, «Генетика с основами селекции», М., 1989<br>5. Говалло В.И. «Почему мы не похожи друг на друга»,М., 1994<br>6. Пиаже «О генетической психологии». Л., 1971.<br>7. Атраментова Л.А., Филипцова О.В. введение в психогенетикуМ., 2004 |

| | | |
|---|---|---|
| 0105/B40 | Մաթեմատիկական մեթոդները հոգեբանության մեջ | 2 կրեդիտ |
| 2 ժամ | 24/8 | |
| IVկիսամյակ | Առանց եզրափակիչ գնահատման | |
| Դասընթացի հիմնական նպատակն է ուսանողներին ծանոթացնել հոգեբանական գիտության մեջ օգտագործվող մաթեմատիկական մեթոդներին, մասնավորապես հավանականության տեսության հիմունքներին: | | |
| Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.<br>*Գիտելիք և իմացություն*<br>▪ արդի հավանականությունների տեսության հիմնական մոդելների մասին:<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>▪ լուծել խնդիրներ, օգտագործելով դասական, երկրաչափական, պայմանական և լրիվ հավանականության բանաձևերը,<br>*(ընդհանրական կարողություններ)*<br>▪ կիրառել գիտելիքները հետագա գիտական հետազոտություններում: | | |

| |
|---|
| *Համառոտ բովանդակությունը*<br>**Տարրական պատահույթների տարածություն, գործողություններ պատահույթների հետ: Հավանականության աքսիոմատիկ սահմանում, հավանականության հատկություններ: Դասական հավանականություն: Համակցություններ: Երկրաչափական հավանականություն: Պայմանական հավանականություն, բազմապատկման թեորեմ: Լրիվ հավանականության բանաձև, Բայեսի բանաձևեր: Անկախ պատահույթների հաջորդականություն, Բեռնուլիի բանաձև:** |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները.*<br>▪ **2 ընթացիկ գրավոր քննություն, յուրաքանչյուրը 9 միավոր առավելագույն արժեքով:** |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. ՄեսրոպյանՆ., ՂազանչյանՏ., Հավանականություններիտեսությանխնդրագիրք, մաս I, Երևան, 1996:<br>2. Гмурман В. Е., Теория вероятностей и математическая статистика, Москва, Высшая школа, 1999.<br>3. Ермолаев О. Ю., Математическая статистика для психологов, Москва, 2004.<br>4. Калинина В. Н., Панкин В. Ф., Математическая статистика, Москва, Высшая школа, 1998.<br>5. Сидоренко Е., Методы математической обработки в психологии, Санкт-Петербург, 2001. |

| | | |
|---|---|---|
| **0303/B40** | **Քաղաքական գործընթացների հոգեբանություն** | **2 կրեդիտ** |
| **2 ժամ** | **24/8/0** | |
| **IV կիսամյակ** | **Առանց եզրափակիչ գնահատման** | |
| Դասընթացի նպատակն է ծանոթացնել բակալավրիատի ուսանողներին «քաղաքական հոգեբանության» առարկայի, խնդիրների և մեթոդաբանության հետ, բացահայտել դրա զարգացման մեխանիզմները և օրինաչափությունները: | | |
| **Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.** | | |

*Գիտելիք և իմացություն*

- Քաղաքական հոգեբանության գործածելիության մասին
- Քաղաքական հոգեբանության տեսությունների և զարգացման պատմության մասին
- Քաղաքական գիտակցության կառուցվածքի մասին
- Քաղաքական վարքի տեսակների մասին
- Առանձնացնել քաղաքական հոգեբանության ուսումնասիրման հիմնական մեթոդները և ձևերը

*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- Բացատրել քաղաքական մշակույթի ձևավորման առանձնահատկությունները
- Բացատրել քաղաքական գիտակցության կառուցվածքը և բովանդակությունը
- Տարբերակել քաղաքականության հոգեբանական կողմերը
- Տարբերակել քաղաքական վարքի առանձնահատկությունները

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- վերլուծել քաղաքական լիդերի հոգեբանության առկա խնդիրները և առաջարկել դրանց լուծման եղանակներ,
- կառուցել ժամանակակից քաղաքակա լիդերի հոգեբանական դիմանկար:

*Համառոտ բովանդակություն*

«Քաղաքական լիդերի հոգեբանությունը» -ը հանդիսանում է հատուկ մասնագիտական դասընթաց՝ նախատեսված հոգեբանության բաժնի բակալվրիատի երկրորդ կուրսի համար: Դասընթացը ներառում է տեսական գիտելիքների համակարգ, որը ձևավորվել է սոցիալական, ներազդման և կառավարման հոգեբանության, ինչպես նաև մի շարք հարակից գիտությունների, այն է՝ քաղաքագիտության և հասրակագիտության գիտահամակարգերի հատման արդյունքում: Դասընթացի բովանդակությունն է կազմում «քաղղաքական հոգեբանություն» առարկայի նկարագիրը, և դրա զարգացման պատմությունը, մեխանիզմները և օրինաչափությունները: Քաղաքականության հոգեբանական կողմի կարևորությունը երկար տարիներ է արդեն, որ անվիճելի է: Սակայն, եթե ամերիկյան և եվրոպական գիտահամակարգերում այս դիսցիպլինը իր կայուն տեղն է զբաղեցնում,ապա ՀՀ-յում այն սկսել է զարգանալ վերջին տաս տարիների ընթացքում:

| |
|---|
| Տվյալ դասընթացի ներառումը հոգեբանների պատրաստման մեջ ունի մի քանի նպատակ, որոնցից ամենակարևորներն են՝ հոգեբանի՝ քաղաքականության մեջ ներգրավվելու սկզբունքները և քաղաքական հոգեբանության ոլորտում ֆունդամենտալ գիտական հետազոտությունների կազմակերպման համար պատշաճ տեսական գիտելիքների տրամադրում:Դասընթացը ներառում է քաղաքական-հոգեբանական երևույթների բազմամակարդակ ուսումնասիրություն: Առաջին հերթին, ուսանողներին է ներկայացվում քաղաքական հոգեբանության պատմությունը և  տեսությունները, դրա բաժինները: Այնուհետև, անդրադարձ է կատարվում քաղաքական մշակույթին՝համեմատական վերլուծություն է կատարվում տարբեր ազգերի և պետությունների քաղաքական մշակույթի առանձնահատկություններին: Քաղաքական հոգեբանության հաջորդ կարևոր մասն է քաղաքակա իդեալների և քաղաքական գիտակցությունը:Առանձին ուշադրությամբ բացահայտվում է քաղաքական իշխանության էությունը և տեսակները: Հոգեբանների ահմար այս դասընթքացի շրջանակներում նաև կարևոր է ծանոթանալ քաղաքական վարք հասկացության հետ՝դրա տարրատեսակները և դրսևորումների՝ տարբեր քաղաքական իրադարձությունների ժամանակ: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները.*<br>▪ Գիտելիքի յուրացումը ստուգվում է ընթացիկ ստուգողական աշխատանքներով՝ բանավոր և գրավոր, յուրաքանչյուրը՝ 9միավոր<br>▪ Եզրափակիչ գնահատականը կազմվում է ստուգումների և ներկայության համար հատկացվող միավորների հիման վրա /9+9+2/ |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. Деркач А. Политическая психология, М: 2002<br>2. Дилигенский А. Социально-политическая психология, СпБ., 2005<br>3. Крысько В.Г. Социальная психология, М., изд-во ВЛАДОС-ПРЕСС, 2002.<br>4. Социальная психология, М.,2001.<br>5. Социальная психология, Хрестоматия.-М.,1999.<br>6. Социальная психология, М.,2002.Ольшанский С. Основы политической психологии, М.:2003<br>7. Шестопал Е.Б. Политическая психология. М: 2002 |

| | | |
|---|---|---|
| 0303/B41 | Սպորտի և առողջ ապրելակերպի հոգեբանություն | 2 կրեդիտ |
| 2 ժամ | 16/0/0/8 | |
| VI կիսամյակ | Առանց եզրափակիչ գնահատման | |
| Դասընթացի նպատակն է ձևավորել գիտելիքներ սպորտային գործունեության առանձնահատկու-թյունների, հատուկ ընդունակությունների զարգացման, առողջության հոգեբանական հիմքերի, մար-դու հոգեկան առողջության պաշարների, առողջ կենսակերպ վարելու, ինչպես նաև օրգանիզմի ռե-զերվային (պահուստային) հնարավորությունների բացահայտման վերաբերյալ: | | |
| Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.<br>*Գիտելիք և իմացություն*<br>▪ մարդու առողջության և աշխատունակության վրա սպորտի և ֆիզիկական դաստիարակության ազդեցության մասին,<br>▪ հոգեկան առողջության հատկանիշների մասին,<br>▪ սպորտի և առողջ ապրելակերպի հոգեբանության օրինաչափությունների մասին:<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>▪ կիրառել մարդու ֆիզիկական և հոգեկան ուժերի կատարելագործման միջոցները,<br>▪ ախտորոշել և կարգավորել մարզիկների հոգեկան վիճակները,<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>▪ լուծել առողջ կենսակերպ վարելու հետ կապված խնդիրները,<br>▪ կիրառել մարզիկների և ոչ մարզիկների օրգանիզմի գործառական վիճակը բացահայտող հոգեախտորոշիչ մեթոդիկաներ: | | |
| *Համառոտ բովանդակությունը*<br>Ֆիզիկական դաստիարակության և սպորտի հոգեբանության առարկան և խնդիրները: Սպոտի հոգեբանության հետազոտական մեթոդները: Ֆիզիկական դաստիարակության և սպորտի | | |

**հոգեբանության կապը այլ գիտությունների հետ: Առողջության սահմանումը և հոգեկան առողջության հատկանիշները: Առողջության վրա ազդող ռիսկային գործոնները: Ֆիզիկական դաստիարակության և սպորտի հոգեբանության փոխկապվածությունը: Հոգեբանական պատրաստությունը սպորտում: Մարզական գործունեության հոգեբանական բնութագիրը: Սպորտային մրցման հոգեբանական առանձնահատկությունները: Սպորտային թիմերի սոցիալական հոգեբանությունը: Հոգեկարգավորումը սպորտում:**

*Գնահատման մեթոդները և չափանիշները.*

- **2 ընթացիկ ստուգում, մեկը՝ գրավոր աշխատանք, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացում, յուրաքանչյուրը՝ 9 միավոր առավելագույն արժեքով: Յուրաքանչյուր ստուգում ներառում է 3 հարց՝ համապատասխանաբար 3,3,3 միավոր: Միավորների քայլը 0.5 է:**

*Հիմնական գրականության ցանկը*


14. ԱվանեսյանՀ. Մ. Սպորտիկիրառականհոգեբանությանմեթոդները./ Ուսումնականձեռնարկ: Երեւան, 2000. - 124 էջ:
15. ՀովհաննիսյանՍ. Վ. “Մարդուհոգեշարժողականընդունակություններ” դասընթացիուսումնականծրագիր: (Մեթոդականուղեցույց). – Եր.: ԵՊՀհրատ., 2008. – 35 էջ:
16. Սպորտի հոգեբանություն / Հ.գ.դ. Պ. Ա. Ռուդիկի ընդհանուր խմբագրությամբ. – Եր.: «Հայաստան» հրատ., 1976. – 184 էջ:
17. Кретти Брайент Дж. Психология в современном спорте. / Пер. с англ. Ханина Ю. Л. – М., “ФиС”, 1978. – 224 с.
18. Марищук В. Л. Психодиагностика в спорте: учеб. пособие для вузов / В. Л. Марищук, Ю. М. Блудов, Л. К. Серова. – М.: Просве¬щение, 2005. – 349 с.
19. Психологические вопросы регуляции деятельности. // Под ред. Д. А. Ошанина и О. А. Конопкина. М., “Педагогика”, 1973. – 208 с.
20. Դասախոսությունների տեքստեր՝ էլեկտրոնային կրիչով


| **0303/B41** | **Սոցիալական ճանաչողության հոգեբանություն** | **2 կրեդիտ** |
|---|---|---|
| 2 ժամ | 16/8/0 | |
| VI կիսամյակ | **Առանց եզրափակիչ գնահատման** | |
| Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել լիարժեք մասնագիտական պատկերացումներ սոցիալականճանաչողության՝ սոցիալականաշխարհիընկալման, գիտակցությանմեջնրապատկերիստեղծման, վերլուծությանևմեկնաբանությանուղիներիմասին, ինչպեսնաևսոցիալականտեղեկատվությանստեղծմանգործընթացի, | | |

սոցիալականսխեմաներիևսոցիալականընկալումներիմասին:

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

*Գիտելիք և իմացություն*

- Սոցիալական ճանաչողության հոգեբանությանն առնչվող խնդիրների համակողմանի իմացություն,
- Սոցիալական աշխարհի տարրերի, պերցեպտիվ գործընթացների, ատրիբուցիայի գործընթացի և նրա հնարավոր սխալների ամբողջական իմացություն:

*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- Բացատրել սոցիալական երևույթների, հարաբերությունների, փաստերի ամբողջականությունը գիտական ճանաչողության ներքո,
- բացատրել սոցիալական տեղեկատվության ստեղծման գործընթացների օրինաչափությունները:
- գիտակցել այն իրականությունը, որի մասն է կազմում ուսանողը, իմաստավորել իր և արտաքին աշխարհի կապերը

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- վերլուծել առկա խնդիրները և առաջարկել դրանց լուծման եղանակներ,
- կատարել հետազոտական աշխատանք սոցիալական հոգեբանության, մասնավորապես սոցիալական ճանաչողության մոտեցումների շրջանակում:

*Համառոտ բովանդակությունը*

Սոցիալական ճանաչողությունը փիլիսոփայության, սոցիոլոգիայի և հոգեբանության տեսությունների ներքո:Սոցիալական ընկալում և սոցիալական ճանաչողություն: Ատրիբուցիոն գործընթացներ,<անցման> ռազմավարություն, ատրիբուցիայի տեսություններ, ատրիբուցիայի սխալներ: Սոցիալական տեղեկատվության ստեղծման գործընթաց: Սոցիալական երևույթների վերլուծության գործիքներ, սոցիալական սխեմաներ, ընկալումներ և պատկերացումներ: Նախապաշարմունք և խտրականություն: Սոցիալական ինստիտուտներ: Սոցիալական անկայունություն, սոց. Ճանաչողություն և փոփոխություն:

*Գնահատման մեթոդները և չափանիշները.*

- 2 ընթացիկ ստուգում՝բանավորկգրավոր, յուրաքանչյուրը՝ 9 միավոր առավելագույն

| |
|---|
| արժեքով:<br>▪ Յուրաքանչյուրստուգումներառումէառավելագույնը 3 հարց: Միավորների քայլը 0.5 է): |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>9. Андреева Г.М.: Психология социального познания.М., 2004.<br>10. Агеев В.С., Андреева Г.М.: Специфика подхода к исследованию перцептивных процессов в социальной психологии// Межличностное восприятие в группе. М.1990.<br>11. Майерс Д.: Социальная психология. СПб, 2002.<br>12. Социальная Психология: 7-ое издание, под.ред. С.Московичи,Питер, 2007.<br>13. Abrams D., Hogg M.(eds.). Social Identity and Social Cognition. Oxford, 1999.<br>14. Attribution: Perceiving the Causes of Behavior (eds.). E.Jones, D.Kanouse, H.Kelley,R.Nisbett, S.Valins, B.Weiner. N.Y., 1972<br>15. Donald C.Pennigton: Social cognition, Routledge Modular Psychology, London and Philadelphia, 2000 |

| **0303/B42** | **Միջմշակութային հոգեբանություն** | **2 կրեդիտ** |
|---|---|---|
| 2 ժամ | 24/0/0/8 | |
| VII կիսամյակ | **Առանց եզրափակիչ գնահատման** | |
| Դասընթացի նպատակն է ուսանողներինծանոթացնել՝մշակույթիևանհատիվարքիկապնուսումնասիրողտարբերհոգեբանականհայեցակարգերի դրույթներին, միջմշակութայինհետազոտություններիմեթոդաբանականպարադիգմային, միջմշա-կութայինհաղորդակցմանևակուլտուրացիայիհոգեբանականուսցիոմշակութայինտեսանկյուններին: | | |
| Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.<br>*Գիտելիք և իմացություն*<br>▪ մշակույթի և անհատի վարքի միջև կապը մեկնաբանող հիմնական հայեցակարգերը,<br>▪ մշակույթի վերլուծության հիմնական հոգեբանական չափումները,<br>▪ ակկուլտուրացիայի և միջմշակութային հաղորդակցման հոգեբանական տեսանկյունները<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>▪ կատարել հոգեբանական վերլուծություններ՝ մշակութայնորեն պայմանավորված տարբերությունների շուրջ,<br>▪ կազմակերպել և անցկացնել միջմշակութային ուսումնասիրություններ: | | |

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- վերլուծել առկա խնդիրները՝ միջմշակութային մոտեցման շրջանակներում,
- առաջարկել միջմշակութային ադապտացիայի ընթացքում ծագող խնդիրների հաղթահարման եղանակներ:

*Համառոտ բովանդակությունը*

Մշակույթըորպեսմիջմշակութայինհոգեբանությանուսումնասիրմանառարկա: Միջմշակութային հետազոտությունների մեթոդաբանական պարադիգման: Emic- և Etic-մոտեցումների տարբերակիչ առանձնահատկությունները: Ջ.Ֆրեզերի, Բ. Մալինովսկու մշակութա-անտրոպոլոգիական հայացքները: «Մշակույթ և անձ» դպրոցի հիմնական դրույթները (Ֆ.Բոաս, Ռ.Բենեդիկտ, Մ. Միդ): Մշակույթներիվերլուծությանհոգեբանական չափումներ: Հասկացություն «մշակութային սինդրոմի» մասին (Գ.Տրիանդիս,Գ.Հոֆսթեդ): Բարձրկոնտեքստային և ցածրկոնտեքստային մշակույթներ (Է. Հոլլ): Արևելյան մշակույթը և հոգեբանությունը: Արևմտյան մշակույթը և հոգեբանությունը: Անձի և մշակույթի հարաբերակցության խնդիրը հոգեբանական տարբեր հայեցակարգերում: Հոգեախտաբանություն և մշակույթ: Մշակույթ եվ սոցիալական վարք: Մշակույթ և դաստիարակություն, կրթություն: Գենդերային վարքի միջմշակութային տեսանկյունները: Միջմշակութային հաղորդակցման կառուցվածքը և տեսակները: Հասկացություն մշակութային նույնականության մասին: Ակկուլտուրացիա և միջմշակութային ադապտացիա: Հասկացություն «միջմշակութային-կումունիկատիվ կոմպետենտության» մասին: «Միջմշակութային սենսիտիվության» զարգացման մոդելը:

*Գնահատման մեթոդները և չափանիշները*

Նախատեսված 2 ընթացիկստուգումներիցյուրաքանչյուրը գնահատվումէ 9 միավորառավելագույնարժեքով: Որպեսկանոն, յուրաքանչյուրստուգումներառումէառավելագույնը 3 հարց, յուրաքանչյուրը՝ 3 միավոր (միավորների քայլը 0.5 է):

Ստուգմանձևերնեն՝

- 1-ինստուգում. Բանավորկարճհարցում:
- 2-րդստուգում. Փոքրածավալ գրավոր /ստուգողական աշխատանք:

*Հիմնական գրականության ցանկը*


1. Берри Дж., Пуртинга А., Сигалл М., Дасен П. Кросс-культурная психология. Исследования и применение. Харьков: Гуманитарный Центр 2007.
2. Гуревич П.С. Культурология. Москва 2002.
3. Лебедева Н.М. Введение в этническую и кросс-культурную психологию. Москва 1999.
4. Мацумото Д. Психология и культура. Санкт-Петербург 2002.
5. Малиновский Б. Магия, наука и релегия. “Рефл-Бук” 1998.

6. Мид М. Культура и мир детства. Москва 1983.
7. Садохин А.П. Межкультурная коммуникация: Учебное пособие. М.:2009.
8. Триандис Г.К. Культура и социальное поведение. М.: Форум, 2007
9. Фрезер Дж. Золотая ветвь. Москва 1983.

| *0303/B29* | **Այցելուակենտրոն թերապիա** | **4 կրեդիտ** |
|---|---|---|
| 4 ժամ | *24/0/24* | |
| VI կիսամյակ | **Եզրափակիչ գնահատման** | |

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին այցելույակենտրոն հոգեթերապիայի հիմնադրույթներին և աշխատանքի հիմնական սկզբունքներին:

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա այցելույակենտրոն հոգեթերապիայի հիմնադիր՝ Կ. Ռոջերսի կենսագրությունը և հայացքները, այցելույակենտրոն հոգեթերապիայի կիրառման հնարավորությունները:
2. կկարողանա վերլուծել այցելույակենտրոն հոգեթերապիան՝ որպես մարդկանց հետ աշխատանքի հիմնարար ուղղություններից մեկը:

*Համառոտ բովանդակությունը*՝

Կ. Ռոջերսի հայացքները. այցելույակենտրոն հոգեթերապիայի զարգացումը, անձի մասին տեսությունը: Այցելույակենտրոն հոգեթերապևտի աշխատանքային դժվարությունները: Այցելույակենտրոն հոգեթերապիայի գործընթացը. հուզական լիցքաթափում, ինսայթ, այցելու-հոգեթերապևտ հարաբերություններ: Այցելույակենտրոն հոգեթերապիայի տեսակները. մանկական, խմբային և այլն:

*Գնահատման մեթոդները և չափանիշները*

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները. Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4

միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը բաղկացած է երկու մասից: Առաջին մասը պարունակում է 4 հարց՝ 2 միավոր առավելագույն արժեքով, յուրաքանչյուր հարցը՝ համապատասխանաբար 0.5 միավոր: Հարցատոմսի երկրորդ մասը պարունակում է թեստային 20 հարց՝ 2 միավոր առավելագույն արժեքով:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց՝ համապատասխանաբար 4+3+3 արժեքականությամբ: Միավորների քայլը 0,5 է:

*Հիմնական գրականության ցանկը*

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ավանեսյան Հ.Մ. | Փորձարարական հոգեբանություն | Էդիթ Պրինտ | Երևան | 2010 |
| Дружинин В.Н.. | Экспериментальная психология | СПБ, Питер | Москва | 2011 |
| Готтсданкер Р. | Основы психологического эксперимента. | Академия | Москва | 2005 |
| Никандров В.В | Экспериментальная психология | СПБ.:Речь | Москва | 2007 |
| Корнилова Т.В. | Экспериментальная психология. Теория и методы. | Аспект Пресс | Москва | 2005 |

# *ԱՅԼ ԿՐԹԱԿԱՆ ՄՈԴՈՒԼՆԵՐ*

| | | |
|---|---|---|
| *0303/B01* | **Կուրսային աշխատանք-1** | **2 կրեդիտ** |
| 0 ժամ | *60/ինքնուրույն/* | |
| IV կիսամյակ | **Հանրագումարային քննություն** | |

| | | |
|---|---|---|
| *0303/B02* | **Կուրսային աշխատանք -2** | **2 կրեդիտ** |
| 0 ժամ | *60/ինքնուրույն/* | |
| VI կիսամյակ | **Հանրագումարային քննություն** | |

| | | |
|---|---|---|
| *0303/B03* | **Արտադրական պրակտիկա** | **4 կրեդիտ** |
| 0 ժամ | *120/ինքնուրույն/* | |
| VI կիսամյակ | Ստուգարք | |
| Նպատակը. Պրակտիկայի նպատակն է ուսանողներին ծանոթացնել էքսպերիմենտալ հետազոտության կատարման հմտություններին, ծանոթացնել էքսպերիմենտալ աշխատանքի իրականացման սկզբունքներին և դրանց ներկայացվող պահանջներին: | | |
| Պրակտիկայի արդյունքները. Դասընթացի հաջող ավարտին ուսանողը. 1.ձեռք կբերի էքսպերիմենտալ հետազոտություն իրականացնելու հմտություններ 2.կիմանա էքսպերիմենտալ աշխատանքի սկզբունքներն ու պահանջները 3.կկարողանա ընդհանրացնել և վերլուծել հետազոտության արդյունքները | | |

| | | |
|---|---|---|
| *0303/B06* | **Արտադրական/մանկավարժական/ պրակտիկա** | **4 կրեդիտ** |
| 0 ժամ | *120/ինքնուրույն/* | |
| VIII կիսամյակ | Ստուգարք | |

Նպատակը.
Պրակտիկայի նպատակն է ձեռք բերել ժամանակակից պահանջներին համապատասխան գործնական, մանկավարժական հմտություններ, ուսանողների մոտ ձևավորել հոգեբանության դասավանդման հմտություններ, դասընթացի կազմակերպման ունակություն և դասախոսքությունների կազմակերպումն:

Պրակտիկայի արդյունքները.
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
1.կիմանա դասավանդման մեթոդիկայի սկզբունքներն ու առանձնահատկությունները
2.կհասկանա կրթության և դաստիարակության հոգեբանական գործառույթների դերը ուսուցման գործընթացում
3.կկարողանա գործնականում կիրառել ձեռք բերած մանկավարժական հմտությունները:

| | | |
|---|---|---|
| *0303/B04* | **Ամփոփիչ ավարտական քննություն** | **4 կրեդիտ** |
| 0 ժամ | *120/ինքնուրույն/* | |
| VIII կիսամյակ | Հանրագումարային քննություն | |

| | | |
|---|---|---|
| *0303/B05* | **Ավարտական աշխատանք** | **12 կրեդիտ** |
| 0 ժամ | *360/ինքնուրույն/* | |
| VIII կիսամյակ | Հանրագումարային քննություն | |